

“Droschak”  
REVUE MENSUELLE  
ORGANE  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 5, NOVEMBRE  
1925  
PARIS (FRANCE)

## “ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ԻՃԻԱՆԸ


Փարիզի արևարձան Շավիրում, Հոկտ. 18-ին, երկարատև ու տանջալից հիւանդութիւնից յետոյ, վախճանեց ընկ. Յովսէփ Արղութեանը — Խանասորի Իշխանը — հայ յեղափոխութեան ուսնակիրաների փայլուն փաղանգի վերջին մնացորդներից մէկը:

Ինչպէս Դաշնակցութեան բոլոր հիմնադիրների, Իշխանի կեանքն էլ — տանջալից ու փոթորկայոյց — եղաւ մարմնացումը հայկական ազատագրութեան: Արժէ, որ մեր նոր սերունդներն իմանան ու ոգևորւեն այդ կեանքով:

Յովսէփ Արղութեանը ծնւել էր 1863 թւին Լոռի գաւառի Սանահին գիւղում: Աւարտել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը:

Վառվում, զազափարական հովերով տարւած՝ աշակերտական նստարանը թողնելուց յետոյ նա անմիջապէս նւիրում է հանրային-կրթական գործունէութեան: Յայրազարբ պաշտօնավարում է Զալալ-Օղլու Սուրամի, Թիֆլիսի Մէլյոսանի Ս. Գէորգ եկեղեցու ծխական դպրոցներում:

Ութսունական թւականների վերջը զազափարական խմորումների շրջան էր կովկասահայ ազգային կեանքում: Ռուս-թրքական պատերազմի պատճառած ցնցումը, Բուլղարիայի ազատութիւնը, Բելրինի դաշնագրի 61-րդ յօդւածը, Ռաֆֆու յեղա-



ԻՇԽԱՆ ՅՈՎՍԷՓ ԱՐԳՈՒԹԵԱՆ

փոխական վէպերը և Գամառ-Քաթիպայի բմբուտացնող երգերը օղը յազեցրել էին պայթուցիկ նրթերով: Արղէն գործում էր Արմենական կուսակցութիւնը, և 1888-ից սկսած Մարտէլյում լոյս էր տեսնում Մկրտիչ Փորթուգալեանի «Արմէնիան»: 1888-ին հրատարակ էր եկել Հնչակեանութիւնը, որ քարոզում էր յեղափոխական կուր ընդդէմ համրիտուն բռնակալութեան: Այս վերջինը օրէցօր դառնում էր վայրագ և յենւած քրդական մոլեռանդ զանգւածների վրայ. Զարդըր էր կազմակերպում գաւառներում, ուր հայ ազգաբնակչութիւնը զրւել էր օրէնքից դուրս:

Թրքահայաստանից հասնող լուրերը կենդանի արձագանգ էին գտնում կովկասում: Երիտասարդութիւնը յուզում էր թրքական վայրագութիւններից և միջոցներ էր որոնում հայ ժողովրդի ազատագրութեան: Ստեղծւում էին խմբակներ, գլխաւորապէս սուսանողական և մտաւորական շրջաններում, որոնք նւիրում էին իրենց թրքահայ դատին: Այդպիսիներից էր և «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութիւնը, որ յետագային հիմքը դարձաւ Հ. Յ. Դաշնակցութեան:

Այդ խմբերը զբաղւում էին յեղափոխական նարժումներով և, մասնաւորապէս, բալկանեան ազգերի մշած ազատագրական պայքարների ուսումնասիրութեամբ, քննում էին թրքահայոց ազատութեան հնարաւորութիւնները, այդ նպատակով հետազօտում էին թրքահայերի կեանքը և մշակում յեղափոխական գործունէութեան ծրագրիներ: Շատերը չբաւական-

Նալովզրական ուսումնասիրութիւններով՝ անձամբ զնում էին թրքահայաստանի և տեղն ու տեղը ծանօթանում դրութեանն: Դրանցից մէկն էր և երիտասարդ Արղուժեանը: 1889-ի ամառը՝ նա Արշակ Բարխուդարեանի և Լեւոն Սարգսեանի հետ՝ «ուխտի» է զնում Սուրբ Կարապետ՝ Վասպուրականի վրայով: Ծանապարհին մտից ծանօթանում է թրքական վարչութեանը, Հայերի կրօն ներդրութիւններին ու թրքահայ զաւառական մտաւորականութեան ասպրանջներին ու տենչերին: Ահագին սպաւորութիւն է թողում նրա վրա այս ճամբորդութիւնը: Հէնց իր աչքերով տեսնում է նա այն իրաւագուրկ, անպաշտպան, թշուա կացութիւնը, որի մէջ ապրում էր թրքահայ գիւղացիութիւնը:

Վերադառնալով կովկաս և ներկայացնելով ընկերներին մանրամասն զեկուցում իր արած դիտողութիւններին ու հաւաքած տեղեկութիւններին մասին՝ նա մեծ ոգեւորութիւն է առել բերում: Եւ 1890-ին Սիմոն Զաւարեանի ու Յովհ. Իւսուֆեանի հետ անցնում է Տրապիզոն ուսուցչական պնշտանով այլևս ո՛չ թէ ուսումնասիրելու, այլ գործելու նպատակով: Այստեղ այս երեք խանգավառ երիտասարդները շուտով իրենց շուրջն են համարելու: Եւ երիտասարդութիւնը և հիմքը զնում՝ գաղտնի յեղափոխական կազմակերպութեան՝ նպատակ գծելով համիդեան լծի խորտակումն ու հայ ժողովրդի ազատութիւնը: Սակայն, սկսած աշխատանքը շուտով կտրուում է, թուրք կառավարութիւնը ամբաստանում է նրանց, որպէս յեղափոխականներ, բանտարկում ու դատի է տալիս: Դատարանի որոշումով Զաւարեանն ու Արղուժեանը քշում են կովկաս Առաջինը՝ տարւում է կալանաւորւած վիճակում, իսկ Արղուժեանը սպաստ, բայց հսկողութեան տակ: կովկասեան իշխանութիւնը երկուսին էլ աքսորում է Քիշինիէի կողմերը՝ Զաւարեանին մի տարով, իսկ Արղուժեանին 6 ամսով:

Աքսորի ժամանակը լրացնելուց յետոյ, 1892-ին, Արղուժեանը զնում է Թաւրիզ՝ ուսուցչական պաշտօնով, Յովհան Դաւիթեանի տեսչութեան տակ: Հ. Յ. Դաշնակցութիւնն արգէն կազմւած էր, և նրա ղեկավարները մեծ կարեւորութիւն էին ընծայում Պարսկաստանին, որը, իբրև, թիրաքիւս լին սահմանակից եւ թոյլ պաշտպանւած վայր՝ անհզին նշանակութիւն էր ստանալու յեղափոխական պայքարների համար: Դաշնակցութիւնը աշխատում էր մեծ թւով ձեռնհաս ուժեր կենտրոնացնել Թաւրիզում ու Սալմաստի շրջանում: Յովհանից եւ Արղուժեանից զատ Թաւրիզում էին, իբրև ուսուցիչ. Նիկոլ. Դուժանը, Սարգիս Օհանջանեանը, Սր. Սաթենիկ Մատինեանը: Յետոյ եկաւ և զինագործ Թորոսը—Գալուստ Աղոյեանը՝ հիմնելու համար այն հոշակաւոր զինագործարանը, որ սպառազույց այնքան խոշոր դեր պիտի կատարէր:

Արղուժեանը, որ ապրում էր Երևանը վարժապետ անունով, Թաւրիզում մնաց երկու տարի: Եւ ու գեոի, ոգեւորւած աշխատանքի շրջան էր այդ Պատրաստում էին միջոցներ սկսելու համար զէնքի փոխադրութեան և հայդուկացին արշաւանքների փառաւոր շարանը: Դաշնակցութիւնը համախմբում էր իր ուժերը: 1894-ին Արղուժեանը զինատար խմբի հետ անցաւ Վան, որտեղ գտնւում էին Պետոն, Վարդանը և ուրիշներ և մնաց այնտեղ մինչև 1898-ի գարունը, երբ վերադարձաւ Թաւրիզ յատկապէս զինագործարանը ուժեղացնելու եւ մի շարք կազմակերպական հարցեր լուծելու համար: կովկասից Թաւրիզ էին հասել և Կարոն (Արխատակէս Զօրեանը), Միհրանը և մի քանի ուրիշ յեղափոխականներ: Սալմաստը գորացնելու նպատակով այնտեղ էր փոխադրել Դուժանը, որպէս ուսուցիչ: Իր գործը վերջացնելուց յետոյ Արղուժեանը մի անգամ եւս, զինւած խմբի հետ անցաւ Վան:

1895-ի հայկական ջարդերը և եւրոպական միջամտութեան հետ կապւած յոյսերի վիժումը ճնշիչ սպաւորութիւն թողին հայ հանրային կարծիքի վրա: Մի պահ ծայր տւեց յուսալքումն ու ինքնաքննադատութիւնը, որի ծանր հարւածն եւրոպացի չղիմացաւ ու փշուր-փշուր եղաւ Հնչակեան կուսակցութիւնը: Մասամբ այդ համատարած վնասութեան ղէմ պալքարելու ու հասարակութեան տրամադրութիւնը բարձրացնելու, մասամբ էլ կոտորածներին մասնակցող քրդական ցեղերին պատժելու նպատակով 1897-ի ամառը Հ. Յ. Դաշնակցութիւնը յաղողացրեց հայդուկային մի արշաւանք ղեկավար Մարդիկ աշիրէթի պետ Շարաֆ բէկի ղէմ: Ծակասամարտը տեղի ունեցաւ Խանասորի դաշտում, որի անունով և արշաւանքը կոչուեց Խանասորի արշաւանք, որի լի է նախապատրաստութեան և թէ ղեկավարութեան մէջ Արղուժեանը կատարեց առաջնակարգ դեր: Նաև Վարդանը զխաւոր հրամանատարներն էին այդ խիղախ ձեռնարկի, որի զովքը անցաւ հայ և քերդ. երգիչներին բերանը:

Այնչ Վարդանը, ձախից Իշխանը,  
Գրաննի Հաղթակ, տարածնի ստրապի,  
Փա՛ռֆ Դաշնակցութեան..

Այստեղ մնք նպատակ շունչից անելու Խանասորի արշաւանքի նկարագրութիւնը: Նրա պատմական արժէքը ճակատամարտի մեծութեան կամ երկուստեք տրւած զոհերի մէջ չէ: Այդ արշաւանքը սթափեցնող ազդեցութիւն ունեցաւ նրանով, որ այն զորշ ու յուսահատական օրերին, երբ, կարծես, փակւել էին յոյսի բոլոր դռները, յանկարծ մի յանդուգն ձեռնարկ զգացնել տւեց ժողովրդին, թէ փրկութիւնը ո՛չ թէ Եւրոպայից պէտք է՝ սպասել, այլ սեփական ուժերից: Ինքնագործունէութեան, խօլական կուր հրաւէր էր այդ, որ հազար-հազար

ձեւերով արձագանք տւեց հայ ժողովրդի բոլոր խաւերում: Խնանասոր առաջին յաջող յեղափոխական արշաւանքն էր և, իբրև այդպիսին, անպայման մեծ ազդեցութիւն ունեցաւ մեր յեղափոխական շարժման մէջ: Եւ Արղութեանի անունը նախ և առաջ շարկապատ է այս շարժման հետ: Արղութեանի, ինչպէս և Վարդանի անունը ամենից առաջ զարթեցնում է Խնանասորի հերոսներութեան փառաւոր յիշողութիւնը:

Թուրք կառավարութեան պահանջի վրա պարտիկ իշխանութիւնները ձերբակալեցին ու բանտարկեցին արշաւանքից վերադարձող հայրուկներին մի մասին: Դրանց թւում էր և Արղութեանը, որ շղթալակապ, ոտները ֆալախկայի մէջ, ամենասարսափելի պայմաններում, երկու ամիս պահեց պարսկական բանտում: Ապա կայանաւորները փոխադրեցին Թաւրիզ և յանձնեցին ռուսական հիւպատոսին: Թաւրիզից նրանց տարին Երևան, յետոյ՝ Թիֆլիս, ուր Մէթէխի բանտում, Արղութեանը մնաց մօտ մէկ ու կէս տարի: Մէթէխում էր նա, երբ 1898-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան երկրորդ լինդհանուր ժողովը, որ, ի միջի այլից, զբաղեց նաեւ Խնանասորի արշաւանքի գնահատութեամբ:

Թիֆլիսից Արղութեանը վարչական կարգով աքսորւում է Հաշտարխան, որտեղից ուղարկում են Չօրնի Եար խուլ գիւղը: Այստեղից էլ Ստարով աքսորում են Հիւսիսային Ռուսաստան, — Վոլոգդա, ուր եւ մնում է՝ հետո հայ իրականութիւնից ու յեղափոխական կեանքից: 1899-ին ամուսնանում է Օր. Սաթեմիկ Մատինեանի հետ, որը նրա գաղափարակից ու սրտակից ընկերն էր եւ այդպիսին էլ մնաց մինչեւ նրա մահը:

1903-ի շնանը լրանում է աքսորի շրջանը, եւ Արղութեանը աեղափոխուում է Թիֆլիս, ուր պաշտօն է ստանում քաղաքային ինքնավարութեան մէջ՝ նշանակելով քաղաքային մտիխանութիւնի կառավարիչ: Ապա՝ պաշտօնով փոխադրուում է («Նաղեժգա») ընկերութեան մէջ: 1904-ին տեղի է ունենում մահափորձ փոխարքայ Գոլիցինի վրա, բազմաթիւ ուրիշների հետ ձերբակալուում է ու Արղութեանը, որ 6 ամիս բանտարկւած մնալուց յետոյ ազատ է արձակուում: ~

Ապրիլով Թիֆլիսում նա ամբողջապէս նետուում է հասարակական ու յեղափոխական կեանքի մէջ: Մասնաւորապէս պէտք է յիշել նրա գործունէութիւնը 1905-ին, հայ-թրքական ընդհարումների շրջանում, երբ մասնակցելով հանդերձ ինքնապաշտպանութեան արշաւանքներին, նա մեծ հռոնդ էր գործադրում երկու ժողովուրդների հաշտեցնելու եւ արիւնահեղութեան վերջ տալու համար: Հայ-թրքական հաշտարար յանձնախմբի անգամ էր եւ երկու դրկից ազգերի մերձեցման համողւած ջատագով:

1905 ի վերջին տեղափոխուում է Երևան իբրև «Նաղեժգա» ընկերութեան գործակալու: Այստեղ էլ նշանակուում է հայ-թրքական հաշտարար յանձնաժողովի անդամ եւ ջանք է թափում շրջանը խաղաղացնելու: Անմիջական մասնակցութիւն է ունենում Երևանի հասարակական կեանքին — հոգաբարձու թեմական դպրանոցի — եւ Դաշնակցութեան գործունէութեան: 1908-ի վերջերը, երբ սկսւում է ընդհանուր հալածանք 2. Յ. Դաշնակցութեան դէմ, նրան էլ են բանտարկում եւ փոխադրում Թիֆլիսի բանտը, այստեղից Ռոստով ու Նոփոչէրկասկ: 1911-ի սկզբին նրան, Գ. Խաժակին, Յ. Թումանեանին Ա. Ահարոնեանին, Ա. Իսահակեանին և մի քանի ուրիշ ընկերների բաց են թողնում զբաւականով, բայց երբ սրանցից մի քանիսը գաղտնի անցնում են արտասահման, նրան նորից բանտն են դնում և պահում մինչև դատարարութիւն, որից յետոյ շատերի հետ նա եւ արձակուում է անպայտ:

Վերադառնալով Կովկաս՝ Արղութեանը շարունակում է իր հանրային ու յեղափոխական գործունէութիւնը մինչևև համաշխարհային պատերազմը, երբ գտնում է մէկը կամուտարական շարժման նախաձեռնողներից, կազմակերպողներից ու ղեկավարներից՝ սկզբում իբրև Ազգային Բիւրօի կարգադրիչ Մարմնի անդամ, յետոյ՝ որպէս Թուրք գնդի կազմակերպող ու հրամանատար: 1915-ի երկրորդ կէսին նա անցաւ սլատերազմի դաշտ, մասնակցեց բազմաթիւ կռիւների, որոնց մէջ առանձնապէս պէտք է յիշել Ռեվանդուզի արիւնոտ ճակատամարտը, որին զոհ գնացին Քեռին և մի շարք խմբապետներ ու կամաւորներ:

Կամաւորական խմբերի կազմալուծումից յետոյ Արղութեանը նւիրւում է գաղթականական գործին, ապա, փետրարեան յեղափոխութիւնից յետոյ, տարուում է պետական գործունէութեամբ Մահմանադիր ժողովի ընտրութիւնների ժամանակ կառավարութիւնը նրան է վստահում կարսի բազմացող նահանգի ընտրութիւնների ղեկավարութիւնը, եւ նա պատուով է դուրս գալիս իր վրա դրւած պարտականութեան տակից:

Երբ ստեղծեցին Կովկասեան ինքը անկախ հանրապետութիւնները, Արղութեանը մնաց Թիֆլիսում եւ վարում էր Վրաստան Ազգային Խորհրդի նախագահի պաշտօնը: 1918-ին նա ընտրւեց Հայաստանի Խորհրդարանի անդամ, և իբրև պատգամաւորներից աւագագոյնը, սկզբի շրջանում, մինչև դիւանի կազմութիւնը նախագահեց նիստերին: Ապա նշանակւեց Թէհրանի դեսպան եւ հայ-ադրբէյջանեան խորհրդածոցով անդամ: Դրանից առաջ նա Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկւել էր Ղարաբաղ հայ-ադրբէյջան քաղխումը կանխելու նպատակով: Նրա բերած զեկուցումը բուսական խիզախ էր այն ժամանակաշ

մտայնութեան հետ համեմատելով. նա առաջարկում էր Ղարաբաղը բաժանել Հայաստանի և Ադրբեյջանի միջև:

Թէհրանում Արզուլթեան մնաց մինչև 1922 որից յետոյ անցաւ արտասահման, ուր ծանր հիւանդութիւնը, անխնայ տանջելուց յետոյ, վերջ տուց իր կեանքին — ողբարուժեամբ, արկածներով և և բուն գործունէութեամբ լեցուն մի կեանք:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՊԱԶՐԿՎՈՒԹԻՒՆԸ

և

### ԲՈՒՇԵՒԻԿԱՆ ԿԵՐՔԻՆ ԲԱՂԱՔԱՎԱԿՆՈՒԹԻՒՆԸ

Փորրիկ է այսօրուայ Հայաստանը. կրճատուած է շրտ կողմերէն Չկայ Տաճկահայաստանը, որ անմարդորեակ անուպատներու է վերածուած: Հիւսիսէն պոհուած են Փուգարաց լեռները Զաւարթի գաւառով, որ ընկած են Վրաց իշխանութեան ենթէ: Հիւսիսէն արեւելքէն իրաւած են Փանձակ, Գիւլիստան, Ջիվանջիր, Վարանդա, Շուշի ու Գիգակ՝ չին Արցախի գաւառները և Սևեհեց երկրի Զանգեզուրի իւշոր մէկ մասը, Շարուրի և Ծոփիշենու, որոք արուած են Ադրբեյջանի իշխանութեան: Էանուրց հիւսիսայինաց վեհագոյն՝ Հայոց աշխարհէն Արարատեան երկրի փոքրիկ նահանգն է այսօր մնացած Հայոց ձեռքը՝ կաշկանդուած լեռներու միջև: Ենան առապելական Արտաւազրին, զըճայուած է Մասիսի անդուողներուն մէջ: Հայաստանն ալ անխղճօրէն գամուած է Գեղարքունեաց լեռներուն և աւելի ու աւելի սմար կը գտուի ու կը զըճայուի շնորհիւ քորչեփեան քաղաքականութեան: Բայց շնայած որ կ'ամբողջուն իրենիս պատերը, զըճայուածի մէջը չի մեռելի լոյսի և ազատութեան տենը, և ձնման զուգահեռ աւելի ցայտուն կը դառնայ Հայոց երկիրներու միացման գազափորը, բանաէն ազատուելու և անկախութեան տենը: Բանասպին այդ վիճակին վերջը պիտի գայ, երբ իրագործուի Միացեալ Հայաստանը, բայց այդ ճարքի ինչոյրը չէ, որ կուզեմ՝ այսօր ջջափել, այլ այն իրականութիւնը, թէ ինչպէս փոքրիկ, բուն մը Հայաստանի մէջ Հողային անարդար բաշխումի չհասեանքով. Հայիրու վիճակը իրենց հարեներում ալ աւելի կը ծանրանայ:

Այսօր զկայ մէկը, որ պիզէ թէ Հայաստան երկիրը չէ յօշոտուած և բաւական է Հայ ժողովուրդի պէտքերուն Համար: Այդ չեն կրնար պնդել, քանի որ Հայիրու երկու երրորդը և զեռ աւելին Հայաստանէն դուրս են: Նոյն իսկ բուշեւիկ Ջիւրիկը, Ռիքոլը և անոց ստորադաս մանկավարժները զգայով Հայաստանի իրաւ ենզ լինելը՝ Հայիրուն սարբուտ անդ ցոյց տաին Գրքիչատանի կամ Սիւպերիայի մէջ, որով կողմնակի կերպով խոստովանեցան Հայոց երկրի ենզ լինելը, թէն այդ ենզուածքի բուն պատճառը իրենք են միայն: Մեղըը իրենցն է, որովհետեւ անոնք էին, որ Բրեսաւ-Լիտուանի ու Կարսի դաշնարդիով նուիրքին ամբողջ Տաճկահայաստանը, Կարսն ու Սուրմալուն Քուրքին: Իսկ ի՞նչէ ստոր Համար կուզեն չքմեղտակ. թէ հարկադրանքի տակ ըրած են

այդ զիջումները, տպա որդարանալու ոչ մէկ միջոց կայ: Քուտ Հայրենակ Սեղաբաղը, Փանձակը, Ղարաբաղը, Նաւիթիանն ու այլ գաւառները Վրաստանին և Ադրբեյջանին նուիրելու խնդրին մէջ, Հայաստան փոքրիկ երկրամասին մէջ այժմ ալ կը վարուի ներքին քաղաքականութիւն մը, որով Հայիրը չլիսի աճին ու բազմունան և ուզին-ուզեն հեռու պիտի փոխչին՝ դատապարտուելով իրնայ թափառակաւ, անհոյ և անհայրենիք վիճակի մէջ: Այս դառն իրականութիւն մըն է: Պէտք է՝ շրջիկ այն ուղիներէն, թէ քանարքեի մէջ ռասիօկայան շինելով, կամ մի ջրանցք անցնելով և երկու Հազար տեւիտարի բամբակի ցանքը աւելցնելով մեծ օգուտ կայ Հայիրուն: Երկրիկանի յայտարարած մի քանի հարիւր փութ շիրտի բոժոժը և 3000 փութ ծխախոտի արդիւնաբերութիւնը Հայաստանի մէջ՝ անհշան բան է Հայաստանի ժողովրդի կարիքներու հանդէպ: Այդ կարգի ձեւարկները չեն, որ չիմտուան միջոցներ պիտի համարեն ժողովրդի բարեկեցութեան Ատոնք օժանկաններ են, իսկ չիմտուանը Հողային խնդրի կարգադրութիւնն է: Հասկնալու համար խնդրի էութիւնը և բովանդակը համար վերաշինութեան անան տակ եղած արժուկների անկումը պէտք է առաջ բերել Համամասականութիւն: Այլապէս, ներկայ Հայաստանը կազմած է նախկին Երեսնեան նահանգի, բայի Սուրմալուի, Շարուրի և Ծոփիշենի գաւառներէն: Ատոնք փոխարէն աւելցած է Կարսի նահանգի Արարաթի գաւառակը, թիֆլիսի նահանգի Բարչուրի գաւառակը, Լոսի գաւառակը յետ 10 զիւրիւրով II գաւառակէն, Փանձակի նահանգի Ղազարի գաւառէն III գաւառակը ամբողջ և I, II և IVի գաւառակներէն մասեր. և Զանգեզուր գաւառի կէսէն աւելին: Այս այս կարկանդակներէն է կազմուած ներկայ Հայաստանը: Քանի որ Զանգեզուրը կը գտնուի բացարձիկ պայմաններու մէջ և Համարեա կարւած և Հայաստանէն, անոր մտին եղած թիւերն ու փաստները այսօր թողնելը. աւայժմ բաւականանալը համեմատականութիւնով հերկայ Հայաստանի (ի բացարձակ Զանգեզուր, Մեղրի գաւառները) մտին: Այդ պարագային ներկայ Հայաստանի տարածութեան, զիւրկելու ազգաբնակչութեան պատկերը, ըստ 1913 թուականի, կը լինի չհետեւեալը.

1913 թուականի, ըստ «Կովկասեան Տարեգրքի» 1913 թ.

Գաւառի Գաւառակ	Կարգ. համար	Կարգ. թիւ	Մար. մարդ. թիւ	Գրգ. թիւ	Ինկալչութիւն	Հայեր	Կալաններ	Մնացած մարդ
1. Ալեվ. գւ.՝	3386,70	64,3	161	217,910	193,101	8,496	16,313	
2. Աղբ գաւռ.՝	576,96	25	25	14,308	1,015	13,294	—	
3. Ն. Բոս. գւ.՝	4122,76	40,3	139	166,210	113,374	44,680	8,156	
4. Գրգ. գւ.՝	1890,76	23	92	44,414	19,294	24,153	967	
5. Մեւան գւ.՝	2724,30	73,2	215	199,577	78,776	103,435	17,366	
6. Կլմիճ. գւ.՝	3237,40	49,7	218	160,817	101,084	48,339	11,394	
7. Լոսի գւ.՝	2182,76	21	66	45,119	34,218	560	10,841	
8. Քոչ, Փոճ. մաս	100	30	10	3,000	3,000	—	—	
9. Ղազարգւռ.՝	1160,78	34	37	38,158	31,136	2,265	4,757	
10. » 4 գւ.՝	1000	?	13	11,000	10,000	1,000	—	
11. » 1 »	200	?	5	700	700	7	—	
12. » 2 »	300	?	18	14,827	14,827	—	—	
12 Գւ. գւ.՝	20822	44	990	926503	603655	256222	69794	

Ծանօթ. Ղազար 1,2,3, գաւառակներէ, Քոչալուի մի մասի բերք պեճ է համարել մտաւոր.



կար ընդամենը	33,8 մարդ. իսկ 1925 թ. յունւարի 1-ին ամբողջ Հայաստանի մէջ Զանգեզուրի հետ միասին. —		
թուրք, թաթար,	89,20%	89,20%	98,0%
հայ	782600	86,0%	
այլք	38,200	4,2%	0%
	910,000	100,0%	0%

Հանելով Զանգեզուր և Մեղրի գաւառներու ազգաբնակչութիւնը՝ մտա 80,000. որմէ թաթար 8,000, հայ 72,000. ինչորոշ աւարկայ Հայաստանի պատկերը կը լինի.

Թաթար 81,200

հայ 710,600

այլք 38,200 ընդամենը 830,000 հոգի. Որով 1925 յունւարին Հայաստանի մէջ մի քառակ. վերստի վրտ կապուէր 39,4 մարդ: Այս փաստական դրութիւնները պարզելէ յետոյ, փորձեց սխեմակ առ սխեմակ բացատրել դրութիւնը: Երբ տախսականներ Համեմատելու լինենք իրարու հետ, աւաջին սխեմակին մէջ կը գտնենք տարբերութիւններ գաւառներու թել և անուններու մէջ, բան մը, որ կարեւորութիւնէ, դուրէ և, քանի որ գաւառներու սահմաններու փոփոխումով ընդհանուր երկրի տարածութիւնը, գիւղերու թիւն ու ազգաբնակչութիւնը չի փոխուի:

Երկրորդ սխեմակէն կ'երեւայ, որ 1922 ու 1925ին Հայաստան (ստանց Զանգեզուրի) կար 936 գիւղ, 1920ին 855, իսկ 1913-ին 999 գիւղ: Գիւղերու թել հիմքը պիտի բռնել 1913-ի գումարը, քանի որ այդ թաւակին ժողովուրդը բնականոն կացութեան մէջ էր: 1913 թիւ հաշուով իւրաքանչիւր բնակութեան տեղի վրայ կուգար մտա 950 մարդը: Այդ՝ երբ կը Համեմատենք ներկայ բնակութեան վայրերը 1913-ի բնակութեան վայրերու հետ, կը տեսնենք, որ 1920-ին 144 գիւղ անմարդաբնակ էր, իսկ 1925-ին 63, Այս վերջինները գլխաւորապէս թաթարական լըւած գիւղեր են:

Քորհրդային վիճակագրութիւնէն կ'երեւայ որ այս 63 գիւղը տակաւին անմարդաբնակ է, որ բնի է, ըստ 1913 թել ժողովուրդական խտութեան, 950 + մարդ 63 գիւղ = 59,850 մարդու տեղ կայ Հայաստանի մէջ:

Որպէսզի այս փաստային դրութիւնը աւարկութիւն չվերցնէ, ենթադրենք, որ անմարդաբնակ մնացած 63 գիւղերը ընտրովի փոքրիկ և զէշ գիւղեր են և 50 0/0-ով զեղչեցն անոնց մէջ բնակելիք ազգաբնակչութեան թիւը, որով անվտանգութեան 63 պարագայ գիւղերու մէջ առնուազն 30,000 մարդու բաց տեղ կայ: Այս Հանգումները բուրջ ուշադրութեան առարկայ պիտի լինի զաղութիւնները և Հայաստանի վերաշինութեան ինչորով հետաքրքրաւոր մարդկանց ու հիմնարկութիւններուն: Մինչ գիւղատնտեսական զործու վարութիւնը Երզնկեանի բերնով կըսէ, թէ տեղ չկայ հող չկայ, անդին, իբ իսկ հաշուով 63 գիւղեր կը մնան դատարկ: Այդ գիւղերը, անշուշտ՝ ունին տունքը, որոնք եթէ քանդուած ալ լինեն, քարերը, պատերը կը մնան և կարող են նիթ ծառայել շէնքեր, որով ոչ թէ նոր գիւղեր շինելու պէտք կը լինի, այլ եղած պատերը բարձրացնելու և ծածկելու, որ կը նշանակէ ծախսի 50 կըծառում: Այդ գիւղերը դաբեր շարունակ աշխատանք են թափած, ճամբաներ բացած, արուներ փորած, քարերը արտերէն Հաւաքած. բոլոր այդ չին

աշխատանքները դրամագլուխներ են, որ եթէ փաքրիկ դրամական զոհողութիւն լինի, տասը առ հարիւր ծախսով պիտի վերանորոգին: Եթէ կացութիւնը այսպէս է, հարց առաջ գուցայ նախ Երբակի և այլ ջրամբարներ պիտի բացուէին ու ծախսեր լինէին, թէ 63 գիւղերը պիտի շէնցուէին և անմիջապէս 30.000 զաղթականներ ներս առնուէին: Այսօր գամտգան Հայրենակցական միութիւններ, լաւ ցանկութեամբ բաւած, նոր Խորհրդային ու նոր Արարիկներ կը շինեն: Այդ քայլերը հիմնական ու Հայրենակցական ձեռնարկներ են և այդ է իսկական վերաշինութիւնը: Բայց իրենց դրամով կրկնակի արդիւնաւէտ ձեռնարկներ ընելու՝ համար տնտեսական պիտի աշխատանք պարագայ գիւղերը վերաշինել և լեցնել, որով 50% խնայողութիւն կը լինի դրամի և փոխանակ մէկի երկու գործ կը կատարի — թէ աւելի աման կերպով կը վերաշինելի գիւղերը և թէ Հայաստան հայ զաղթականութիւնը կը տեղադրուի լըւած գիւղերու մէջ, գործ մը, որմէ կը խուսափին բոլշեակները:

Երրորդ սխեմակը ցոյց կուտայ ազգաբնակչութեան ընդհանուր թիւը, որի Համեմատութեան կը տեսնենք, որ անհէն շատ ազգաբնակչութիւն է եղած 1917 թ.ին — 969,000 հոգի, մի քառ. վերստի վրտ 46,3: 1913-ին 43,000 մարդ պակաս էր 1917-ի հետ Համեմատած և քառ. վերստի վրտ կար 44 մարդ. 1920-ին 69,000 պակաս էր և մի քառ. վերստի վրտ կար 41,1 մարդ. 1922-ին 262,000 պակաս և մի քառ. վերստի վրտ 33,8 մարդ. 1925 թ.ին 139,000 մարդ պակաս, քան 1917-ին և մի քառ. վերստի վրտ 39,4 մարդ:

Տխուր ու մտահոգիչ են այս թւերը. դուք պարզ կերպով կը տեսնէք, որ Հայաստանը կը նւազի և կը պակսի: Եթէ 1920-ին ազգաբնակչութեան պակասը առաջ կուգար ի ձեռք թաթարներու և այլ ցեղերու, այժմեան պակասն ալ առաջ կուգար ի ձեռք հայերու և յոգում թաթարներու: Միւս մասնակ այդ նազուրը չափանիշն է երկրի տնտեսական յուրի դրութեան և ուէժմիլի անտանելիութեան: Հայաստանի ժողովուրդը պակասած է. այդ կ'ըսեն պաշտօնական թւերն ու փաստերը, որ բարի ցանկութիւններով ոչ կարող ենք ծածկել և ոչ ալ չեքքել: Բայց այդ պարագային պիտի հարցուի. թէ Հաստատե՞ք խորհրդայինայն տեղեկութիւններուն, ըստ որոնց հայերու անծնցման տակոսը կը Հասնի 2,5-ի, այսինքն տարեկան 20,000—25,000 մարդու: Այո՛, անտարաւիրայ, պէտք է Հաստատու: Բայց և այնպէս, Հակառակ հայերու տարեկան մտա 25,000 անելուն, Հայաստանի ժողովուրդը չաւելար, որովհետեւ Հայաստանէն արտագաղթ է եղած տարեկան 25,000 հոգի. աւելցուցէք ատոր և 1917—1925 թ.ականը, 8 տարւայ ընթացքին պակասած 139,000 մարդու և կը ստանաք մի ստակով արտագաղթ, որ վայել է մեծ ծաղովուրդներուն միայն:

Ջշեղելու համար հարցէն՝ մասնաշնեք մի անգամ ևս, որ եթէ Հայաստանի ազգաբնակչութեան խտութիւնը Հասցուելու լինի 39,4 մարդէն 44 մարդու մի քառ. վերստի վրտ, այսինքն այն թ.ին, որ ունէր Հայաստանը 1913 թ.ին, սպա կունենանք 140,000 մարդու բաց տեղ: Իսկ եթէ ժողովուրդը խնամքով դատարարէ, հոգիք ինձանքով մշակելին

և երկրի այգարենակույթի հատուկները հասցրել գեթ ազգային Այգարենակույթի հատուկներ, որ 1913-ին քառաբարձի վրա կտրվելը 64,3 մարդ, Հայաստանի ազգային ընտանիքի թիվը կարելի էր լինի հասցնել Է 4,3 + 20,882 = 1,342,000-ի: Յետագայ արևմտեցող կը ներկայացնեն ազգային ընտանիքի թիվը, բայց որովհետև հասնելի լինի, թե ինչու արտագաղթ կըլլայ փոխանակ ներգաղթի, ինչու հողի առատության մեջ հողատիրներն կը տիրեն, անհրաժեշտ է ի նկատի առնել այդ ազգային բաշխումը: Ըստ 1922-ի «Թուրքիայի Խորհրդային Հայաստանի բնակավայրերի» I պրտի, Հայաստանի ժողովուրդները, առանց Զանգեզուրի, կը բաժնին հետևեալ կերպով:

- Երևանի ԳԱԽԱՌ 1) Կոստյ գաւառակ. ստորի 1, Բեր 1, հայ բուրժ 1, Խառն 5, բուրժ 3, հայ 23, բնգամներ 33 գիւղ:
- 2) Հրազդան գաւառակ. հայ բուրժ 1, Խառն 9, բուրժ 6, հայ 6, բնգամներ 21 գիւղ:
- 3) Ղարաբաղ գաւառակ ստորի 1, Բեր 1, հայ բուրժ 14, բուրժ 8, հայ 22, հայ-ստորի 1, բնգամներ 47 գիւղ:
- 4) Բազումի գաւառակ հայ-բուրժ 1, Խառն 5, բուրժ 11, հայ 8, հայ-ստորի 1, բնգամներ 25 գիւղ:
- 5) Ախա գաւառակ հայ-բուրժ 1, Խառն 3, բուրժ 8, հայ 17, հայ-ստորի 1, Խառն 2, յոյ 1, մուսուլման 1, բնգամներ 32 գիւղ:
- 6) Վեդիստար գաւառակ-հայ-բուրժ 1, Խառն 14, բուրժ 19, հայ 7, բնգամներ 40 գիւղ:

- ԱԼԵԿՍԱՆԻ ԳԱԽԱՌ 1) Գուգեն գաւառակ, եղիթ 1, բուրժ 1, հայ 31, բնգամներ 33 գիւղ:
- 2) Քարաբաղ հայ 16, բնգամներ 16 գիւղ:
- 3) Ղարաբաղ Լազանի բուրժ 1, հայ 30, բնգամներ 31 գիւղ:
- 4) Մուլա-Կոնյալ հայ 39, բնգամներ 39 գիւղ:
- 5) Աղբաբայ կարսի 14, սանիկ 7, բուրժ 2, բնգամներ 23 գիւղ:
- 6) Քալին եղիթ 4, հայ-բուրժ 1, հայ 17, հայ-Լիթ 7, բնգամներ 29 գիւղ:
- 7) Հաջի Կալին եղիթ 12, հայ-բուրժ 1, հայ 10, բնգամներ 23 գիւղ:

- ՂԱՐԱԲԻԼԻԱՆԻ ԳԱԽԱՌ 1) Ղարաբիլի գաւառակ. բուրժ 10, հայ 7, հայ-բուրժ 1, Խառն 2, բնգամներ 20:
- 2) Համաձու գաւառակ. բուրժ 1, հայ 18, բնգամներ 19:

- ԳԱՐԱԼԻԿԵՍԻ ԳԱԽԱՌ 1) Բեշեմեն գաւառակ. բուրժ 22, հայ 22, հայ-բուրժ 10, պարսիկ 3, բնգամներ 57:
- 2) Գեղեմազ գաւառակ. բուրժ 29, հայ 10, հայ-բուրժ 3, բնգամներ 42:

- ԴՈՒՆԻ ԳԱԽԱՌ 1) Ջալալօղլի գաւառակ. հայ 15, հայ-Խառն 2, մուսուլման 4, յոյ 1, բնգամներ 22:
- 2) Վարանգոլի գաւառակ. բուրժ 10, հայ, մուսուլման 6, բնգամներ 21:
- 3) Գեղ գաւառակ. հայ 16, բնգամներ 16:
- 4) Ալլանկերի գաւառակ. բուրժ 4, հայ 15, հայ-Խառն 1, յոյ 2, բուրժ-Խառն 2, սանիկ 1, բնգամներ 25:

- ԳԻՆԻՍԻ ԳԱԽԱՌ 1) Գիլիքան գաւառակ. բուրժ 7, հայ 6, հայ-Խառն 1, Խառն 2, բնգամներ 16:
- 2) Իլեան գաւառակ. հայ 16, բնգամներ 16:
- 3) Կարմիր գիւղ գաւառակ. բուրժ 14, հայ 5, Խառն 1, մուսուլման 1, բնգամներ 21:
- 4) Շամաթի գաւառակ. հայ 17, բնգամներ 17 գիւղ:
- 5) Բարան գաւառակ. հայ 10, բնգամներ 10 գիւղ:

- ՆՈՒ ՔԱՅԻՆԻՍ 1) Ելենոկի գաւառակ. մուսուլման 2, բուրժ 1, հայ 9, բնգամներ 12:
- 2) Ն. Բարազի գաւառակ. հայ 11, հայ-բուրժ 3, բնգամներ 14:
- 3) Ղարաբաղի գաւառակ. բուրժ 2, հայ 14, բուրժ-Խառն 1, բնգամներ 17:
- 4) Քասաղէար գաւառակ. բուրժ 22, հայ 11, հայ-բուրժ 5, Բեր 2, բնգամներ 40:

- ԵՃՄԱՆԻՆԻ 1) Սամազար գաւառակ. եղիթ 3, հայ-բուրժ 4, բուրժ 4, հայ-Եղիթ 1, հայ 28, բնգամներ 40:
- 2) Աւարակ. հայ բուրժ 5, բուրժ 6, հայ 20, բնգամներ 31:
- 3) Ղուրթուրի գաւառակ. հայ-բուրժ 3, Եղիթ 6, բուրժ 4, հայ-Եղիթ 1, հայ 16, հայ-ստորի 1, բնգամներ 31:
- 4) Զանգեզուար գաւառակ. հայ-բուրժ 4, բուրժ 18, հայ-Եղիթ 1, հայ 5, բնգամներ 28:
- 5) Արարան գաւառակ. հայ 25, բնգամներ 25:

Ահա ստանք էին 1922-ին բացի Զանգեզուրէն, Հայաստանի գիւղերը բաժանած ըստ ազգութեան: Ուշադրելով ընթացող առաջին իսկ հայեացքէն քարտէսի վրա պիտի նշմարել, որ թէև Հայերը իրենց թիւով 86% էն առնի են, բայց փաստորէն չեն բռնել իրենց թիւ համապատասխան տարածութիւն: Այսպէս, Հայաստանի 8 գաւառներու զլիաւոր ազգային ընտանիքեան՝ Հայերու և Քաթարներու բնակութեան վայրերը կը ներկայացնեն հետևեալ պատկերը:

1922ին Հայերու ապրած գիւղերը:

գաւառ	գուգ հայ	գուգ քրդ	հայ-բուրժ	Խառն	հայ-ստորի	հայ մուսուլման	հայ եղիթ	հայ-Խառն	յոյ	բնգամներ	բնգամներ քրդ	հայ յոյ բնգամներ	հայ 1	գիւղ
Երևան,	83	50	2	1	—	—	—	—	—	136	199	118,590	870	
Ալեքսոպոլ.	147	2	—	7	—	—	—	—	—	152	194	143,614	950	
Երիթաձիճ,	94	16	1	3	—	—	—	—	—	114	158	88,720	780	
Ն. Բարազի,	45	8	—	—	—	—	—	—	—	53	83	76,615	4450	
Գիլիքան,	54	—	—	1	—	—	—	—	—	55	80	60,710	1100	
Լոռի,	51	—	—	—	2	2	—	—	—	55	84	54,823	1000	
Գարիգիազ.	32	13	—	—	—	—	—	—	—	45	99	21,272	470	
Ղարաբիլ.	21	1	—	—	—	—	—	—	—	26	39	39,048	1500	
	527	90	3	2	10	2	2	636	936	603,692	950			

Այս տախտակը ցոյց կուտայ որ Հայերը 936 կէտերէ միայն 527 ի մեջ կապրին անխառն, իսկ բնգամները 636 կէտերու մեջ՝ Խառն և անխառն և իւրաքանչիւր կեդրոնի մեջ միջին հաշուով կապրի 950 Հայ: Այժմ առաջ բերենք նոյնանման տախտակ մը Քուրդերու վերաբերմամբ:

1922ին բուրժ-քարաբնորու ապրած շրջանը:

գաւառ	գուգ քրդ	գուգ քրդ	բուրժ	հայ	գուգ քրդ	սանիկ	բուրժ	Խառն	բուրժ	բնգամներ	բնգամներ քրդ	բնգամներ քրդ	բնգամներ քրդ	գիւղ
Երևան,	55	50	..	..	..	..	..	..	..	105	199	21973	200	
Ալեքսոպոլ.	4	2	14	7	..	..	..	..	..	27	194	6419	240	
Երիթաձիճ,	32	16	..	..	..	..	..	..	..	48	158	7235	150	
Ն. Բարազի,	25	8	..	..	1	..	..	..	..	34	83	10678	300	
Գիլիքան,	21	..	..	..	..	..	..	..	..	21	80	8481	400	
Լոռի,	14	..	..	1	..	2	..	..	..	17	88	4812	280	
Գարալազ.	51	13	3	..	..	..	..	..	..	67	99	5442	80	
Ղարաբիլ.	17	1	..	..	..	..	..	..	..	12	39	4503	370	
	211	90	17	8	1	2	331	936	69543	210				

Այս ահաբանակէն կը պարզուի, որ Թուրքերը կը բռնեն 331 կէտեր, այսինքն ընդհանուր տեղերու մէջ երրորդը: Եթէ համեմատենք Հայերու և խլամներու թիւը, թէ քանի՞ Հայի իւրաքանչիւր դաւառի մէջ մի գիւղ կ'իջնայ և, ընդհակառակը, քանի՞ Թուրքի նոյն դաւառին մէջ մի գիւղ կ'իջնայ, կը տեսնենք, որ տանկ քանի մէջ Հայերը 4—5 անգամ աւելի խիտ են, քան Թուրքերը: Այդ կը երանակէ, որ երբ թրքական զիւղերու մէջ լինէր նոյն խտութիւնը, ինչ որ Հայերուը, այդ պարագային Թուրքերը փոխանակ 331 գիւղի պիտի ամփոփուէին միմիայն 69 գիւղի մէջ, որով 262 գիւղ իրենց արտերով և հողերով պիտի մնային ազատ: Ընդհակառակը, եթէ Հայերը նոյն խտութեամբ պարբեր ինչ որ Թուրքերը, փոխանակ 636 կէտերու, պիտի բռնէին 3000 կէտ: Այս թւիկները ցոյց կը տան, որ Թուրք-թաթարները մեծապէս հպատակուած են. անոնք 5 անգամ աւելի հողի բաժին ունին, քան Հայերը և իրենց թւի համեմատութեամբ 10 անգամ աւելի տարածութիւն կը բռնեն: Հայերը, ընդհակառակը, հողազուրկ են համեմատած Թաթարներու հետ, և եթէ Հիմք բռնուելու լինէր Թուրքերու հողերու քանակը, անոնց պէտք էր տալ 2400 գիւղ և ու: Այս անհամապատասխանը իրաւացի է, համապատասխան է «հողը աշխատաւորին», հասարակութեան և այլ գեղեցիկ սկզբունքներուն, որ կը շահալսին խորհրդային երկրներու մէջ: Հայաստան երկրի մէջ Հայը կը տառապի հողի սակաւութենէն ճիշտ այնպէս, ինչպէս երբեմն ցարական ընդարձակածուտ երկրներու մէջ կալածատիրութեան շնորհիւ մասիկն էր խեղրուած հողազուրկութենէն: Հայաստանի մէջ այսօր կալածատերերուն կը փոխորինէ օրէնքի և սովորութեան անհիմնութիւնը, որմէ առաջ է եկած մի նոր դասակարգ՝ արտօնիպ թուրք աշխատաւոր կալածատեր որը իրաւունք ունի տանն անգամ աւելի վաշելու: Հայաստան երկրի բարիքը, քան Հայ ժողովուրդը: Եթէ կ'ուզէք հասկնալ Հայաստանի ազգաբնակչութեան պակասու գարտնիքը, այս հանգամանքին մէջ դիտի զտեղք: Եթէ կ'ուզէք հասկնալ, թէ ինչպէս առնէ օր բոլորեկ զեկալարները անխնայօրէն կը զուտան, թէ նեղի է Հայաստանը, մարդու տեղ չկայ, այդ անհամապատասխան հողազուրկութեան մէջ պիտի փնտռէք բացարարութիւնը. կ'ըսեն՝ Հայաստանի մեջ ազատ հող չկայ, հող ստեղծելու համար դրամ կ'որոնեն, որ ճահիճները չորցնեն, անապատներ շրին, որպէսզի վերջի վերջոյ, 10-, 20,000 անտարիս հող վատակին, տան ինչ ազատ հողը իրենց կողքին է: միայն պէտք է պարզ և արարք բարձրամ: Բաւական է իրագործել բոլորեկներու այսօրուց նպատեանը՝ «հողը ամենքին հասարակ կերպով», և հողային տարեկան զգալի կերպով կը մեղմանայ Հայաստանի մէջ: Ո՛չ Նոսենէի ծրագրերով կը լուծուի հողային ցարը, ո՛չ ալ բացաւ առուներով: Հողերու հատարք բաշխման սկզբունքով հետեւեալ քանակով հողեր կը ճարակին — Վերլու տեսանք, որ 1922-ին Հայաստանի (առանց Ճահգեղարի) ազգաբնակչութեան թիւը 1917-ի հետ համեմատած պակասեալ 262,000-ը, իսկ 1923ին 139,000: Անշուշտ, ասոնք Հայաստանի մէջ հողեր ունէին և ասոնց պարագ թղած հողերը յիշուած 63 դատարկ և 331 թրքաբնակ զիւղերն են: Թէ ըստս ճիշտ է, կ'ապացուցանէ 1913-ի վիճակագրութիւնը, որու աղիտակէն կը տեսնէք, որ

եղած են 256,222 Թաթար-թուրք, 69,794 օտարներ, ընդամենը 326,016 ալլագրիներ 603,655 Հայի դիմաց: Այն ինչ 1920-ին 26,000 ալլագրիներ 874,000 Հայերու դիմաց. իսկ 1922-ին 69,541 Թաթար և իրամմ մարդու ժողովուրդ բացակայելով Հայաստանէն՝ նոյնքան մարդու տեղ պիտի բացուէր: Եւ երբ նկատի առնենք, որ Թաթարները, առհասարակ Հայաստանի լուր, բերրի հողերն են բռնած, որ անոնք Հայերէն աւելի հող ունէին նոյնիսկ 1913ին, և առնուազն բացակայողներու շունչ զուրկ կէս տնտեսային հող ձգենք, ապա 331 թրքական և 63 Թաթար զիւղերու շրջանակի մէջ, կ'ուսենք 150,000-200,000 տնտեսային, պարտատու հող, որի վրա կային այդիներ, քեհսրիղներ, առուներ, ձանապարհներ, կամուրջներ, տուներ ևայլն: Եւ եթէ այժմ նկատի առնէք Հասարակութեան սկզբունքը, հայիական խիտ վայրերը նօսրացէին, փոքրաթիւ Թաթարներով բռնած դատարկ տարածութիւնները լեցան, այդ պարագային արտագաղթը պիտի վերնար և մօտ 50,000 տնտեսային հող ալ կարող էր յատկացուիլ գաղթականութեան, որով Յունաստանի, Պոսի, Միջագետքի, Միւրիանի և այլ երկրներու Հայերէն 40-50,000 հողի, առանց սարքաբարձութեան և ուրիշ ծրագրերու իրագործման սպասելու, ի վիճակի կը լինէին տեղափոխելու և աշխատանքի լծուելու: Այս կը հաստատեն խորհրդային վիճակագրական տեղեկութիւնները, որոնք իրենց չօր լեզուով կը շեշտեն որ քանի երկրային հողային զրութիւնը կը շարունակուի, Հայաստանի մէջ Հայերու համար տեղ չկայ, արտագաղթը պիտի շարունակուի և ներգաղթի իրուսեան և հարաւորութիւն պիտի ունենան միայն թրք-թաթարները:

Սուտ է թէ Հայաստանի մէջ հող չկայ. հող կ'այ, բայց Հայու համար չէ: Սուտ են զաղթականներու համար արտաշայտուած օրացաւութիւնները. անոնք ներս չեն առնիր ոչ թէ հողի պակասի, այլ ուրիշ, սնտի պատճառներով: Եղած շինարարական աշխատանքները անօգուտ ու անխիտ չեն, բայց եղած ազմուկը աւելի շատ ունկկամ է:

Այս խորականութիւնը, որ Հայ բոլորեկները կը դնեն Հայերու և Թաթարներու միջև, կը բխի անոնց համակարգէն դէպի Եզրբէջան ու Տաճկանները: Անոնք կը մտնան որ այդ միջոցով կը ինքզինի Հայ ժողովուրդին կենսականութիւնը: Հայաստանի այսօրուց զեկալարները պէտք է նկատի առնեն, որ, ո՛վ գիտէ, Թուրքաստանի ու Կուբանի տափաստաններու և կամ՝ յունական ու սուրիական դաշտերու մէջ սասնդական ու անհող գաղթականները իրենց անէճքով չը պիտի պատժեն այս հայաշայտած քաղաքականութիւնը: Սուլթաններու թագադրութեան միջոցին, ինկարիզներու կողքին, մէկը բարձր ձայնով կը պտուար. «Փատիշահը՛ չ'ոք տրուամս, սէնտէն պէ՛տքից: Այլա՛ն Հայ բոլորեկներու լ՛Այաջը պէտք է լինի Հայ ժողովուրդը և անոր շահը, հակառակ պարագային պիտի արժանանան անոր նպոյթին ու թշնամութեան»

ՌՈՒԲԷՆ



# Ո՛րք է գնում թիւրքիան

Հայ-թրքական յարաբերութիւնները թշնամական էին երեկ, երբ հայկական հարցը նկատուում էր Թիւրքիայի ներքին գործի նրանց բարեկամական չին և այսօր, երբ հայկական հարցը վեր է ածւած Հայաստանի և Թիւրքիայի միջպետական փոխյարաբերութեան ինքրիւ Բարեկամական չին, որովհետեւ "ազգային" Թիւրքիան էլ Հայերի վերաբերմամբ կիրառում է նոյն քաղաքականութիւնը, ինչ որ և համիտեան ու իթիլհատական Թիւրքիան: Նա իբրևում է Հայերի պետական գոյութեան իրաւունքը և ձգտում է քնաջնջել հայ ժողովուրդը, իրեն հաւաքական ամբողջութիւնէ Բնականորաբար, քանի այս քաղաքականութիւնը կը շարունակէ, թշնամական յարաբերութիւնները չեն փոխուի, որքան և այդ յարաբերութիւնները մնասակար լինեն երկու կողմի համար էլ:

Հայ-թրքական յարաբերութիւնների փոփոխութիւնը կախած է երկու պայմանից.— կամ Թիւրքերը, վերջ ի վերջոյ, ստիպուած պիտի լինեն քաղաքական լուրջ դիջուսներ անել Հայերին և այս ձեւով վերջ տալ պարսկոյ թշնամանքին, կամ՝ դեպքերի առարկայական ընթացքը պիտի տանի այնտեղ, ուր հայկական հարցը լուծուի անկողի Թիւրքերի կամեցողութիւնից: Հայ և թիւրք ժողովուրդների բարբիթ տեսակէտից, ի հարկէ, ցրակալի կը լինէր տաւջին ձեւը, բայց այդ ձեւի հնարաւորութեան համար դրական ո՛չ մի նշան չկայ, որբախտաբար: Մնում է վերջին Զանաղարջը, որին հայ ժողովուրդն ևս պէտք է համաձայնեցնէ իր քաղաքականութիւնը:

Այս տեսակէտից Թիւրքիայի կեանքի ուսումնասիրութիւնը շահեկան նիթ է մատակարարում: Թիւրքիայի գործերի զարգացման ներկայ ընթացքը չի կարող ըստ ամենայնի չզոհացնել բոլոր նրանց, որոնք ճակատագրիւր սերտ կապերով կապուած է այդ երկրի շնու:

«Գրօշակ»-ը ամեն ամիս շատ մօտից հետեւում է Թիւրքիայի կեանքին: Հայաստանի և Թիւրքիայի փոխյարաբերութեան ճշտումի համար աւելորդ չենք համարում մի անգամ ևս կանգ առնել Թիւրքիայի վիճակի վրա և առաջ բերել այն աւանդները, որոնք կարող են հետաքննել հայկական հարցի քաղաքական ուղիների պարզաբանման գործը:

Թիւրքիայի ոչ տարածութեան և ոչ էլ, մանաւանդ, ազգայնականութեան մասին ստույգ տեղեկութիւնները գոյութիւն չունին: Վիճակագրական դիւտորը աղբիւրը օտմանեան վարչական ու հարկային Տիւրքիայի թիւրքերի ու «Սայնալի»-ների տաւած թւերն են, որոնք, սովորաբար, կազմում էին ի նպաստ թիւրք ցեղի "Statsman Yearbook"ի (1921 թ.) հարգրած տեսլիների համաձայն ներկայ Թիւրքիան տարածութեան և ազգայնականութեան քանակի տեսակէտով 1914-ին ներկայացնում էր հետեւեալ պատկերը.

Փարսկական Թիւրքիա	10,882	անգլ. ք. մ.	1,891,000	բնկչ.
Փոքր-Ասիա. Թիւրքիա	199,272	«	10,186,900	«
Հայաստան և Գիւրտ.	71,990	«	2,470,900	«
Գումար	282,144	«	14,548,800	«

"Modern Turkey" գրքի հեղինակ Eliot Grinell Mears \*) այսպիսի հաշիւ է անում արդէ Թիւրքիայի ազգայնականութեան թիւր որոշիւր համար 1914-ի տեսլիներից ևս հանում է մօտ 2<sup>1/2</sup> միլիոնի համող հայ ազգայնականութիւնը, Փոքր-Ասիայի շուրջ 2 միլիոն յոյները, 1922-ից յետոյ, 6 մսուս ընթացքում, համաձայն Թիւրքիայի ներքին գործոց նախարարութեան արձանագրութեան, Պոլսից հեռացած 400,000 ոչ-իւրաքանիւր, մեծ պատերազմում մեռածներն ու վիրաւորները, որոնց ընդհանուր թիւը, ըստ թուրք պաշտօնական տւեղների, հասնում է 837,000-ի — համազումար 5,237,000:

Այս հաշուով 14,548,800 — 5,237,000 կը ստացուի 9,311,800, որի վրա պէտք է աւելացնել և Սուրմալուի, Կարսի, Բաթումի գրոււած մասերի ազգայնականութիւնը:

Ամերիկեան ընդհանուր հիւպատոսը 1923-ին հաշուում էր, որ Թիւրքիային մնացած հոյերի ընդհանուր տարածութիւնն է 494,538 քառ. մղոն և ազգայնականութիւնը 10 միլիոն շունչ. ասել է 20 մարդ մի քառակուսի մղոնի վրա: «The Statesman's Yearbook»-ը (1924 թ.) Թիւրքիայի ազգայնականութեան թիւը ցոյց է տալիս 8—10 միլիոն:

Անգլիացի գեղարվեստ Քորնոսը, որ վերջին տարիներս ուսումնասիրական ծամբորդութիւն է կատարել Փոքր-Ասիայում, գտնում է, որ արդէ Թիւրքիայի ազգայնականութեան թիւը հազիւ կարելի է հաշուել 8 միլիոն:

Թուրք յայտնի հրօքարակաղիր Նէճմէտտին Սատըզը «Ազադ» թիւրթի 1924 թ. հոկտ. 17 համարում գրում է. «Մենք մեզ չխաբենք» մեր երկրի տարածութիւնը 800.000 քառ. կիլոմէտր է, և բնակչութիւնը առ առաւելին 6 միլիոն: Թիւրք կառավարութիւնը ինքը Թիւրքիայի բնակչութեան թիւը մերթ 13 միլիոն է ցոյց տալիս, մերթ 11 միլիոն: Բոլշեւիկները Թիւրքիայի ազգայնականութիւնը հաշուում են 8—9 միլիոն \*):

Թուում է, թէ այս վերջին թիւը, որ հաստատուում է և անգլիական աղբիւրներով, ամենից մօտ է իրականութեան: Միւրոյի վերոյիշեալ հաշիւների մէջ չեն մասնանշուած այն կորուստները, որ պատերազմի զաջում սպանուած ու վիրաւորաւորները զուր, Թիւրքիան ունեցել է և տասնամիաց պատերազմի ու քաղաքացիական կռիւների ընթացքին հիւանդութիւններից, սովից ու կտորածներից: Չպէտք է մոռանալ, որ հայկական նահանգներում (առանց Տրապիզոնի) այժմ մնացել է օչ աւելի, քան 150,000 մարդ, միւշդեա պատերազմից առաջ այդ թիւը հասնում էր 1 միլիոն 300 հազարի: Այդ ազգայնականութեան աւելի քան երեք քառորդը այժմ չկայ — կտորակել ու ոչնչացնել է: Նոյն պատճառներով մեծ կորուստներ են եղել և Թուրքիայի ուրիշ 2Էրջաններում — Կիլիկիա, յունական գրամման վայրեր, ներքին դաւառներ: Չափազանցութիւն չի լինի, եթէ սասնք, որ Միւրքսի յիշուած թւերից դաս առնուողն 1 միլիոն—մէկ միլիոն

\*) "Modern Turkey", Eliot Grinell Mears, 1925, New-York,

\*\*) Տես Եւբոլոնի յօդուածը "Հայրենիք" ամսագրի սոյն տարւայ Օգոստ համարում:

երեք հարիւր հազար հոգի էլ փշացել է սովի, հիւսնոր-  
թիւնների ու շարքերի հետեւանդով Ուտար, 8 միլիոն թիւը  
Թիւրքիայի ազգաբնակչութեան համար շատ է ու քիչ չէ  
800,000 քառ. կիլոմետր տարածութեան վրա 8 միլիոն  
ազգաբնակչութիւն, որից, լրակազմից վեպզում, 6 միլիոնն է  
թիւրք - ահա ներկայ Թիւրքիայի իսկական վիճակը Թիւրք  
տարրը պարզում է գերազանցօրէն արեւմտեան և կենտրոնա-  
կան Անատոլիայում, իսկ արեւելեան կամ հայկական նու-  
հանդերը մնացել են անկշակ ու անմարդաբնակ:

Եւ այս ազգաբնակչութիւնը, որ ինքիին արդէն անբա-  
ւարար է ահազին երկիրը լեցնելու ու շէնցնելու, շարունա-  
կում է այլոստերել ու քայքայել՝ երեւան բերելով անց-  
ման խցմուկ սովուս Այպզէն, ըստ Պոլսի քաղաքապետաւ-  
րեան վիճակագրութեան 1924-ին Պոլսում ծնւել են 7337  
թիւիստը, սրից 7152 մեռել են: Համաձայն առողջապահու-  
կան գործադրութեան սոյն տարւոյ Օդոստոսի վերջին հրա-  
տարակամ 1924 թ.ին Թիւրքիայում անցի ունեցած ծնունդ-  
ների և մահերի վիճակագրութեան՝ Պոլսի մահերը եղել են  
13,118-ով աւելի, քան ծնունդները: Նմանապէս և գաւառա-  
կան շատ վայրերում մահերը ծնունդներից եղել են աւելի շատ՝  
Ատալիա 393, Սաման 154, Արարիի 340, Տիգրապոսիկերտ 53,  
Գինձ 144, Սիւքտո 14 կէս: Մրան Հակոբակ, Անգորայում ծը-  
նունդների թիւը 1533-ով աւելի է, քան մահերի: Սպարթա  
416, Դէնիզլի 1577 կային: Անգորը Թիւրքիայում անցեալ տարի  
ծնունդների թիւը մահերից եղել է աւելի 32,885-ով, ուրեմն,  
եթէ Թիւրքիայի ազգաբնակչութիւնը 8 միլիոն է, երկրի ընդհա-  
նուր աճեցումը եղել է կէս տակաւից էլ դակաստից այս տակա-  
ւոր էլ թւում է խիտալուստեան, եթէ նայելու ինքնը այնտեղին,  
որ Թիւրքիայում գործում են ջերմը, սիֆիլիսը, թորախտը,  
երիսաների հիւսնորթութիւնները: Այսպէս, մանուկների պաշտպան  
թիւրք միութեան ընկալանուր քարտուղար Դր. Ֆուտաը  
Անգորայի շրջաններում ուսումնասիրական պատյայից վերու-  
գառնելով՝ յայտարարել է, թէ իր եղած 12 դպրներում 226  
կանայք ծնւել են 1392 դասակ, որոնցից 758 մեռել են, ողջ  
Մնացածներից 250ը տառապում են ջերմից, երեքը անգամա-  
րդէն են, շատերը ունին սիֆիլիս կամ թորախտ. մեծ մասը  
ստգորն է անուաղ երիտաներ են «Թիւրք ցեղը, եզրակա-  
ցեում է դր. Ֆուտաը, հետզհետէ մոմի պէս հալւում է և  
մէջը սրը ընկած ծառի պէս փլւում:» Կառավարական  
«Ճիւղաբերէթ» թերթը գրում է. «Թիւրքիայում՝ երիտա-  
ների մահը հասնում է 75 տոկոսի: Եւ սրա մէջ մեծ դեր  
ունի ջերմը:» Երկրորդ գորաբանակի բոլշևի Թէ՛՛՛՛՛՛՛ Սալիմ  
բայէ 1918-ին կատարած քննութեանից վրա հիմնելով քայե-  
նում է, որ ծովափերայ շրջանների բնակչութեան 90 տա-  
կասը տառապում է ջերմից: Դր. Օսման Եէրէֆէտտին բէյը  
պնգում է, թէ Թիւրքիայում 3,250,000 հոգի հիւանդ է  
ջերմով և զբանցից 1,650,000 աշխատող ձեւերը Պոլսի  
« Մի պուտ կոթ» հաստատութեան վարիչ Մաֆիէ հանրմը  
պատում է. «Մարտը 400 աղաչ հմ՝ քննում: Նրանց  
պէտք է բաժանել 3 դասի. կառաջին դասը կազմում են  
ձծկիները: Երկրորդը՝ ձծէ կորածները և երրորդը՝ 2-3  
տարեկանները: Առաջին դասում մահերի համեմատութիւնը  
հարիւրին 80 է, երկրորդում՝ 55-60 և երրորդում՝ 50-55:

Երեւանների մահը մեր մէջ հետեւանք է անհոգութեան և  
պիտութեան Դժբախտաբար, ծնունդներից փոխանցւած սի-  
ֆիլիզն էլ աւել է գործում:» Եւ իրաւունք ունի նէ՛՛՛՛՛՛՛  
տին Ստաըզը, երբ գրում է. «Ամբողջ երկիրը վերց վար  
լուրջ վտանգ է ենթարկւած... Միայն Արիւրիէի անապա-  
ներում կարելի է հանդիպել այս համեմատութեան, որ կայ  
երկրի ընդարձակութեան և, բնակիչների նագրութեան միջեւ  
Ամենից ահաւոր կէտը այն է, որ այս քիչ բնակչութիւնն էլ  
չի աւելանում, նագրում է և այս ընթացքով էլ աւելի  
պիտի նագրի: Մեր շինած երկաթուղիները ձախճների վայրով  
են անցնում: Եւստով այս բոլոր երկաթուղիների երկու կող-  
մերը միայն գրեթեմաներ պիտի լինեն:» Հասկանալի է Դր.  
Աբտուլլահ ճէֆէթի աղիտուր ճիւղը. «Էտքը է շատացնել  
բնակչութիւնը: Անհրժեշտ է օտար արիւն խառնել մեր  
արեան մէջ: Օրինակի համար, կարելի է Գերմանիայից և  
Իտալիայից գաղթականներ բերել տուր Թիւրքիա և թրքա-  
ցնել նրանց: Եւ ի դուր է վրգովում «Թէ՛՛՛՛՛՛՛-ը. սակա-  
ւամարդութեան փառաը այնքան է սարսափելի, որ Թիւրք  
գործիչները ստիպւած են մասնել՝ զգրմանայի և իտալացի  
հէրիֆները իբրեւ յովատակ (արուձի) բերել և թրքուհիների  
հետ սամուռանքել:»

Մտրու դակասի դէմ դաջարելու միջոցներից մէկն  
էլ դրուց գաղթականներ բերելն է, և, սակայն, թիւրք կա-  
ռավարութեան այս ուզողութեամբ թափած բոլոր ձեղբը  
կարելի է համարել վիճած:

Հակառակ հասնած աղմուկին և ծախուած հակայական  
գումարների, Յուստատայից և Թրակիայից Թիւրքիա բեր-  
ած գաղթականների թիւը մինչև այժմ 400,000ը չի անց-  
նում: Այս տարւայ մարտի Ազգային Մեծ Ժողովում գաղ-  
թականութեան բխուղիէ քննութեան ժամանակ ներքին գոր-  
ծոց գործավար Ալէմի բէյը արիւնից յայտարարեց. «Մենք  
ունինք 362,000 գաղթականներ. 72 հազարը չունին կայուն  
գրութիւն և գոհ չլինելով իրենց գտնած վայրից՝ ուզում  
են փոխարելի ուրիշ տեղ և գործի չեն կոչում: Բայց այդ,  
գաղթային վարչութիւնը դադարւած է 800,000 վաղաատու-  
ներ վերջնականապէս տեղաւորելու և նստակեց պարձնելու  
գործով:» («Թահին», 26 մարտի): Եկած գաղթականները  
մասնել են ոմնկարագրելի գրկանքի ու փռայման: Հիւսնէին  
Ճուհտը իր «Թահին»ում այդ տուրիւ գրում է. «Այսօր  
սրբան մահեր են պատահում իրոնց երկրից բռնի այստեղ  
ուզարկւած գաղթականների մէջ: Հայիւ տալու կարող մէկը  
կը՝ գտնուի արագօր: Մեր մարերն են փշաքաղւում ամեն օր  
այդ մասին վարչութիւններ լսելով: Անցեալ Հոկտ.ի 30-ի  
Ազգ. Ժողովի նխուրի, գաղթականութեան հարցի շուրջ տեղի  
ունեցած փոթորկայալ վիճարանութեան միջոցին Ռիւա Նուր  
բէյը գտնագառում էր. «Գաղթականներից օգուելու մեր  
փափաքը կարելի չեղու իրագործել: Յոյների չպակասը մենք  
սպանելիք:» Երեւութեան Հիւսնէին Հիւսնի բէյը այսպէս  
է բնորոշում գաղթականութեան գործավարութեան գործու-  
նելութիւնը. «Էֆէնտիները», մի տարրիտակ բան էլ կայ:  
Վարչապետը յայտարարում է, թէ 400,000 գաղթականնե-  
րից 200,000 տեղաւորւած են, իսկ 150,000 էլ դատապար-  
ուած են մեռնելու ծովափին: Էֆէնտիները, մայրիպից

զատ մտածարական կողմն էլ հլանող է Վեց միլիոն սուկո բեւաջէ ունեցող մի գործավարութիւն երեք միլիոնից աւելին իր պաշտօնեաների վրա է ծախսում: Բոլոր անկարողներն ու պաշտօնից արձակուածները այդտեղ են լեցած: «Գործավարութիւն չէ սա, այլ անկարողների հրահանոնոց», եզրափակում է երեսփոխան Թուհալը Հիւմի բէջը: Եւ ահա այս «անկարողները» ամէն բան արին, որպէսզի Յունաստանից եկած գաղթականները... փչանան: Եւ այդ այն ժամանակ, երբ հայերից ու յոյներից յետոյ Մնացի էր ոսնջուհի հարստութիւն, առև, արտ ու ալգի: Թիւրք վարիչները անկարող եղան հայերի ու յոյների տեղերը իրարմ գաղթականների բնակեցման պարզ աշխատանքն անցամ կատարել:

Բնականաբար, այս գրութիւնը տեսնելով՝ Բալկաններէց, Կովկասից և այլ տեղերէց այլևս Թուրքիա գաղթելու ցանկութիւն ունեցող շինաց, կամովին գաղթողները մեծ մասն էլ հրաժարեալ զերարձաւ նախկին տեղերը: Թրքական իշխանութեան քաղաքականութիւնը մինչ կառավարութիւնը շարունակում էր բերելու մնացին անհետեանք. քեժալական արշակաւանում ապրել փափաքողներ չկան Արտաքին անշաջողութեան հետ միասին ձախողում է և Թիւրքերի գաղթականական ներքին քաղաքականութիւնը. մինչ կառավարութիւնը շարունակում է գաղթականների ուղղել դէպի արեւելեան հասանքները, այս վերջինների բնակչներն են, որ արտերկրային թափով լքում են իրենց տարած տեղերը և փախում Միջերկրականի ու Մարմարայի եզրերները. միևս կողմից էլ, ինչպէս վկայում է Կարսի խորհրդային հրապատու Ռոշտը, Կովկաս են տեղափոխել ու շարունակում են տեղափոխել Հայաստանից ու Արրբէջանից եկած գաղթականները: Կառավարութիւնը 100,000 տոկէ էլ յառկացող արեւելեան հասանքների բնակեցման համար — գաղթելու համաձայնութիւն յայտնող ո՛չ մի մարդ չի գտնել: Գաղթականները գերադասում են բընակել Իզմիրի շրջանում: Այդ առթիւ Օսման Ջատէ Համիտի ԱՇհնկէ թիրթում բարդում է. «Երբ անգլին Արեւելեան նահանգների հորիւրին ութսուեք անմարդաբնակ և կենդանի չունեցող անապատի է վերածւած, ո՛ր խելացին այս գաղթականներին մինչեւ այստեղ բերեց: Մի խնիթը մտածեց այս միջոցը: Թերեւս առարկի, թէ հայերի խճճութիւններն ու լքութիւնները Արեւելեան հասանքների մի մասը աւերակ դարձրած լինելու պատճառով է պէտք եղել գաղթականները Իզմիր փոխարկելու: Մակայն, եթէ մեք էլ, Իզմիրի, Այսոնի և Մանեսայի այլամ որտեղ ցոյց ասնք, այդ պատանեցուցելը պատասխան չլիտի՞ լինի»:

Թորձը ցոյց է տալիս, որ դրոյս գաղթականներ բերելը անիրադարձելի ծրարից է Թիւրքերը համար: Յոյների զորով քշած իւրաճերից զատ Թիւրքիա փոխարկելու ցանկութիւն յայտնողներ չկան: Թիւրքիան դուրսը ատաղձ չունի իր ազգաբնակչութիւնը աւելացնելու համար, հերսը ունեցածն էլ շատ քիչ է իր ձեռքը մնացած ահազին երկիրը լեցնելու: Այդ պատճառով, երկրի քայքայումը, որ ծալք է տած պատերազմի ընթացքին, պէտք է շարունակել ձուկատարական անխուսափելիութեամբ: Դրան ապացուց այն բարձր մակարդակի վրա, որտեղ ամենամուսլ գոյներով են ներկայացնում Թիւրքիայի երբեքն վիճակը և տնտեսական թշուառութիւնը:

Պիւրը, որ քեժմայականները մուտքից առաջ վաճառական միջադային ծաղկած կենտրոն էր, այսօր դարձի է հոգեվարքի մէջ գալարուող մի՞ զիւր, ուր ոչ կանք կայ, ո՛չ գործ: Իզմիրը՝ Անատոլի այլ շքեղ դուռը՝ աւերակների կոյտ է: Գործն ու ուսուսուրը այս երկու քաղաքներից փոխադրել են Պիլու և Մէլանիլ: Հայերն ու Յոյները հեռանալով իրենց հետ են տարել և արհեստներն ու վաճառականութիւնը, և թիւրքը մնացել է «ի վերս աւերակաց թաղաւորել»: Թիւրք գործիչները դառնորէն ողբում են այս կացութիւնը... Հակառակ նրան, որ տնտեսական ակադեմիոյ տարբերը պահանջին, Թիւրքերի վիճակը ոչնչով չփոխեց, որովհետեւ նրանք աշխատում են ոչ թէ տնտեսական իրական կեանքի պակասը լեցնել, այլ պետական պաշտօնային դուռնայ: Իզմիրի, Պրուսայի, Միջերկրականի ու Մարմարայի ասօղջ ծովափերի վրա աւերական ու տնտեսական շատ սպաւորէպներ պարապ Մնացի, և երկրի տնտեսութիւնը մեծ վնասներ կրեց այս պարտութիւնից»: գրում է Նէճէւասին Սաւաթը: «Ջորս տարի առաջայ և այսօրայ մեր վիճակը եթէ բարդատեք, կը տեսնեք, որ երկիրը օրէցօր վատթար վիճակի է մտնում: Ինչ արինք, մեր վաճառականութիւնը անկաստա արդիւնք տեք, Յունաստանի աւերակն ծառայեց: Թրանիթը գնաց, ստուխի աւառուրն էլ գնուու վրա է... Յաղթանակից յետոյ, ծանօթ պատճառներով, քրիստոնեաները հեռացան երկրից, բայց իրենց հետ տարին նաև իրենց աւերական գործունէութիւնը, վկայում է Սուպհի նուրի բէջը. «Հիւալ, թերթը նորեւս մի օրինակ էր բերել Թիւրքերի «տնտեսագիտութիւնից». Այվալըքի և շրջանակների ազատագրութիւնից յետոյ յոյների թաղած ձիթապտուղները լքեալ գոյքերի վաճութեան փոխանցեցին: Վարչութիւնը վարձով տեք յանձնառուներին հարկարին 12 գլճարով: Վարձակալները պարտուար էին ինսուկն ձիթնիները, բայց ոչ վարձակալները յարգեցին իրենց պայմանը, ո՛չ էլ պատկան մարմինը կատի առաւ խնդիրը: Այս անհոգութեան պատճառով այսօր միայն Այվալըքում հարիւր հարզուրեց աւելի ձիթնիներ են ալրել: «Անհոգութեան երեսից միայն Այվալըքում երկու տ. կէս միլիոն օլուայից աւելի ձիթապտուղ փչացաւ: Մաւերի առկ հաւաքում այս պտուղը ժամանակին չտւին յանձնառուներին, և հեղեղը գարով՝ բուրը քշեց աօրաւ»:

Այսպիսի օրինակներ անհաշիւ են Թիւրքիայում. «հեղեղը քշում տանում է» ոչ միայն հայերի ու յոյների թողած հարստութիւնները, որոնց թալանը դեռ շարունակում է, այլ և թիւրք գիւղացիութեան ունեցածը: Թիւրք ժողովուրդը, որ ուրիշներին հաց էր ծախում, այժմ մնացել է անօթի և ամէն տարի 14—15 միլիոն սուկո արժուիք է երարձում գրուեց: «Մեր երկրի անուկը երկուգարծական է, բայց հացը դրոյս ենք հայթայթում», գրում է Եօնուս նատի բէջը «Ճիւմ հուրիէթ»-ում:

Դր. Ճէլալ Մուսլիմար բէջը մի քանի ամիս առաջ «Վաթան» թերթում գրում էր. «Թէև կատարեալ վիճակագրութիւն չկայ, սակայն համոզւած եմ, որ Պիլու բնակչութիւնը կէս տար կէս իջած է: Հիւանդութիւնից և անօթութիւնից մահողներից շատերը վիճակագրութեան մէջ չեն մտնում: Պրուսա՝

Հարելին հիշքը չի անցնում այն Քիւրքերի, որոնք քիչ-շատ հանգիտ կարող են ապրել: Փայտի թշուառութիւնը վրդովցուցիչ համեմատութիւններ ունի, և հիւճակտի տրամադրութիւնները հնարահանում են: Ես ճար չեմ տեսնում այս թշուառութեան դէմ: Երկիրը ծանր տուրքեր է վճարում կառավարութեան՝ ենթացիկօրէն մեծ զնաններէ և Յասցած բնակչութիւնէ և թշուառութեան մասնկտրի Հանրութեան հասոյթը անբաւական է մարդկօրէն ապրելու, ուստի ծանր տուրքերը մեծ թշուառութիւն են առաջ բերում, և դրա հետեւանքը լինում է աստիճանական մահ: Հիւճակտը քաղաքական շտապել է... Մեր տնտեսական քաղաքականութիւնը վերջը վար սիտ է Օրինակի համար, առաջինը մէկ ու կէս անգամ մաքս է առնում, այսինքն 20 ոսկի արծող առաջի համար երեսուն ոսկի մաքս է առնում թիւրք համաստեօթիւնները պաշտպանելու նպատակով, սակայն միւս կողմից նորոգութեան կարօտ 400,000 տներ աւերակ են թուում: Եթէ դրամ էլ ունենանք, գործաւոր չենք գտնում: Այսքան սրբանոցներից փոխանակ որմնադիր և հիւան հասցնելու, նագաճախի խմբեր են կազմում և սնուէնք քարտուղարներ ու փոքր պաշտօնականներ են հասցնում: «Քիւրքերի Հարելին 95ը անօթի են», արտահմիկ անդադուում է գոյտորը:

«Գործաւոր», «արհեստաւոր» չկայ — սա ընդհանուր ազգայն է: Իրեւ զաւեշտ արձանագրելը, որ Անգորայում կառավարական շէնքեր կառուցանելու համար որմնադիր են վերտրում... Բազմաբնակ, իսկ Իգլիբլէք իրենց կոշիկները կափաւարու համար սզարկում են... Յանտեսան:

Ըստ Ֆէթիլի բէյի զահլիճի երկրագործական գործավար Հասան Ֆէշիլի բէյի յայտարարութեան, Քիւրքբայի 320 միլիոն արտավար մշակելի հողից 1924-ին միայն 48 միլիոն էր մշակւած, ուրիշ խոսքով, հողի մի եօթներորդ մասը:

Այսպիսի պայմաններում զարմանալի է և այն աճելի անդուլը, որ կայ պետական բիւռջէի մէջ և աւելորդական ըստաւում. մաքսային ընդհանուր տեսրիտութեան պաշտօնական վիճակագրութեան համաձայն այն տարւայ յուշիսի Քիւրքբայի ներածուը եղի է 13,779,695 և արտածուը 6,341,739 ոսկի, այսինքն կէսից էլ պակաս: Համեմատութիւնը մօտարրապէս նոյնն է և նախընթաց ամիսների համար: Այսպիսով, Քիւրքբան փաստօրէն ներկայացնում է մի անսակ զաղութ, եւրոպական պետութիւնների համար արտածութեան շուկայ և աննկատելի իկրով, բայց հաստատ քաջելով նորից ընկնում է եւրոպական զբամաւարութեան ճիւղանների մէջ: Պաշտօնական յայտարարութեամբ անցնու տարւայ բիւռջէի բացը եղի է 80 միլիոն ոսկի, իրապէս այդ թիւը շատ աւելի մեծ էր:

Անպաւանստիւթիւն, քայքայում ժողովրդական մարմնի քայքայում տնտեսական ասպարէզում — այսպէս է «վերածնունդ» հանրապետական Քիւրքբան Պատկերը աւելի կատարեալ անելու համար բերենք, հէնց թրքական աղբիւրներից, մի քանի նմոշներ, որոնք նկարագրում են երկրի դրութիւնը: Պոլիսն ու Իգլիբլէք արդէն յիշեցինք: Հակառակ ծայրահեղ անկման՝ ծովեղբերայ քաղաքները ուղղակի նախանձելի վիճակ ունին համեմատած երրի ներքերի հետ:

«Վաթան»-ի թղթակիցը այս տարւայ յունար-փետրարին ճամբարդութիւն կատարելով «Անատոլի ամսայի դաշտերում», հետեւեալ ուշադրու պատկերներն է գծում. Ամասիա-Ջիլէ «խճուղիի վրա 40 կիլոմէտր ձմեռապարհ կորեցիցնք, բայց միայն կից ճողրանկար-գիւղ տնտեսը Եթէ սրանք էլ չլինէին, մարդ իրեն անպատում պիտի կարծէր, Երբ մարդ Անատոլուում պտտէ, ամբողջ մեկութեան մէջ կը տեսնէ այն վիճակը, որին մասնաւոր ենք: Տկար, աղքատ և շատ վատուծ ենը: Մասնակց սկսած 150—160 կիլոմէտր տարածութեան վրա կէս միլիոն բնակչութիւն չկայ: Այլևս անիմաստ է կենդանիների գոյութեան վրա խորհել»:

Ջիլէից թղթակիցը մեկնում է «Եսայլը»-ով, որովհետեւ «Անատոլի 120 կիլոմէտրոնց ճամբան բաւական եղաւ, որպէսզի Ֆիւթի նոր ինքնաշարժը հանգստեան կաշէն: Եւ ձմեռապարհին «ինչէր ինչից չի լուծ» հայերի տեղահանութեան ու ջարդի և երկրի աւերման մասին: «Մի միջապէսի վրա, գրում է նա, աչքին առչեւ կենդանացում այս անոց, առանց զուլի և լծկակի դաշտի երբեմնի վիճակը: Երբեմն լիցուն էին այս տեղերը, իսկ հիմա մուտեալ վիճակ են պարզում: Տառնեակ Հագարուար երիտասարդներ զնացին ու չկիան: Եւ այժմ, երանց թողած խրճիթներում, պատու մայրերն ու սրբ աշնիկները հոգի պիտի տան մահւան հրեշտակին, այս անգութ օրերին Ախ, աւերակ Հարելիք...»

Թօքտում էլ նոյն տեսարանը. «Այգիները սրբ վիճակը ալամայ յիշեցնում է տար տարի առաջւայ կանանքը: Թօքտաը, որի մասին լսել էինք, թէ Հանդիլի և անատոլիական կինտրոն է, այժմ այրւած սրտով և մերկ դէմքով հեզնօրէն ծիծաղում է արդի վայրենութեան երեսին»:

Ինչպիսիւն-Փասթէմուլի ձանապարհին ունեցած տպաւորութիւնների մասին նոյն թղթակիցը գրում է. «Երբ ծովեղբերից 10 կիլոմէտր հեռանաք, կ'զգաք. թէ երկիրը որքան կարօտ է վերաշինութեան ժամերով և նոյն իսկ օրերով կը ճամբորդէք. բայց անկարելի է, որ մի անոց մշակւած հող տեսնէք... Փասթէմուլիի մէջ «միայն լուռները և մեռելները կը տիրապետեն... Խեղճ քաղաք: Իրական մեռելներից առաջ շատ կենդանի մեռելների էլ կարելի է հանդիպել: Կը տեսնէք մարդիկ, զիկիկոր և տաճանադին աչքերով, որոնք կարծես կեանքը բեռ են նկատում և խրջում են աշխարհից»:

Եւ քանի դէպի արեւելք էք գնում, այնքան քայքայումը դաւնում է տիրական ու սարսափելի Կաղզաւնը, այս «գեղեցիկ ու կանախաւոր գիւղաքաղաքը», «Իգտամ»-ի պատմելով, «այժմ» պարզապէս ազաւանների և բուերի օթեւան է դարձել...»:

Մեկէքնի թղթակիցը գրում է Էրզրումից. «Անատոլու ցնի բոյն է: Նոյն պատկերն են պարզում նաև Կարսը, Սորբկամիլը, Իգտիլը, Արտատոնը, Կոլքը, որ շէն էին, կըր ուռններից ստացանք... Էրզրումի բնակիչները հաշտին ծակերքով շինւած կամուրջները քանդում են և երանց տախտակներով աներ են շինում»: «Երբ մարդիկ տեսնեն այս մեծ և անպարտկելի քանդումները, չլի՛տի վճռեն, թէ մե՞նք միայն քանկելու տեղեւած ենք... Մեր այս կարճ խելքով չենք կարող երկիրը վերաշինել», անողոք վճիռ է արձակում թիւթը:

Տնտեսական գործադատութեան հրատարակած մի վիճա-  
կագրութեան համաձայն երեք տարւոյ ընթացքին 119 216  
կենդանի է զոչ գնացել պամարախտի, մտատարողէս 7  
միլիոն սակի ֆետտ պտածառերով... Երբորում տնային հա-  
մեմատութիւններ է ստացել թրաքոմը. բնակիչները հարկերի  
75ը վարակած է այս հիւանդութեամբ... Երբորում ուշագրտե-  
տերութիւնները մեկն էլ այն է որ զիւրերընակիչները քաղաք  
են գաղթում. զիւրացին չի կարողանում զիւրում ապրել,  
որովհետեւ իր արտադրածը բաւական չէ հոյն իսկ պետական  
տուրքերը վճարելու: Քրդական վերջին ապստամբութիւնը  
էլ աւելի արագացրեց քայքայման թափը. երկիրը էլ աւելի  
աւերւեց. յողովրդական անտեսութիւնը աւելի ևս փայտաւ.  
քրդաբնակ ամողջ շրջաններ ամայացան ու մեռան: Մեկէք-ի  
թիթակիցը հետեւում ձեւով է նկարագրում Երբորում վիճակը  
քրդական ապստամբութիւնից յետոյ. «Գինձի ընդատութիւնը  
անդամարձեց Երբորում տնտեսական գործունէութիւնը...  
Ըմբոստութեան զուգումի հետ պարպուցին նաև տնտեսական  
արտադրութեան գանձարանները: Մեր բունակի յառաջխա-  
ղացումով մի շարք զիւրերը բնակիչները վախեց փախան:  
Կառավարութիւնը հրամայեց արձանագրել այդ բնակիչները  
լքած գոյքերը և պահել: Ըմբոստութեան մտանկացողները  
ստացածքները անուրբով պիտի ձախւին և փոխարժէքը  
պետական գանձի հաստիք պիտի արձանագրուի: Ըմբոստու-  
թեան հետեւանքով օրէ օր աւելանում է որդիները: Անց-  
եալ տարի այս օրերին Երբորում իսկի օխան 30—40  
զորու էր և միւր 20—35 զրւշ, հիմա իւրը 100—140 և  
միւր 50—60 զրուշ է:

Եւ այս դեռ Երբորում, որին ապստամբութիւնը հա-  
մարեա չդիպաւ. պէտք է երեւակայել, թէ ի՞նչ է դրութիւնը  
ապստամբութեան բուն շրջաններում:

Քրդական շարժումը ահաւոր հարած էր նաև թրքա-  
կան դրամական վիճակին: Անկարող դրոշմ փոխառութիւն  
ստանալով՝ թիւրքերը զինեցին իրենց սովորական միջո-  
ցին—թալանին ու կողոպուտին, և ծայր աւառ հայերի լքեա  
գոյքերի վաճառքը, որ տևում է միեւնոյս այտոր: Աշխարհի  
աչքի առջև թիւրքերը ծախում են հայկական տներն ու  
կողոպտեցները և արդիւնքը լեցնում իրենց պարագ գանձա-  
րանը: Վերջին աւարն է, որ խռում է թրքական մորիւրը..

Վանի ու Ցարսիի վիճակը պտակիբացնելու համար,  
կարծում ենք, երկար խոսելու պէտք չկայ. ընթերցողները  
մտքի մէջ թարմ է դեռ, անշուշտ, «Ազաճ» թերթի թըղ-  
թակցի յօդածառարքը: Քաղցր միայն մի-երկու կտոր սկա-  
նաստի թիւրքի յօդածնեւերից. «Մուշը ներկայիս ամբողջապէս  
աւերակ է դարձել, դրում է նա: Աղիւսից ու Հոդից շինւած  
3—400 տներ կան: 70 քայլ երկարութեան վրա երկու կարգ  
խանութիւններ կան, որոնք օդ են ձախում... Երբ փողոցներն  
էք պտում, կարծում էք, թէ զերեզմանների միջից էք  
անցնում: Ո՛չ ծիծաղ, ո՛չ երգ, ո՛չ երածառութիւն, ո՛չ իսկ  
հայհոյանք»... Մշոյ գաղտնում Թաղաթիւ անուհով մեծ հայ  
զիւր կայ. հայերի առձի լինելուց յետոյ այնպիսի հաստատւած  
է Պէտրիւնի երեք կողմիցով 10 հիւրակ:

Ահա Վանի լճի հարաւային եզրերը նկարագրութիւնը.  
«Առաջ սուպատանաւեր և շոգեշարժ մեծ նաւեր են եղել

Վանի լճի վրա, մինչդեռ հիմա այդ ընդարձակ և կապույտ  
շրերի վրա միայն թռչուններ են տեսնում...»

«Դատուան առաջ մեծ զիւր էր, զուսուակի կենտրոն և  
նաւահանգիստ, հիմա միայն երեք տուն ունի... Լճի եզրերը  
քերելով անցանք զիւրերից, ուր իբրեւ կենդանութեան նշան  
միայն գերեզմաններ են մնացել:

«Գոթում Պապայում մեզ կերակուր տւին: Երբ մութը  
կոխեց, լամպի փոխարէն փայտ վառեցին, որովհետեւ ուրիշ  
վառելիք չուէին: Առաւօտ կանուխ ծամբայ ընկանք: Ութը  
ժամ ձիով ճամբորդելուց յետոյ հասանք Գարձիկան: Հեռուից  
երևաց մի կղզի — Աղթամար... Կղզու դիմացի զիւրը այժմ  
աւերակ է: Զիտը Գարձիկանից Ոստան եկանք: Ձիերը միայն  
խոտ են ուտում, որովհետև այս երկրում զարի չկայ: Քիբա  
առաջնորդը հեգօրէն ասաց. «Ի՞նչ զարի գտնենք, մե՛նք  
կուտենք»:

«Ոստանը առաջ 1500 տուն ունէր, այժմ 200 միայն  
կայ

«Յետոյ Երտաւէտ եկանք: Ետաւձ իմ, այս ի՛նչ  
զիւրեցութիւն 2000 աւերակներն են քնած այստեղ: Միայն  
80 տուն է մնացել...»

«Վան ենք: Թե՛նք Վան, այս ի՛նչ վիճակ է շինա մէկ  
ժամ ու քառորդ քայքայեցրեց աւերակների միջից: Աւերակ  
տների բեկորները լեցել են փողոցները, խանգարելով անցու-  
ղարձը... Խա՛ն, պահպնի... Զիւ՛յ... Վանը առաջ 60,000  
բնակիչ ունէր. հիմա 2800 հոգի է մնացել: Երկիրը տառա-  
պում է թըւառութիւնից: Բերդից մինչև Այգեօտան, մէկ ու  
կէս ժամ հեռաւորութեան վրա, ամէն կողմ՝ աւերակ է...  
Այսօր Վան անուհով քաղաք չկայ. միայն անուհի է մնացել  
Փողոցի ծառերի հարբերին սքաւանք կորած են...»

Եւ այսպէս անկիրճ կտրած, քանդած, աւերակ, աւե-  
րակ, աւերակ...

Երկիրը ամայացել ու վայրենացել է: Մշից ոտացւած  
տեղեկութիւնները ցոյց են աւելնում, որ ամբողջ Ցարսիի դաշտը  
ձածկւել է անանցանելի շամբերով, որոնց մէջ վիտում են  
վայրի գաղաններ: Մի տեղից ուրիշ տեղ անցնելու համար  
մարդիկ հաւաքում են խմբերով, դիւռում և այնպէս գնում,  
հակառակ դէպքում վայրի խոզերը, գայլերն ու արջերը յար-  
ձակում և յուրանում են եղէղի գաղտերի նեղ կամաններով  
անցնող ճամբորդներին...

Ահա «վերածնուող» «Երուզականացւած», «Հանրապետական»  
Թիւրքիայի իսկական պտակիքը՝ զձեռ իրենց իսկ թիւր-  
քերի ձեռքով: Թող չզփոթեցնեն մեզ փցուս խոսքերը լեզու-  
փոխութեան, ազատութեան, վերաշինութեան ու քաղաքա-  
կրթութեան մասին. իսկական Թիւրքիան այս է:

Աւելացնէ՛ սրա վրա և բազմաթիւ ուրիշ երևութիւննե-  
րը: Երբ—ազգային և արտաքին—քաղաքական—քրդական խըն-  
դիրը, կուսակցական մղելիքն պայքարը, ժողովրդի մէջ լեռ-  
նացած զգաւորութիւնը, բուլղարիկեան գուսերը, Եւրոպայի քա-  
ղաքականութիւնը, Մուսթաֆա Քէմալին շրջապատող թիւրքի  
արկածախնարութիւնները... Կարծում ենք, այսչափան էլ բա-  
ւական է ցոյց տալու համար, որ Թիւրքիան առանց կանգ  
աւանելու շարունակում է իր «քայքայման քաղաքականու-

Քիւնը: Արտաքին փայլն ու ժամանակաւոր յաջողութիւնները չեն կարող խաբել ուշադիր դիտողին. այն պրօցեսը, որ կատարուում է Քիւրքիայի ներքը, շատ աւելի խորն է ու տիրական, քան արտաքին սնտոյի "յաջողութիւնները": Քիւրքիայի քայքայումը օրգանական է և կախած չէ անձերից ու պատահական երեւոյթներից: Դա՛ւ այն սեղանաւորութիւնն է, որ սկսած է վարեր աւաջ է որ կարող է կանգ առնել սոսկ այն ժամանակ, երբ Քուրքը ժողովուրդը ամբողջի արգային սահմանների մէջ է իր տիրապետութեան տակ ունենայ այնքան հոգ, որքան իր համեստ ուժերը ի վիճակի կը լինին լեցնելու, կառավարելու, մշակելու ու ծաղկեցնելու: Սրբութեամբ իրապէս հրաժարելի համալսամական ու համաթուրանական աշխարհակալական ճրագներից և ազրի միայն Քիւրքիայի կեանքով, երբ Քուրքը քիւրդացի փոխանակ իր զաւակները բանակ քըելու ու թնայնօթի միտ զարձնելու, ներքէ հոգին ու աշխատանքին, երբ Քիւրքը մտաւորական խաւերը հասկանան, որ իրենցից կարու ուրիշ ժողովուրդներն էլ իրաւունք ունին տրիտակ սեփական տուն ունենալու, երբ Քիւրքը պետութիւնը իրապէս արդիւնաւոր քաղաքակրթութիւն — այն ժամանակ միայն կարող է խօսք լինել վերածնութեան ու վերաշինութեան մասին:

Ընդունակ կը լինին դրան Քիւրքերը—ցոյց կը առայ պագանն Առ այժմ՝ ժամանակը շարունակում է կռել այն զենքերը, օրի հարաձենից պիտի խորտակի շար սուլթանի ոսկի թախտը, որպէսզի նրա փառասանների տակից ձեւի ազատութիւնը նախ «հազար պզգաջ» վերջին մնացորդներին:

Ս. ՎՐՏՅԵՆ

ԱՏԼԱՆՏԵԱՆԻ ԱՓԵՐԷՆ

Ոչ շատ հարուստ, բայց մեր բարեկեցիկ գաղութներէն մէկն է եղած ամերիկահայութիւնը, որ, մանաւանդ, վերջին տասնամակիւն կրցած է լարել ուշադրութիւնը Երկրի և արտասահմանի մեր բոլոր հայրենակիցներու:

Ասուլջ, կենդանի, միշտ շարժուն ու, մանաւանդ, զգայուն, ան երկեցի է շարունակ պարտականութեան առաջին զինն վրայ՝ իր բազմամակն օգնութիւնները հասցնելով Երկրին, երբ ան գաղաբեր է ցաւի ու տառապանքի մէջ, կամ փութորակեր է անոր յեղափոխական մէկ մտակիլը — Վանը, Մուշը, Մասիսը, կամ Հայն ու Քաթալը ցտեմարաբի են բռնակեր, կամ հուսական զնտաններու մէջ են նետուր մեր մտաւորականութեան փայլուն ծաղիկները, կամ երբ պայթիլ է համաշխարհային պատերազմը ու իր վիթխարի ալիքները նետուր է մէկ անկիւն ձւարած ցուռ մը հայութեան վրայ ևս:

Ճիշտ է քնած որ մարդիկ քանի հետու սպրիտ իրենց հայրենի առնէն, այնքան կը ստաբիլն անով գրաւիչ ու իրական կը դառնայ իրենց համար անոր պատկերը, որուն հասնելու համար կը ստաբիլն ներարբերել ամէն ինչ, և՛ աշխատանք, և՛ վաստակ ու հարստութիւն, և՛ արիւն ու

կեանք: Անսահման հեռաւորութեան վրա նետուած այս գաղութն ալ, հոգեկան բազմահազար թիւերով կառուած իր հայրենիքին, սա մօտաւոր անցեալին ինչոր չէ գոհեր անոր, ու, մանաւանդ, խաղաղաւ տրամադրութիւնը արտերային բռնկումներով, որչափ երկուստարկ կեանքեր չէ նետու անոր գոհտեսչական առջև:

Եւ յանուն ինչի՞ այդ բոլորը, — պարզ է, որպէսզի իրականութիւն զանայ յեղափոխական սերունդներու երազը, զոր երգեցին նորերն ալ այնքան զմայլելի յափշտակութեամբ, որպէսզի ազատագրել զէթ մէկ մասնիկը մեր հայրենիքին, որ կը տարտի բռնաւորներու երկաթեայ կրունկներուն տակ, որպէսզի ժողովուրդ մը արեւտակասօրէն իրարմէ բաժնող ամբարտակները խորտակին և ցրիւ եկած արգային հասածները նորէն ձեռք մոկեն իրարու, որպէսզի վերջ գտնեն մեր յաւիտենական ու սպանիչ թափառանքները օտար երկիւղներու տակ, և մեկը նորէն համախառնից մեր հայրենի ձեռններուն շուրջը:

Գեղեցիկ հեռաւորակեր, որ կը լեցնէր ամէնքին սիրտը, և սրուն համար ամբարկահայութեան արքառ ու միայն ջրուտ բազուկներ ունեցող տարրը սքանչելի խոյանքներ սունեցաւ:

Բայց սա՛՝ փայլուն ու պաճառ երէկն էր մեր գաղութին ճրամարտութիւններու այնքան բարձր ու՛ զարմանալի մակրնթացութիւնը անակնկալ կեկողով տեղի տուաւ, երբ Հասարակական Հարապետութեան անկման սասանեցուցիչ լուրը իւրմբի մը պէս պայթեցաւ գաղութահայութեան զինին: Անհետացաւ, յանկարծ, շքեղ և շրջանցիչ անտիլ մը և հոգեկներու առաջ գծեցաւ պատկեր մը՝ մռթ մռ մռալլ, Յուսահատութիւնը աւելի շեշտեցաւ և յուստետութիւնն աւելի խորացաւ մեր մէջ, երբ նորէն մեր հրապարակը օրողեցին հայ ազգի յաւիտենական լքարատառուները, որոնք իրենց իմաստուն յորդորներով փորձեցին "խելքի բերել", մեր ժողովուրդը, զգատացնել զայն և թոյլ չտալ՝ որ յետ այսու այսքան խելայեղօրէն նետու հասնեցին մէջ, Երևան եկան տարեր, որտեղ իրենց լայկան տղազակներով, յուսահատութեան սպանիչ ձիգերով ջանացին մեզ համոզել, թէ այլևս ազգային հայր գոյութիւն չի կրնար ունենալ և խնդրութիւն է վազել հրազներու ետեւէ: Թէ պէտք է լուծելի քաղաքական կազմակերպութիւնները, որպէսզի գէթ արտասահմանի մեր բեկորները ազդիւրին նորանոր աղետներու բաղիւծէ: Թէ պէտք է վերջ գտնեն այլևս Ռուսին ու Քուրքին դէմ տօնքիշօթեան սուրբ ձօճելու մեր յաւակնութիւնները, լեւեցուցեք այս բարբիտ վրա, սխտեմատիկ և կազմակերպուած արշաւանքը մեր հակառակորդներու, որոնք իրենց «վերագահատութեան» փորձերուն մէջ անսահման մեղադրանքներ շարտեցին եւ ըլիւլայ գործիչներու և կուսակցութեան հասցէին, նստեցնելով գանոնք անգամ «պատճան»ի աթուրին վրա, այն սանն ձեզ համար դարձ կ'ըլլայ պատկերը մեր քառսին, որու առջև դէմ յանդիման դրաւ ինքզինքը անոր հայրութիւնը Փլնա արեւոք անոր ներքին աշխարհը Ո՛չ, բայց ձար, ուղղաձիգ ու շշմեցնող հարածը, գործած սխալներու գիտակցութիւնը յառաջ բերին անոր մէջ հոգեկան կարկանդակներ մը, որ անակնկալ կերպով տրկեց անոր սիրտն ու զգայունները, վե-

բաժնեցի զայն անխօս ու անշուշտ մարմին մը, փակելով նոյն-  
 իսկ անոր զգայուն ու զոգաբերող հոգու շարժը ակերը. և  
 այդ նոյնիսկ այն օրերուն, երբ Պարսկաստանի խորքերէն  
 հայ տարագիր մտաւարակաւութիւնը ելլալուական օգնութիւն  
 կը ինչպէս, այն օրերուն, երբ Իվլիքի եկեանը ցնցեց նոյն.  
 իսկ ամենահետաւոր օտարականի սիրտը, երբ Սուրբա, Յու-  
 նաստան, Պալքանները և ուլլար ետուած հայկական իրեակ-  
 ներ իրեցեց հառաչանքը կը հասցնէին մեզ... Երկիրը, ըստ  
 հայութիւնը չէր յուսահատած, ան տուլուն էր ինչպէս հառ-  
 տատուն կազմին իր պոլիտոմեայ թեւերով, որ չի ճկեր իր  
 մէջըք անգամ՝ կայմակներու հարւածին առջև, բայց վհա-  
 տած էր գաղութը, սրուն զգացումներն ու որոմադրու-  
 թիւնները երբեք չեն դիտցած չափ պահել, որ միշտ օրօրած  
 ու յափշտակած է երբ յայտի է շերմութեան աղօտ ճա-  
 ուղայթ մը ինկած է իր հիւանդ հոգու մէջ, բայց և հեշ-  
 տութեամբ սուղած ու կորուած է, երբ ալիք մը շեշտակի  
 ինկած է իր վրա:

Մեղուորը, սակայն, գաղութը չէ, որուն հոգեբանութիւնը  
 ամէն սեղ նոյնն է: Մայրաքիչ լաւատեսութիւն և անասճան  
 յուստեսութիւն,— ահա այն երկու բեւեռները, որոնց միջև կը  
 տարուբերին մայր հայրենիքին կուրած, հեռաւոր երկիր-  
 ներու փոքր հեռուած և միշտ պատրանքներու ենթակայ  
 հայկական բեկորները: Մեղուորը, իսկապէս դատապարտելին  
 մեր հակաւարդութիւնն են, որոնք մայրենի կուրակցական կիր-  
 քով և մութ ու ջիլ հաշիւներով, այս վերջին քանի մը ա-  
 չիւններու ընթացքին դիմացին ամէն տմարդի միջոցի, առանց  
 մտածելու, որ այդ կերպով կը քանդեն ամէն յենարան և կը  
 խորտակեն իրենց իսկ գոյութեան պատանդութիւնը: Այսանասե-  
 ներ կը պատմեն, և 1920ի մամուլը արդէն կենդանի վկայ  
 է, թէ երբ ինկած է Գարու, ստրուկ ու վատագի հակառա-  
 կորդներ ցնծութեան ու խախտանքի օրեր են ապրած՝ յայտ  
 բարելով, որ «Իշաշուկութեան ողնաշարը» կտորեցաւ վերջու-  
 պէս. երբ դեկտեմբեր 2ի միջառնակ իջած է Արարտանի  
 դաշտի հայութեան կրծքին վրա, զոհուած են այնպիսիներ, ո-  
 ռոնք զայն ողբունած են հեռագիրներ քաշելով միջև Մոսկուա  
 Երբ Հայաստանի բանաբը լցեցած են մեր մտաւարականներով  
 ու գործիչներով և պոլիտիկան կաջինը սկսած է իր ահաւոր  
 հուճեքը, լայն շունչ մը քաշած է հակադարձակցական խա-  
 տարգէտ խմբակը, որովհետեւ կը հոսրանային ուժից, ծաւ-  
 լուն և մարտական կազմակերպութեան մը շարքերը: Ա-  
 այնուհետեւ, առանց դու և դադարի և գործանալի յարա-  
 սանուութեամբ թունաւոր արհամարհանքի ու անդուպ, ծաղ-  
 րանքի աւարկայ կը դառնան և՛ կամաւորական շարժում, և՛  
 զանգեզուրեան կուլիներ, և՛ Զարաքիլիւն ու Սարտարապատ,  
 և՛ Ջանիկապատ ու Պէտլիք Վէտի, և կը պատմել միայն  
 վերջին պատմութիւնը, գուհաւորուած ամէն ինչ, գէղբերը  
 խեղաթիւրուած, փաստերը շրջուած...



Երկնային խաղաղութեան և անոր յաջորդող հո-  
 գեկան մեղուութեան ու կարկամութեան փոխարէն, այսօր  
 արդէն սկսած է նկատուիլ նոր շարժում— դրսեւորուած ու շափա-  
 ւոր և հուռու ամէն սլաքնակ չափազանցութիւններէ: Ման-  
 ձահարուած են երեւակայութիւնները և սեղի տած քաղաքա-

կան յուսանքիմը և տրամաբանելու զգացական եղանակը,  
 որ յատուկ էին մեր գործիչներուն խոր Ամէն ինչ սկսած է  
 իր բնական հունին մէջ մտնել: Վհատութիւնը, որ կործող որդի  
 մը պէս, սողոսկած էր ամէն կարգի հոգիներէ ներս, և  
 անտարբերութիւնը, որ արձնի ծանրութեամբ նստած էր  
 ամէնուն վրա, արդէն սեղի են տուած: Հարկաւ, մեր խօսքը  
 անոնց համար չէ, որոնք արուածելի հիւանդներ են, յեղ-  
 յեղուկ և իրականութենէ կտրուած: Այդպիսիներու համար  
 քաղաքական կազմակերպութիւնները օր մը սնորակիլի չա-  
 րիքներ են, ուրիշ օր մը փրկիչներ ու նախախնամական  
 օրհնութիւն. երրորդ օր մը խաբարացութեան գործիքներ, Հայ-  
 բնիկն ինչ է,— կայր, սլաքներով պայտանքի առարկայ  
 կամ ցնորած մտքերու յրաշխէ: Դարաւոր թշնամին արժանի  
 էր երեկ արհամարհանքի ու անինայ հարածի, այսօր  
 այլևս անմտութիւն է շատալ անոր առջև, քանի որ ան մեր  
 գլխին վերև կանգնած է յաղթողի կերպարանքով: Ռոտու՞մ  
 բեւեռէ բեւեռ: Ջարձեր ուրեմն խօսիլ ազգայիններու մտորն

Գայ, սակայն, ուրիշ զանգած մը, որ միշտ ունեցեր է  
 զիմագծութիւն՝ որշակի և յտակի: Դեպքերու, մեծ վերի-  
 վայրուներու հօր արդեցութեան տակ, ու երբեմն ցնցւոր  
 է. սխալ քարոզութիւններ չափով մը յաջողներ են նայինակ  
 մայրեցեցի զինքը և ինքնակամ ամբարխալին մտքի ու տրամա-  
 բանութեան մակարդակին վրա, բայց շուտ է զգատասցիւր և  
 նորէն երեւան եկեր իր ներքին ժողովներով և բնական ու-  
 ժով: Մեր խօսքը այդ զանգածի մասին է, որ, ինչպէս երեկ,  
 այսօր ևս կը դառնայ սուր կուռանը նոր դարձուներու և  
 յեղափոխական պայքարի, անխորտակելի պոտանկանը մեր  
 ազգային յայտերու և ակնկալութիւններու: Այդ զանգածը  
 առողջ է ամէնօրեք, առողջ է և ամերիկահայութեան մէջ:  
 Երկրի ժողովուրդի ամուր, հիւթալի ու դալար ճիւղն է ան,  
 որ պիտի չօտանայ, ցորչով անկէ կը ստանայ իր սուտը  
 և կ'ազրի անոր թաղ ու կենդանաբար շունչովը: Այդ գան-  
 ղուածը նորէն կը մնայ անգամ յեղափոխական մեծ կազմա-  
 կերպութեան կամ պտոյտ կուտայ անոր շուրջը՝ նման այն  
 թիթեռիկին, որ իր թեւերն ու իրանը վտանգու զնով չու-  
 չեր լոյսէն բաժնիլ: Գոտորած, տարագրութիւն, Հայաստանի  
 հանրապետութեան անկում, Երկրիկան ողբերգութիւն և անո-  
 նուկ խայտառակութիւններ Լոյսաններու մէջ — չեն սպան-  
 նած անոր հոգին, չեն խաթարած անոր դէմքը, չեն խորտա-  
 կած ակնկալութիւնները: Այդ բոլորը գայն աւելի իրատես ու  
 իրապաշտ դարձուցած են, հարկադրելով, որ յետ այսու  
 իր նաչուածքը առաւելապէս իր վրա սեւեռէ և չչոզեցեցէ  
 ինքզինքը երազային անպտուղ թափառումներով: 1918 Մայիս  
 28-ին անակնկալ կերպով մեր հորիզոնը պայծառացաւ և  
 մենք կրցանք զարեւու որդիութենէն չեմոյ՝ ազատութեան  
 փոշուած դրօշակը նորէն պարզել Արաբատի ստորաբը: Միայն  
 այդ, պայծառ ու լուսաւոր այդ թւականը բաւական  
 է, որ մեր ժողովուրդի ապատեանէն զանգածները ունենան  
 հաստատ ու անխորտակելի այն հաւատքը, թէ ազգային օրեր  
 միշտ կրնան ծագիլ Պատմութեան մէջ այն նր ժողովուրդին և  
 որ ազատութեան ասեւէն վագրէ և, ակեր և զոհեր և չէ  
 հասեր իր նպատակին, չէ ողջուներ իր ազգային փրկութեան  
 նաւահանգիստը: Ա՛նք փոթորիկի մը որոտներէն ու մեզ  
 հասցած անողք հարածներէն յետոյ, արդէն սքաւած մեր

ժողովուրդի ուսող մասը, ահգամ այս Հեռուար ամիսընկալման վրա, սկսած է արդէն այսպէս մտածել ու այսպէս ալ գործել: Մեր տեսած բոլոր նշանները կ'ապացուցանեն այս միութեամբարկուն ու սրտապնդիչ իրողութիւնը: Տանք մի քանի օրինակներ:

Ամենէն նկատելի, Հասարակ դիտողին Համար իսկ ակնբախ երևոյթն այն է, որ երէկայն այնքան սնանկ, ուսասպառող, բիւզանդական վէճերէն յետոյ, այլևս ջնտ շատերու նոյապաճըք դարձած է դէպի Հայաստան, որ այսօր կը նկատուի խարխիւր մեր բոլոր ակնկալութիւններուն: Կըզգանք որ մեր միակ զարկերակը Արարտետն դաշտի Հայութիւնն է, առանց որուն անհնար է շնչել, աղբիլ ու յարատեւել: Ու եթէ այսօր զայսուքիւ է մայր երկրի կապը զօրուար չէ, եթէ չի տեսնուիր երէկայն զոհարեութեան խորշիկ ու անհաշիւ թափը, եթէ չունի ներկայ Հայաստանը նախկին անդիմադրելի ձգողականութիւնը՝ իրեն քաջիկա ամէնքը, պատճառը միայն ու միայն այն սոսի խոր վարկէ կարծիքով կարճածն է, որ կը ցուցարդէ շարունակ այնպակ ու հրէշաւոր կողմեր, պատճառը մեր երկրի ինքնակոչ վարկէներու դէպի սրտասահմանի Հայութիւնը ցոյց տաւ այլամբժ ու սինիք վերաբերումն է, որ կ'սպասուի կը մերժէ իրեն երկարած ձեռքն իսկ: Թայց այդ՝ սրտուր պատմութիւն է, և մեր նպատակը չէ այժմ՝ անոր էջերը թլփոստել:

Այլևս ամէն ոք կը զգայ որ, սր ողէպք է ոչ միայն պահպանել մեր Համարները, այլև շատցնել, կրկնապատկել զայն: Երովհետև անկախութեան մեր ձգտումը երկունս գեանի և առաջնորդ վրա կառուցած կ'ըլլայ, եթէ մայրենի Հողէն յետոյ չունենանք մայրենի ժողովուրդ՝ պատկառելի իր քանակով: Ազգահաւաքման ձիգ մը, շարժում մը կայ, որ թէև չէ ձեռնարկուած շնորհիւ գանազան ոտնձգութիւններու, բայց արդէն կ'ողջունէ ամէնուն կողմէն Հաւատարակութիւնը: Կըզգանք որ Պաշտոնները, Պոլիս, Պրեստոս, Սելուստոս, Ամերիկա և այլուր նետուած Հայութիւնը կ'առնուի պիտի արտուի ժամանակի անհիւններուն տակ կ'առնուի դիւրամտութեամբ պատուապիտի կլուրի, եթէ օր առաջ անոր Հոտանքը չուղղուի դէպի երկիր: Ներկայիս Պոլսոյ, Յունաստանի, Միջագետքի անտէր ու թափառական Հայութիւնը երկիր կամ անոր մերձակայ վայրերը փոխադրելու գործը զազուրկահայութեան առաջ տարրի մտահոգութիւնն է դարձած: Այս մեր Կարմիր Խաչն այստեղ, որ խոշոր ձիգից Թափից այդ ուղարկեանքը: Նորէն մեղաւորը մենք չենք, եթէ այդ գեանի վրա ևս անպատկառելի խոշորտեներ կը կասեցնեն մեր ընթացքը:

Երկրի շինարարութիւնը նոյնպէս սկսած է խօսիլ ամէնուն սրտին: Ուժեղ, բարգաւաճ, անտեսապէս զօրուար ժողովուրդ մը միայն կարող է իրօք անկախ դուռնալ և իրականացնել Հեռագծտէ իր դարաւար երազները: Այս ճշմարտութիւնը կարծես կը գիտակցին ամէնքը: այդ է պատճառը, որ Հայաստանի մէջ ծախն մը շորցնելու, Հիւանդանոց մը հիմնելու, զգրողներու Համար գրքեր ու գիտական գործիքներ ուղարկելու որ և է ձեռնարկը մեկ անցեր ապարդիւն: Այդ է պատճառը, որ սրտազին ընդունելութեան արժանացաւ դաշնակցական օրաթերթի մը՝ "Հայրենիք" բացած սինակը՝ Երևանի սա վերջին աղետին զոչ դարձածներուն անմիջական

օգնութիւն Հասցնելու Համար: Որքան յուզիչ են եւս Ամերիկայի մէջ ցրած բազմաթիւ Հայրենակցականներու ձիգերը՝ Հիմնելու միջ երկրի սահմաններէն ներս նոր աւան մը, գիւղ մը, քաղաք մը, որոնք պատճառ պիտի գտանուէն եւս ասանեակ Հազարներու դարձին դէպի երկիր: Եթէ ստիժը Հարաւոր չէ տէր դաւանալու Սերաստիլ, Խարբերդի, Արարիկի ու Մալաթիայի, կարելի է, իրաւամբ կը մտածեն այդ երկրամասի գաւախները, շինել նոր Խարբերդ մը, նոր Արարիկ մը, նոր Մալաթիա մը՝ մեր սեփական Հողերուն վրա: Տասնեակ տարիներէ ի վեր դրամատուններու մէջ բանտարկուած խոշոր գումարներ պիտի սկսին համաց-համաց Հոսիլ դէպի երկիր, աւելցնելու Համար անոր ուժն ու զօրութիւնը:

Այս քանի օրինակներն ալ կը բաւեն բացատրելու մեր միտքը:

Այս բոլորէն վեր և ամենէն կարևորն այն է, որ նոյնը կը մնան մեր երևատարկութեան յեղափոխական ու ազգամական արամադրութիւնները, և այս անգամ՝ աւելի զգաստ, հասուն և աւելի Հաստատուն:

Մ. ՕՋԱՆԵԱՆ

## ԲԱՆՏԻՑ ԲԱՆՏ

(Բոլորացի Թարութիւնի բանտարկութիւնն ու փախուսը\*)

... Երբ տուն երկրորդ գանգը, և գնացքը պարասուում էր շարժելու, ժօտեցան երկու երկտասարկներ և "Նազան" ասորձանակներն ինձ ուղղելով՝ պահանջեցին անցապիս: Ծոյց աի:

— Մենք չէնք ձեզ էինք փնտռում, Հետեւեցէ՛ք մեզ, ստաց մէկը:

— Ովքեր էք դուք, ո՞ր է ձեր օրդերը ինձ բանտարկելու մասին. Հարցրի՛ք ես:

— Մենք Գէպէտի՞ \*\* գործակալներն ենք. ձեզ չենք բանտարկելու, այլ ժամանակաւորապէս յետ ենք պահելու գնացքից: Հետեւեցէ՛ք մեզ:

Պարզ էր, որ պիտի խոզարկէին ինձ: Պէտք էր մաքրութեամբ: Միակ առիթը, որ ներկայացաւ, ես օգտագործեցի: Գործակալներն ինձ այդ գնարկիցին վերցնել իրերս և

\*) Ընկ. Բուլղարացի Թարութիւնը — մեկը մեր յեղափոխական Համարձակ գործիչներից, Կուլուենանի փախուստի կազմակերպողը Գանձակի բանտից, սրի Համար ցարական դատարանից տաժանակիր աշխատանքի դատաւճիւր ստացաւ ու երկար տարիներ մնաց բանտարկուած-լուսին ճաշակեց և բոլշևիկեան բանտի Հրօպայտիները և միայն վերջերս կարողացաւ փախչել: Չէկայն ձիւրաններից: Իր բանաստիճան կանգը ու փախուստի պատմութիւնը իսկական վէպի նիւթ է: Մենք Հրատարակութեան ենք տալիս քաղաքացիներ նրա արկածներով իր գեղարուցումից:

\*\* Գէպէտ-Չէկայի փոխարինող Հիմնարկութիւն է՝ նման ցարական ժողովրդական վարչութեան, բայց աւելի լայն իրաւունքներով:



Հետևել իրենց: Ես վերցրի զամբիւղս, մի թևիս վրա գցեցի վերորդուս, իսկ ձեռքումս ունէի թղթերի մի փոքրիկ փաթեթ: Գործակիները հարցրին, թէ ո՞ր է իմ երկրորդ կապոցը: Նրանք, ուրե՛մ, տեղեկութիւն ունէին իմ ով լինելուս և հաս ինչ ունենալուս մասին: Կսուկած չկար՝ մասնաւոր էի: Իմ երկրորդ կապոցը դուած էր ինձանցի Հեռու ցոյց տւել և ինզրեցի, որ նեղութիւն կրին վերցնելու: Նրանցից մէկը բարձրացաւ, որ կապոցը վերցնել, միւսն ուշադրութիւնը ուրիշ կողմ էր: Այդ սկիզբարթը բառական ելաւ, որպէսզի ես բուռն մէջ ճգնեմ թղթի փաթեթը և զգուշութեամբ նետեմ նստարանի տակ:

Երբ ես վորո՞ս մտայ ու նստարանի վրա տեղ գրուեցի, դիմացս նստած էր մի Համակրելի դէմքով երկատարդ կին: Անմիջապէս ծանօթացայ Հետը: Ուսանողուհի էր: Մեր կարճատեւ խօսակցութիւնը երկրորդը, որ Հոսկակոմունիստ էր: Երբ Գէպէտի գործակա՛ններն ինձ հարց ու փորձ էին անում, նա ուշադրութեամբ հետեւում էր անցուցորձին և կարեկցական հայեացքներ նետում ինձ: Եւ երբ տեսաւ, որ ես նետեցի ճգնւած թուղթը, յայտայ ու սուրբ զգուշութեամբ հրեց աւել խոր նստարանի տակ:

Գործակա՛նները սխիչ չնկատեցին և առաջնորդեցին ինձ դէպի դուրս: Տարին երկամս զայն Գէպէտի կենտրոնը և ինձ մերկացնելով՝ սկսեցին հրատանել ինձ հարց ու լսել լսել տակ: Ուշադրութեան էին առնում ամէն մի կէտ: Տեղ չմտա, որ մի քանի անգամ շօշափելին, Հագին Տեսցել էր միայն վարտիքս. առաջարկեցին այն էլ հանել: Ես զայրացած՝ սկսեցի պտտալ:

— Ի՞նչ էք շարաբում ինձ: Ի՞նչ էք ուզում ինձանից: Ետէ՛ք, հա՛, այն էլ սուէք...

Ու կրճակները քսկած՝ երկու ձեռքով բռնել էի վարտիքը, երբ պետք տեսնելով գրուած վիճակ՝ բառականցաւ միայն վարտիքիս վրայից խուզարկելով. մի քանի անգամ շփեց վերից վար, նայեց ձայքերը — ոչինչ չգտաւ: Ես թեթեւ շունչ տալի:

Խուզարկութիւնը վերջանալուց յետոյ, շրքերս հաղայ ու հանգիստ նստելով մի աթոռի վրա՝ սկսեցի ծխել: Հերթը հասաւ զամբիւղիս: Բացին ու միջից հանեցին 36 հատ շերտ կաշի, երկու լաց կաշի, սպէսակեղէնս, նէշը ստացած զանազան իրեր: Այս բոլորը մէկիկ-մէկիկ ամենամանրադէրին քննութեան ենթարկեցին. ամէն մի զիր կամ՝ նշան ի նկատի էր առնում: Ապա բացին միւս կապոցս և միջին դուրս եկաւ... «Հայրենիք» ամսագրերի հաւաքածուն: Թանկագին զիւս էր որսկան շների ժամը:

Խուզարկութեան մասին արձանագրութիւն կազմելուց յետոյ, ինձ նստեցրին աւսօթիկ և նազաններն ինձ ուղղած երկու ժանդարմների ուղեկցութեամբ ուղարկեցին ինչ որ Հիմնարկութիւն: Ձմռանամ յիշել, որ բացի վերոյիշեալ իրերից խուզարկութեան ժամանակ ինձանից վերցրին 50 անգլիական սոկի, 2 չէրվոնց, 35,000 ռ. խորհրդային դրամ, ժամացոյցս՝ արժանէ զլթթայով, սուի մատանիս, ինքնահոս գրիչս, 10 ռ. սակեղամու՛ վերադարձրին միայն ձերմակեղէնս. Տեսցածը ամբողջապէս կորաւ ու կորաւ:

Մի ժամ յետոյ ինձ փոխադրեցին նահանգական Գէպէտուս, ուր լեցրել աւին մի վիճակացոյց — հարցարան և բանտարկեցին:

Երկու օր բանտում ուզահետց յետոյ, մի յատուկ զոր. ծակալի ուղեկցութեամբ ուղարկեցին Թարկով: Ծնաւարհի ծանխերի համար իմ դրամները ինձ տւին մի չէրվոնց և 35,000 ռ. խորհրդային փող, չսակայն ինձ ուղեկցող պաշտօնեան բռնի կերպով խից ինձանից չէրվոնցը՝ առելով. Թէ բանտարկեալ իրաւունք չունի այդքան դրամ ունենալու մօտը: Նրա դէմ՝ գանդաւանցի Թարկովի Գէպէտի պարեպոհին, բայց սա բառականացաւ միայն նրանից մի ստացական առնելով: Այդ ստացականը կցեցի Համահաստարան յատարարութեան և տի Գէպէտի պետին, բայց նա ակնելչ ետեւը գցեց:

Թարկովի Գէպէտուս՝ ինձ նկարեցուց յետոյ փոխադրեցին «Պող Սար» կուլած բանալը, ուր պաշտեցին ամբողջ մի ամիս: Բանտ չէր սա, այլ զոմիք: Ծարական շատ բանտեր՝ եմ տեսել, տարբեր եմ Օրլովի իր դոմանութիւններով հռչակուած բանտում, բայց դրանք արքայութիւն էին այս «Պող սար»-ի հետ Համեմատած: Ուղղակի սարսափելի էր. ամենաշատը 15 հոգու համար շինուած ցուրտ խցում լեցած էին շատ 45 հոգի: Մահճակալ ու անկողին կար. խող պէս թափուած էինք պետին. քնում էինք միմեանց սեղմւած: Միշտաները վխտում էին մի վրա: Սննեկում տիրում էր գորշահոտ: Օրական առկա էին մի ֆուսթ սե շաց, որ, յաճախ, կրճատում էր վերակացուների կողմից, և ինչ որ աղտոտ ու հոտած լսի: Այս էր ամբողջ սնունդը:

Մի ամբողջ ամիս այս Գեպէտի խողնոցում պաշտուց յետոյ, առաջին քննութեան ենթարկելու, ինձ փոխադրեցին Մոսկա և նետեցին Տագանիկ բանալը: Այստեղից տարին Գէպէտի նահանգային կենտրոնը և պահտեցեցին լեցնել վիճակացոյց-հարցարանը: Այստեղ առաջին անգամ զրեցի, որ դաշնակցական եմ: Հարցարանը բովանդակում էր Համարեա լիակատար կենսագրութիւնս: Նորից ինձ նկարեցին և զիշերը՝ «Սև ագրաւ» անունը կրող աւսօթիկով փոխադրեցին Բուստրիկի հռչակաւոր բանտը, ուր նոր հարցարան լեցնելուց յետոյ՝ տեղափոխեցին կարանտինային խցերից մէկում:

Այժե՛ երկու խօսքով նկարագրել այս՝ «Սև ագրաւ»-ը: Ամէն կողմից փակ և միայն առատաորից օդանոց ունեցող սե աւսօթիկ էր այն՝ նման այն փակ կառքերին, որոնց մէջ շներ են հաւաքում քաղաքի փողոցները: Այդ աւսօթիկով բանտարկեալներ են տեղափոխում մի բանտից միւսը կամ բանտից Գէպէտուս՝ «Սև ագրաւ»-ի երեւալը սարտուս էր աղբում քաղաքացիների վրա, որոնք աշխատում էին հեռու փախել նրանից: Եւ, իրօք, ինչ ահազողա բան էր այդ տարօրինակ ինքնաշարժը:

Տալը օր յետոյ նայն «Սև ագրաւով» ինձ տարին նահանգային Գէպէտուս: Մի սխեմաւոր պահակ առաջնորդեց մի սննեակ, ուր նստած էր մի երկատարուր Բարեւեցի նրան ուսներէն, բայց նա հրաւիրեց ինձ նստել հայերէնով:

- Հնչ էք, հարցրի ես:
- Այն, միթէ չէք ճանաչում,
- Ձեմ յիշում:
- Երեւանում միթէ տեսած չէք ինձ:
- Ձեմ յիշում:
- Բայց ես ձեզ լսա եմ՝ ճանաչում:
- Եսա ուրախ եմ, բայց ես ձեզ չեմ յիշում:

— Միթէ Կարտի մասին լսած չէք: Ես Կարտան եմ, իսկ զուք՝ Բուլղարացի Յարութիւնը:

— Ինչո՞ւմ էք ինձ մեղադրում

— Ես այժմ ձեզ մեղադրական չեմ կարող ներկայացնել. այդ կարելի երևանում. ես կանչել եմ ձեզ մի քիչ խտելու համար:

— Ինչո՞ւ:

— Ինչո՞ւ մեզ հանգիստ չէք թողնում, որ մենք մեր շինարարական աշխատանքով պարսպենք:

— Ի՞նչ ենք տեսնում մենք: Ձեր խօսքը ինչք մասին է:

— Դեռ ինչ էք անում: Դուք մուտքէրխտաներդ, Հայաստանի գանդակի մտերում իմքեր էք պահում և չէք թողնում մեզ՝ մեր շինարարական աշխատանքով զբաղելու:

— Խնդրում եմ ինձ չվիրաւորել. ես կենցեղումս մուտքէրխտ չեմ հղել, Ես չեզոքութեան եմ: Բաթումում ես եմ բուլղարացիներ շինել 1905-ին և կաւել Նիկոլայի կողակների դէմ: Այդ աթոռը ես եմ գրուել, իսկ այժմ՝ դ՛նք էք նստել վրան և ինձ հարցաքննում էք, որպէս հակոյդափոխականի: Աւագակախմբի դ՛նք էք պահում, որոնք օրը ցերեկով, վաղօրի մէջ, թալանեցին ինձ, և իմ գանդակներն էլ անհետեւանք թողիք:

— Ո՞ւր մասին է ձեր խօսքը

— Ձեր այն գործակալի, որ ինձ բերեց Խարկով:

— Մենք այդ հարցը դեռ կը քննենք, զույգէ այդպէս էլ հարկաւոր էր:

— Դուք այդ հարցը կը քննէք, թէ ոչ-ես չգիտեմ: Սակայն, փաստը այն է, որ Գէպեւնն իւրից իմ ամբողջ ունեցած-չունեցածս, իսկ նրա մի պաշտօնեան էլ թալանեց ինձ ճանապարհիս: Եւ այժմ ես Յուն եմ սոված. ձեր տւած մի ֆուխթ օւ հացով ապրել չի լինի:

— Ի՞նչ արած. ինչփոխական էք, պէտք է համբերէք:

— Անելիք չունիմ. բայց ես Նիկոլայի ժամանակ վեց տարւայ տաժանակիր աշխատանքի եմ դատապարտուել, սակայն այն ժամանակ ինձ թոյլ տրւում էր սեփական դրամով անունը ստանալ:

— Մենք էլ թոյլ կը տան, երբ ստանանք ձեր դրամները. բայց ձեր դրամների մասին ոչինչ չի աււած մեզ հասած թղթերի մէջ:

Ինչպէ՞ս չի աււած. երկու տեղ արձանագրեցին:

— Մեր ստացած թղթերում չկայ, բայց մենք կը պահանջենք: Ինչո՞ւ ստացական չ'իւրջրիք:

— Պահանջեցի, բայց չտրին:

Այդպէս, ուրեմն, իմ իրերս անուշ էին արել ինձ ձեր բակալովները — սովորական երեւոյթ՝ բանւորապիւղադատական՝ երջանիկ աշխարհում:

— Դուք ասում էք, թէ Հայաստանում ոչինչ չէք անում, սկսեց նորից քննիչը, հապա ինչ էր Արարելիւսայի տէնօրը:

— Ի՞նչ աէնօր:

— Ի՞նչ տէնօր — կարծես չգիտէք: Արարելիւսայի երկու կողմնիսաների սպանութեան մասին տեղեկութիւն չունէ՞ք: Այդ ինչպէ՞ս դաշնակցական էք, որ Հայաստանի հողի վրա Քիճիկի կենտրոնական կոմիտէն է տէնօրներ անում:

— Ես լրագրում կարգացել եմ՝ այդ սպանութեան մասին, բայց կործում եմ, որ դա մասնաւոր բան է և ոչ մի կապ չունի Դաշնակցութեան հետ, որովհետեւ Ն. Յ. Գուշակցութիւնը նաև գործունէութիւն չունի երկրում, ես հասկանալի է ակտիւ քայլերի իշխանութեան դէմ: Եւ, վերջապէս, եթէ տէնօրի պէտք լինէր, ինչո՞ւ պիտի Քիճիկի կենտր. կոմիտէն անէր. ի՞նչ է, կարծում էք, որ Հայաստանում տէնօրիստ չի ճարել:

— Ի հարկէ, կը ճարելի Ես գիտեմ, որ Դաշնակցութիւնը Հայաստանում տէնօրիստ կը ճարէ, բայց փաստը այն է, որ Կորիւնի կարգադրութեամբ, Լուսեցեանի միջոցով, Գալօն և ընկերներն են կատարել այդ տէնօրը: Միք ձեռքում Լուսեցեանի նամակը կայ:

— Կրկնում եմ, այդ ճիշտ չէ, Հայաստանում Դաշնակցութիւնը ակտիւ գործունէութիւն չունի:

— Դուք այդ մասին ի՞նչ անտեղեկ էք և գիտե՞նք Արեգօլի դաշնակցականները:

— Այդ էլ նրանցից հարցրէք:

— Դուք ասում էք, թէ Հայաստանում ակտիւ գործունէութիւն չունէք, հապա ինչ էր փետրուարեան ապստամբութիւնը:

— Այդ ժողովրդական ապստամբութիւն էր և արդիւնք էր Արիստիքի ու Կասեանների քաղաքականութեան:

— Ձե՞ որ այդ ապստամբութիւնը զիկավարում էր Դաշնակցութիւնը:

— Այո, Դաշնակցութիւնն է զիկավարել: Նա չէր կարող թողնել, որ երկիրը մասնիկ անիշխանութեան և սովորած էր ստանձնել զիկավարութիւնը: Եթէ այսօր էլ նման բան պատահի, Դաշնակցութիւնը նոյնը կանի:

— Դուք ասում էք՝ իմքեր չէք պահում, հապա ինչ է Բաշ-գաւնեցի Արտուշը. չե՞ որ դուք երա հետ յարաբերութեան մէջ էիք և նոյն իսկ ես ձեզ մօտ ուղարկեց Սուրէնին և ընկերօջը փամփուշտ ստանալու համար և ընկնելով մեր ձեռքը՝ զնգախհարւեց:

— Հէնց այդ ցոյց է տալիս, որ մենք նրանց հետ կապ չենք ունեցել, որովհետեւ, եթէ կապ ունենայիք, նրանք կը գային ուղարկել մեր մօտ և ձեր ձեռքը չէին ընկնի:

— Անշո՞ւշտ, զուք էլ չէիք ընկնի մեր ձեռքը, բայց ընկաք:

— Ի՞մ ընկնելը բոլորովին տարբեր է:

— Ինչո՞ւ էիք գնացել Պարսկաստան:

— Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ նահանջել հնք:

— Խօսքս նահանջի մասին չէ, Հայաստան վերադառնալուց յետոյ էլ գնացել էք:

— Սխալ է, չեմ գնացել:

— Մենք հաստատ տեղեկութիւն ունինք, գնացել էք:

— Ճիշտ չէ, չեմ գնացել:

— Ինչո՞ւ էք գնացել արասահման:

— Ձե՛մ գնացել:

— Ի՞նչ գործ ունէիք Տիրասպօլում:

— Ես Տիրասպօլում չեմ հղել:

Մտօրցոյ մի անունը նամակ էր աււուել, որ մի սիրաս-

պայլ տւել էր թիֆլիս տանելու: Քննիչը դրանից հետեւ-  
ցնում էր, որ ես եկել եմ Տիրասպօլում և աշխտում էր  
սպայապոստանել, որ եկել եմ արտասահմանից: Նրա բոլոր  
ջանքերն ինձանից մի բան իմանալու անցան սպարդիւն:  
Յետոյ սկսեց զրի առևել մեր խօսակցութիւնը, ուստեղէն  
Աչքիս տակով կարդացի վերջին նախապատմութիւնը. «Եթէ ես  
զիտանայի, որ Գորիւնը Հայաստանում տէւօր պիտի կազմա-  
կերպէր, թայլ չէի տայ...»

— Այդ ինչ էք գրում. ես ոչիպիտի բան չեմ տեսի,  
զիմեցի նրան:

— Դուք ուստեղէն լաւ չգիտէք, դրա համար էլ ձեզ  
անհատականի է, առարկեց ես՝ նախապէս կարդալով այդ  
կտորը:

— Ես ուստեղէն ազատ չեմ խօսում, բայց լաւ եմ  
հասկանում: Ես ձեզ նման բան չեմ տեսի, որ գրում էք:  
Դեռ մի կզգամ թողնենք, որ թիֆլիսի դաշնակցականները  
Հայաստանում տէւօր կատարել չէին կարող:

— Տեսնում էք, որ չէք հասկացել: Այստեղ ձեզ հա-  
մար վտանգաւոր բան չկայ Օրինակ, եթէ դուք գիտնայիք,  
որ մի մարդ սպանելու է մի ուրիշին, ինչ կանէիք, թայլ չէիք  
տայ, չէ՞ նեղուալար, եթէ գիտնայիք, որ թիֆլիսի կամ-  
տէն տէւօր է կատարելու, չէիք թողնի, այնպէս չէ:

— Աւաջիլիք՝ ես դեմ եմ տէւօրի: Յետոյ, տէւօրը  
կատարողը կամ մարդ ոգանողը ինչու պիտի տեսր ինձ, որ  
ես թողնի կամ չթողնի, եթէ գոչ ինձ մկարդելու բան  
ունէք, խնդրեմ ուղղակի յայտնեցէք. եթէ ոչ. կողմնակի  
հարցերի չեմ պատասխանի:

— Լաւ, այդ հարցերը թողնենք. ինչու գնացիք արտա-  
սահման:

— Մինչև մեղադրական չներկայացնէք, ես չեմ պա-  
տասխանել:

— Ես ձեզ տանն ահգամ կը կանչեմ, լաւ կանէք, պա-  
տասխանէք:

— Քուստուն անգամ էլ կանչէք, ինձանից ոչինչ չէք  
իմանայ:

— Ես ձեզ կուղարկեմ Երևան:

— Շատ էլ լաւ կանէք:

— Բայց գիտէ՞ք, այստեղ Չէկո կայ, և կարող են ձեզ  
զեկակահարել:

— Ես շատ անգամ եմ մահան բաց աչքով նայի:

— Ուրեմն, ստորագրեցէք այստեղ, ցոյց տւեց նա իր  
գրած թուղթը:

— Ես այդ թուղթը չեմ ստորագրի:

— Կը տուճէք:

Ու կանչելով պահակին՝ կարգադրեց, որ տանեն Մինչև  
զիշեր պահելուց յետոյ՝ նոյն «սև աքրա»-ով փոխադրեցին ինձ  
Բուսիկակալի բանտը:

(Շարունակելի)

# ԼՕՔԱՐՆՆՈ

Լըբարնօն, գեղեցիկան այս փոքրիկ քաղաքը, պատ-  
մական անուն է այսուհետև: Այնտեղ ստորագրեցին,  
հոկտեմբերի 16-ին, Գերմանիայի և Դաշնակից պետու-  
թիւնների միջև ապահովութեան դաշնագրին ու իրա-  
ւարարութեան (arbitrage) համաձայնագրերը, որոնք  
առանց չափազանցութեան, Վէրսալից ասդին, ամենա-  
խոշոր քաղաքական կտեսն են համաշխարհային խա-  
ղաղութիւնը ամրապնդելու տեսակէտից: Եւ որովհետև  
Լըբարնօի խորհրդաժողովում կըբւած այդ վաւերագրերն  
այսուհետև յաճախ պիտի յիշուին քաղաքական կեանս,  
քուժ, օգտակար կը լինի Կանգաւամօրէն ծանրանալ  
նրանց էութեան ու արժէքի վրա:

Պատերազմից յետոյ առաջին անգամը չէ, որ պե-  
տութիւնները հրաւիրում են խորհրդաժողովներ և  
միջոցներ են փնտրում աշխարհը խաղաղացնելու: Բայց  
սակն անգամ գայթակղութեան քար էր հանդիսանում  
Ֆրանս-գերմանական յարաբերութիւնը և այս երկու  
երկրներին սահմանների ապահովութեան խնդիրը: Վէր-  
սալի վեհաժողովի միջոցին, Անգլիան ու Միացեալ  
Նահանգները յանձնառու էին եղի պաշտպանել Ֆրանս-  
սիային գերմանական յարձակման դէպքում, բայց Ամե-  
րիկայի մերժումը վաւերացնել Վէրսալի դաշնագիրը՝  
վերացրեց և այս յանձնարարութիւնը: Այնուհետև Ֆրանս-  
սիան անյաջող փորձեր արւա հասկացողութեան գաւառ  
Անգլիայի հետ նոյն սահմանային հարցի մասին: Միև-  
նոյն նպատակին ձգտող, բայց դարձեալ անյաջող քայլ  
էր Ռուսի գրաւումը: Իր սահմանների ապահովութիւնն  
էր որոնում Ֆրանսիան և ժընեվի պրօտօկոլի մէջ, որի  
նպատակն էր ապահովել բոլոր պետութիւնների ան-  
անձնութիւնը: Եւ որը, սակայն, ջուրն ընկաւ ան-  
զիւական պահանջականների ջանքերով: Բոլոր փորձե-  
րից ու փորձութիւններից յետոյ՝ Ֆրանսիան սկսեց  
համոզել, որ ապահովութեան հասնելու ուղիղ ճանա-  
պարհը ոչ թէ թշնամական կրքերի հրահրումն է Գեր-  
մանիայի դէմ, այլ մերձեցումն ու փոխադարձ շահերի  
համաձայնեցումը: Այդ է պատճառը, որ Ֆրանսիական  
կառավարութիւնն ու հանրային կարծիքը շատ չվարանեց  
և հեշտութեամբ ընդառաջ գնաց գերմանական կառա-  
վարութեան փետրաբարն արած առաջարկութեան Ֆրանս-  
սիայի և Բելգիայի հետ սահմանային անձնութիւնը:  
Թեան ապահովագիր կըբւելու մասին Գերմանական այդ  
գիմումը, վեց ամսայ գիւնապիտական զբաղրութիւն-  
ներից ու խորհրդակցութիւններից յետոյ, վերածեց  
Լըբարնօի խորհրդաժողովին, որին մասնակցեցին Ան-  
գլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսիայի, Բելգիայի,  
Իսկ վերջին մասում նաև Լեհաստանի ու Չեխօսլովա-  
կիայի ներկայացուցիչները,

Լըբարնօի բանակցութիւնն երի հիմնական նիւթն էին  
կազմում՝ 1) Գերմանիայի և Ֆրանսիայի, Բելգիայի,  
Լեհաստանի ու Չեխօսլովակիայի սահմանների ապահո-

վութիւնը համաձայն Վերսայի դաշնագրի. 2) Գերմանո-վեհական և գերմանո-չեխօսյովական սպահովութեան դաշնագրերի երաշխաւորումը Ֆրանսիայի կողմից. 3) Գերմանիայի մուտքը Ազգերի Լիգայի մէջ. 4) Ընդհանուր սպահովութեան դաշնագրի կնքումը:

Պետութիւնների վերաբերումը դեպի զբաղ չարքերը յայտնուում էր հետեւեւալ ձեւով. Ֆրանսիան՝ իր հետն ունենալով Լեհաստանն ու Չեխօսյովակիան՝ պընդուն էր, որ սահմանների սպահովութեան խնդիրը զբաղ իր ամբողջութեան մէջ, այսինքն հռենոսեան և արեւելեան սահմանները երաշխաւորելն միւնտին դաշնագրով, այն ինչ Գերմանիան կտրականապէս մերժում էր նման կապակցութիւն: Եթէ իր արեւմտեան սահմանների նկատմամբ նա ընդունում էր Վերսայի դաշնագիրը անառկելի, արեւելեան սահմանների հանդէպ նա մնում էր անհշատ և չէր ծածկում իր ձգտումը վերաքննութեան ենթարկելու այդ սահմանները: Այս գրութիւնը, բնականաբար, չէր կարող չլուզել Լեհաստանն ու Չեխօսյովակիան, որոնք համոզեցին Ֆրանսիային պնդել, որպէսզի ո՛չ միայն արեւելեան սահմանների հարցը քննել հռենոսեան սահմանների հետ միաժամանակ, այլև Գերմանիայի և Լեհաստանի ու Չեխօսյովակիայի միջև կնքելիք իրաւարարութեան դաշնագիրը սպահովել Ֆրանսիայի կողմից: Այս դէմ զուրկ եկան ո՛չ միայն Գերմանիան, այլև Անգլիան ու Բելգիան, որոնք գտնում էին, որ արեւելեան սահմանների հարցը իրենց չի վերաբերում և չի կարող կապուել արեւմտեան սահմանների հետ:

Կարծիքների սուր ներհակութիւն կար և Գերմանիայի Ազգերի Լիգայի մէջ մտնելու պայմանի շուրջը. Գերմանիան մասնաւորապէս առարկում էր Ազգ. Լիգայի կանոնագրի 16-րդ յօդուակի գէժ, որի համաձայն Ազգ. Լիգայի անդամը պարտաւոր է, Ազգ. Լիգայի անդամներից մէկի վրա կատարած յարձակման դէպքում. գիմել տնտեսական ու ազգամական միջոցների ընդգէժ յարձակողի, և իր հողի վրայից անցկացնել Ազգ. Լիգայի անգամ պետութիւնների զորքերը, որոնք ուղղուում են յարձակողի դէմ: Այս կէտը հպատակ էր Ռապալիօ դաշնագրին, որով Գերմանիան պարտաւորւած էր որևէ քայլ չառնել խորհրդ. Ռուսաստանի դէմ: Նոյն խնդրի հետ էր կապուած և Չիլիբիի վերջին ծամբորդութիւնը Վարշաւա ու Բերլին և, առհասարակ, բոլորեւեկ զիւսանապետութեան յարուցած ազմուկը:

Լօբաբնօի խորհրդաժողովի իրադարձութիւնները ցոյց աւելն, որ հէնց այս երկու հարցերի շուրջն էին պատուած բոլոր վէճերն ու աւարակարծութիւնները: Թե՛ հ՛ն է անցնող-դարձի ներքը, խորհրդաժողովի տաքապայմանօրէն գաղտնի հաւաքովներում, դժւար է ասել, ո՛չ մի խորհրդաժողով վերջին վարադուրած չի եղել այնքան խորհրդաւոր գաղտնապահութեամբ, որքան Լօբաբնօինը: Արդիւնքը, սակայն, այն ցի սիստաթիցի էր, որոնք ստորագրուեցին հոկտ. 16-ին և յանձնուեցին պետութիւններին ի վաւերացում, ցոյց և տալիս, որ թէ՛ և ներքին պաշարը եղել է շատ ուժգին, բայց

կողմն ի վերջոյ եկել են համաձայնութեան: Ատորագրուած փաստաթղթերը իրենց բովանդակութեամբ որոգով, ընդհանուր առմամբ, կարող են համարուել դրական նշանում խաղաղութեան ջատագոյնների համար: Աչքի է ընկնում նախ այն, որ խորհրդաժողովին մասնակցող կողմերը ներկայացուած են ըստ ամենայնի հաւասար հիմքերի վրա, մի բան, որ պատերազմից այս կողմ չի եղել և ո՛չ մի խորհրդաժողովում: Իբրև հետեւանք սրա, Գերմանիան նորից մուտք է գործում մեկ անգամը, և այս հանգամանք, անշուշտ, մեծապէս կանգնադաշնայ յետագայ դէպքերի վրա: Կանգ առնելի մտնումն արևած զձիւնների վրա:

Ինչպէս յիշեցինք, Լօբաբնօի խորհրդաժողովը հոկտեմբեր 16-ին ստորագրեց ինչ փաստաթուղթ, որոնցից ամենակարեւորը երաշխաւորութեան դաշնագրին է Գերմանիայի. Բելգիայի, Ֆրանսիայի, Մեծ-Բրիտանիայի և Իտալիայի միջև: Այդ դաշնագրով վերոյիշեալ հինգ պետութիւնները՝ «երաշխաւորում են անհատաբար և հաւաքականօրէն»՝ Վերսայի դաշնագրով հաստատուած սահմանների անձեռնմխելութիւնը Գերմանիայի ու Բելգիայի և Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև, ինչպէս նաև Վերսայի դաշնագրի 42 և 43 յօդուակների անընդունելիութիւնը: Այս յօդուակներից առաջինով Գերմանիային արգիւնում է պահել կամ կառուցուել ամբողջութեամբ հռենոս ձախափին և ուր կողմը 50 կիլոմետր տարածութեան վրա, իսկ վերջինով թոյլ չի տրուում յիշեալ շրջանում ունենալ զորք կամ զորաշարժը հետադարձը ներթական միջոցներու Սպալիտով, ինչ վերաբերում է արևմտեան սահմաններին, Հինտներուրդի Գերմանիան ամբողջապէս ընդունում է Ֆրանսա-բելգիական տեսակետը՝ փոխաբերել սասնալով խոստում ապտուել ֆէոնի շրջանը դաշնակիցների դրաւուով, որով յօդու և ցնդում գերման ազգայնականների պահանջը՝ «պատուել Վերսայի դաշնագիրը»:

Դաշնագրի երկրորդ յօդուածը ասում է. «Գերմանիան ու Բելգիան, ինչպէս նաև Գերմանիան ու Ֆրանսիան ու փոխադարձաբար պարտաւորում են միմեանց վերաբերմամբ չզիմել յարձակման ու ներխուժման և ո՛չ մի պարագայում պատերազմի շնորհակցելի» \*): Դաշնագրի ամենագլխաւոր մասը հէնց այս է՝— «Ոչ մի պատերազմ պատերազմի չձեռնարկել»): Հարցը, սակայն, սկզբունքը յայտարարելու մէջը չէ, այլ այդ սկզբունքը կիրառելու: Ինչպէ՛ս անել, որ ժողովուրդների միջև ծագող վէճերը հարթուին խաղաղ միջոցներով: Դաշնագրի երրորդ կէտը տալիս է դրա պատասխանը. պե-

\*) Բացառութիւն կազմում են հետեւեւալ դէպքերը, երբ արտուում է պատերազմի իրմբը. 1) երբ պէտք է լինում «գործարկել օրինական իրենապաշտպանութեան իրաւունքը», 2) երբ այդ թիւարուում է Ազգերի Լիգայի կանոնագրի 16-րդ յօդուակով կամ 3) երբ յատուկ որոշում է անում Ազգերի Լիգայի ժողովը կամ խորհրդարանը:

տութիւններէ միջև տարակարծիքութիւն առաջ բերող և զիւանագիտական միջոցով լուծուած շտտցող բոլոր հարցերն անխտիր, ինչ բնոյթ էլ որ ունենան, պէտք է լուծելն խաղաղ ձևաւարարձով՝ իրաւարարութեան կամ միջովգայիւն զատարարի միջոցով, ուր վերջինն խօսքը պատկանում է ԼաՏէի Միջազգային Ատեանին կամ Ազգերի Լիգային: Գտտի ու իրաւարարութեան մանրամասնութիւնները ձեւակերպուած են գերմանո-բելգիական, գերմանո-ֆրանսիական, գերմանո-լեհական և գերմանո-չեխոսլովակական շրջա առանձին համաձայ. նագրերի մէջ: Եւտ այս վերջիններէ գոյութիւն ունեցող դաշնագրից բխող վէճերը լուծուած են "Մշտական Լաշտարար Թանձաժողով" անունը կրող յատուկ մար. միւնիսթի միջոցով, որոնք ստեղծուած են Լօբարնօի դաշ. նագրի հիման վրա: "Մշտական Լաշտարար Թանձաժո. ղով" ներքը պիտի բաղկանան 5 հոգուց, որոնցից մէկ. մէկ հոգի նշանակելու են վիճող կողմերը իրենց հպատակ. ներից, իսկ միւս երեքը պիտի ընտրուին օտար հպատակ. ներից՝ վիճող կողմերի համաձայնութեամբ: Լաժաձայ. նութիւն չեղած գէպքում յանձնաժողովի երեք անդամ. ներին նշանակելու է Զւիցերիայի հանրապետութեան նախագահը:

Եթէ, սակայն, հակառակ ստանձած պարտաւորութիւններ կողմերից մէկը չուզենայ ենթարկել դաշնագրին կամ խախտի նրան, դաշնագրի 4 և 5-րդ կէտերը նախատեսուած են հետեւեալ միջոցներ. եթէ կողմերից մէկը կարծուած է, որ տեղի է ունեցել դաշնագրի խախտում, պարտական է հարցը անմիջապէս դնել Ազգերի Լիգայի խորհրդի առջև: Աերջինը եթէ համոզուի, որ, իբրք, կատարել է դաշնագրի խախտում, անյապաղ դաշնագիր կողմերին պիտի հրահարէ օգնութեան հասնել բունութեան ենթարկած պետութեան: Եթէ տեղի է ունեցել "անխայտնի խախտում", դաշնագիր կողմերը կարող են օգնութեան փութալ և առանց Ազգ. Լիգայի խորհրդի որոշման: Այսպէսով, ուրեմն, հոնոսեան սահմանների սպահովութիւնը ստանձնում են և Անգլիան ու Իտալիան, մի բան, որից մինչև այժմ խուսափում էին անէն կերպի դաշնագրի այս կէտը անպայման յալ. թանակ է ֆրանսիական զիւանագիտութեան համար:

Դաշնագրի միւս 5 կէտերը եակուն նշանակութիւն չունին: Նրանք սուում են, որ վէրայիլի դաշնագրից և նրանից յետոյ կնքուած համապայտագրեր, որոնց շար. քին և Գոուսի ծրագիրը, պիտի մնան անվթար, որ Ազգերի Լիգայի իրաւունքները չեն սահմանափակուած, որ դաշնագիրը պարտաւորեցուցիչ չէ Բրիտանական Գոմի. նիսների կամ Էնգլիստանի համար և այլն: Աերջին՝ 10-րդ յօդուածը յայտնում է, որ "դաշնագրից" ոյժի մէջ էր մտնէ, երբ բոլորի կողմից կը լինի վաւերացում և երբ Գերմանիան դառնայ Ազգերի Լիգայի անդամ:

Միւս ութը վաւերագրերի վրա մենք առանձնապէս չենք ծանրանայ: Ասացինք արդէն, որ չորսը իրաւարարութեան համաձայնագրեր են Գերմանիայի ու Բելգիայի, Գերմանիայի ու Ֆրանսիայի, Գերմանիայի ու Լեհաստանի և Գերմանիայի ու Չեխոսլովակիայի միջև: Եթէ նաք և այն, որ Լեհաստանն ու Չեխոսլովակիան հիմնական դաշնագրի անդամներ չեն և, հետեւաբար, նրանք սահմանների վերաբերմամբ Անգլիան, Իտալիան, Բելգիան ու Ֆրանսիան որոշ պարտաւորութիւններ ստանձնած չեն: Արանով, կարծես, աւուում է, որ Գերմանիան ազատ է իր տրեւելեան սահմանների հարցում: Եւ գերմանո-լեհական դաշնագրերի որոշ կէտերն էլ խմբագրուած են այնպէս, որ Գերմանիայի համար բաց դուռ է թողնուած ապագային, զիւանագիտական միջոցներով. վերաբնութեան առարկայ դարձնելու արեւելեան սահմանների ինչպէս: Ասկայն, Լեհաստանի վախերը գէթ մասամբ փարստելու նպատակով, նոյն հոդու. 16-ին, Լօբարնօում, ստորագրուած է համաձայնութիւն Ֆրանսիայի ու Լեհաստանի և Ֆրանսիայի ու Չեխոսլովակիայի միջև, որով դաշնագիր կողմերը պարտաւորուած են փոխադարձաբար օգնել միմեանց, եթէ Գերմանիան խախտէ մէկն ու մէկն սահմանները: Արիւ խոսքով, Ֆրանսիան իր հովանաւորութեան տակ է աւելուած լեհական սահմանները ընդգէմ՝ գերմանական վտանգի:

Աւթերորդ վաւերագիրը մի նաւակ է, որ խորհրդ. դաժողովի անդամները ուղղում են գերման պատերազմութեան մեկնաբանելու համար Ազգերի Լիգայի կառնտարի 16-րդ յօդուածը: Լաժաձայն այդ մեկնաբանութեան, Ազգերի Լիգայի իւրաքանչիւր անդամ-պետութիւն 16 ղ յօդուածը պէտք է գործադրէ "այն միջոցով, որը համապատասխան կը լինի իր ապագական վիճակին և հարչի կառնէ իր աշխարհագրական դերը": Արանով բաւարարութիւն է արուած Գերմանիայի ձգգաւսմին գերմ մալու Ազգերի Լիգայի դրած պարտաւորութիւններից ընդգէմ՝ խորհրդ. Բուսաստանի, եթէ այս վերջինը յարձակուած գործէ, օրինակ, Լեհաստանի կամ Բուսանիայի վրա:

Ններորդ վաւերագիրը Լօբարնօի խորհրդաժողովի վերջին նիստի արձանագրութիւնն է. որի մէջ հաստատուած են խորհրդաժողովի ձեւը բերած արդիւնքները և յոյս է յայտնուած, որ "այս դաշնագրերի ու համաձայնութիւնների իրենց ուժի մէջ մտնելը կը նպաստէ մեծապէս բարոյական մեղմացման ազգերի յարաբերութեանց, ուժգնապէս կը հեշտացնէ քաղաքական ու անասական բաղմամբի հարցերի լուծումը ժողովուրդ. ների շահերի ու բաղձանքների համաձայն, և ամբարցնելով խաղաղութիւնն ու սպահովութիւնը Եւրոպայում": արդիւնագրապէս կը փութացնէ զինութափութիւնը, որ նախատեսուած է Ազգերի Լիգայի կանոնագրի 8 ղ կէտում:

Ահա, ամփոփ գծերով, Լօբարնօի խորհրդաժողովի արդիւնքը: Նա շատ է հետեւ այն իդեալից, որին ձգտում են ընկերվարականները, մեծապէս տարբերուած է և Ժընևի յայտնի պրօսօփից, որ, իբրեւ նազագրայ պահանջ է և միջազգային զեմօհրատարան: Բայց և արպէս, եթէ իրագործուի, նա մի քայլ է գէպի առաջ, գէպի աշխարհի խաղաղացումը - ամենաշատը, որին ըն-

դունակ եղաւ ժամանակակից բուրժուազիան՝ ազահ ու թուլամորթ: Պարտաւորէ իրաւարարութիւն միջազգային քաղաքականութեան առաջ առնելու համար՝ ի յեղի գիւնած ընդհարումներէ — ահա այն ստողը կորիզը, որ դուռն է Լօբարնոսի գաշնագրերի Տիբրում: Մի կորիզ, որ հանդիսանում է համաշխարհային աշխատաւորութեան քուրդուրանքի առարկան և որ նոր ջանքերով կարող է դառնալ խաղաղութեան մեծափարթամ ծառ: Այդ է պատճառը, որ դեմօկրատիան է սովնից շատ գոհ Լօբարնոսում ստացւած արդիւնքից, մինչդեռ այն ու ձախը, սև ու կարմիր ֆաշիզմը ահագին ունոց են բարձրացրել ու հաւաք են կանչում:

Առանձնապէս սաստիկ դժգոհ են գերման միւս պետական — ազգայնականները և բոլշեւիկները: Այս վերջինները Լօբարնոս նկատում են "համաշխարհային յեղափոխութեան" թիկունքին միւսած սուր դաշոյն Ռատէկն արդէն գաւաճանութեան մեղադրանքներ և շարունակ Գերմանիայի երեւին: Արասինը յայտարարում է, որ Լօբարնոս մի նոր դաւաարութիւն է խորհուրդներին դէմ: "Իզվեստիա"ն ու "Պրաւդա"ն խոսում են դրամատիքական պետութիւնների նոր յարձակումների մասին խորհրդային երկրների վրա: Եւ ամէնքը միաբերան գտնում են, որ Գերմանիան հեռանում է իրենցից և մտնում հւրոպական քաղաքականութեան ջրապոսոյտի մէջ, որ 2էմբրլէրը նենգորէն դաւեր է լարում "համաշխարհային յեղափոխութեան" դէմ և նոր պատերազմ է պատրաստում, որ, մի խօսքով, Լօբարնոս նիւթական ու բարոյական անասելի հարւած է բոլշեւիկների դէմ:

Թէ, իրօք, 2էմբրլէրները ինչ նոր անակնկալներ են պատրաստում բոլշեւիկներին համար, այդ ցոյց կը տայ ապագան: Ի՞նչ բան, սակայն, պարզ է՝ Եւրոպան այս պահուս, չի ուզում ու չի ձգտում պատերազմի, և օտաւել պատերազմի խորհրդային Ռուսաստանի դէմ: Եւրոպան ապակում է ինքն իր իւրի մէջ և կյանքն է ներքին սուր խնդիրներով: Պնդել, թէ Եւրոպան ինչ որ պատերազմական նպատակներ է սնուցանում ընդդէմ խորհուրդների՝ կը նշանակէ կամ ծառայել շինել Եւրոպայի իրական վիճակին, կամ ունենալ յետին հաշիւներ: Բոլշեւիկ ղեկավարները, ի Տարբէ, լաւ տեղեակ են Եւրոպայի կացութեան և դիտեն, որ եթէ իրենք հանգիստ մնան, իրանց գործին խառնուող չի լինի, բայց և այնպէս եթէ գիշեր-ցորեկ պատերազմի սպառնալիքների մասին են ծառու, այդ նրանց հարկաւոր է միայն և միայն ներքին կարիքների համար — ահաբեկելու ժողովուրդը պատերազմի սարսափներով, որպէսզի իրենց գահը մնայ անասանալ խօսքի ու մամուլի ազատութեան բացակայութեան պատճառով, խորհրդային իշխանութեան տակ ապրող գանգաւանները անգետ են արտասահմանում անցած-դարձածներին և հաստատով իրենց Ռատէկների ու Բուխարինների ստայօր գրութիւններին՝ այն համոզումն են գոյացնում, թէ Եւրոպան քունը կարած՝ գիշեր-ցորեկ պատերազմի մասին է մտածում:

խորհրդային երկիրներին դէմ: Այս մտնութեան վրա է հիմնւած մասամբ և ժողովրդի համակերպումն ու զուպ ղրկը: պատերազմի վախը նրան հանդուրժել է տակաւոյն իսկ բոլշեւիկներին:

Մի բանում, սակայն, բոլշեւիկ ղեկավարները անպայման իրաւացի են — ամէն մի քայլ, որ նպատակ ունի խաղաղութեան ու աշխարհի բնականոն վիճակի վերականգնումը, անմիջապէս ուղղուած է ընդդէմ խորհրդային իշխանութեան, որի գոյութեան հիվըք քաղաքացիական կռիւն է ու համաշխարհային յեղափոխութիւնը խաղաղութիւն և բոլշեւիզմ — սրանք երկու անմիւսւորելի հասկացողութիւններ են, շուր ու կրակի եւ քանի որ Լօբարնոսի նպատակը խաղաղութիւնն է, հասկանալի է, որ նա, բոլշեւիկներին աչքին, սուր դաշոյն է՝ միւսած խորհրդային իշխանութեան թիկունքին: Այս տեսակէտից, հասկանալի է և այն մոլեգին պայքարը, որ բոլշեւիկները մղում են բոլոր իսկական դեմօկրատների և քաղաքացիական, միջազգային ընկերվարութեան դէմ, որը աշխատում է մարդկութիւնը դուրս հանել պատերազմի ու արիւնահեղութեան քառուց, մինչդեռ խորհրդային իշխանութիւնը հէնց այդ քառուցն է ձգտում և իր փրկութիւնը սեննում է պատերազմների արիւնահեղութեան մէջ: Անտարակոյս, "համաշխարհային յեղափոխութեան" և, առհասարակ, բոլշեւիկներին ռազմաշունչ ծրարների խորտակման տեսակէտից Լօբարնոս, կարող է դառնալ իրիստ վտանգաւոր — մոլեգին իրենական համար:

### ԹՈՒՐԿԻՅՈՅ ԸՈՒՐՏԸ

«Հայկական տիրապետութիւնը Սուրիոյ մէջ»...  
Այժմ ալ այն լարին վրայ կը ճուազեն Թուրքերը, Միւնիսթիները ոտի և կիրքի հանելու համար: Արդարեւ, Թամսուկոսի դէպքէն ի վեր, երկուների մէջ է «հանրապետական» մամուլը, և զարմանահարաշ բաներ կը պատմէ: Վերջերս Հալէպէն (?) կը գրէին Ատանայի թերթերուն: «Արաբական իշխանութեան հետեւ իսկ չկայ. առէլի հայկական գերիշխանութիւն կայ: Այս մտղիկը առէլի դրամն դրամն վերջերս ուր շայքը գիտնած են եւ գիտով միմալի մէջ կը յարձակին քեան միեւնուց վրայ: Արաբներ չեն համարձակիր բերան բանալ շայքերու առջեւ: Հայկ. կոմիտէ մը կազմուած է, աւարաւորից կասաբիլո համար: Մուքը կոնիսէլ լթայ, օչ մէկ իսլամ կը համարձակի օտեւն դուրս ելլու:» (31 Հոկտ.)

Նոյն աղբիւրէն կ'իմանանք որ Ֆրանսական իշխանութիւնն ալ զգոհ է, և նոյն իսկ ձեռնակներ կատարած է, Հայերու մէկ մասին գէներըլ ետ առնելու համար: «Բայց, Հայերը Յրանապահներուն ալ դիմ կ'երթան».

Քաղաւածք մըն ալ, որպէսզի կարենանք լրիւ զաղափար կազմել այն հրէշային քաղաքականութեան մասին որ արագօրէն

Այլ զարգանայ ուսմանին վրայ, Սուրբու ապաստանած Հայերն ալ ոչնչացնելու համար: Եհնի Ասանն է որ կը հարդարէ:

« Կերցեա Պէրուքի Հայ կոմիտէն ժողովներ գումարելով, որսւած է Հայերն միլիո ուներ կազմել եւ օգնել Յրանցացիներուն: Հայ կոմիտէներու ժողովներուն կը մասնակցին ցանկ Ասանայի կողմերու հայ կոմիտէներու պետերը: Կ'լուսի թէ Յրանցացիները դրամական մեծ օժանդակութիւն բրած են Պէրուքի հետը: Կոմիտէն, եւ ժողովին մէջ ճեղքանցի պատճեններ ալ ներկայ եղած են:»

Ուրիշն, տակաւին չէ փարստած Հայկական մշտնանշը, Հայերու մէջ մասին ոչնչացումէն եւ միւս մասին փախուսած տէն յետոյ: Էնկիւրի չզոհացաւ Փոքր Ասիոյ Հայ բնակչութեան կոտորումով, եւ անոնց մնացորդները հետապնեց մինչեւ Մակեդոնիոյ եւ Թրակիոյ դաշտերուն մէջ եւ կրկին ցրուել տուաւ զանոնք, Իժդոզ է նաև քանի մը Հազար փախստականներու ներգաղթէն: Փոխառական Հայերու եւ Հայաստանի հանդէպ Ռուսիոյ հետապնեցած քաղաքականութիւնը օր մը խնդիր չը պիտի յարցայնէ Թուրքերու եւ Ռուսերու միջև, կը Հարցնէր վերջերս Պոլսոյ «Վազըթ»ը: (Սեր խորհրդային լուսաղբարները զովկիներու հրապարակագրի կրկնով) Կոչեցին այս պարագան եւ անցան, «քանի որ Քէմալի կուսակալութիւնը ոչ մի պաշտօնական յատարարութիւն չէ արել եւ չէր էլ կարող անել Հայ գաղթականներին հանդէպ»: Իսկ յատկապէս զժգոհ են Սուրբոյ Հայութիւնէն, որ փութի մը պէս միտան է իրենց կողմին, իրենց խն ոճիրներուն հետեւանցով: Այլ ժողովուրդը իր հողն ու արեւն ունէր, բայց ստիպուեցաւ ձգել ամէն ինչ եւ փախչել, ահաբեկ իր «բարեկամ»ներուն խորախտութիւնէն եւ թշնամիներուն վայրագութիւնէն: Թափառական զանգուածը տակաւին չէր կանգնած իր վրանը, երբ գործի ձեռնարկեցին թուրք րոտներն ու գործակալները, թուրքներու Համար տեղացիներուն միջոց: 1921էն ի վեր, անպարտ կ'երթեւեկեն Քէմալի գործակալները, հրէշտային սուտեր կը թխէ մամուլը, պարբերաբար գրողիչ պարքներ կ'արձակուին սուրիական այս կամ այն թերթին մէջ:

Նոր Թուրքիան, իր իսկ խոտովանութեամբ, մինչև հիմա Համակերպած էր միայն արաբական հողերու անշտման: Այս կէտը միշտ կը շեշտուէր, ամէն անգամ որ ինչորի մը ծագեր օրիշը Հողամասերու, օրինակ «արևելեան նահանգներու» մասին Բայց, զէպըրը շուտով Հաստատեցին թէ՛ այս ալ իրաջ մըն է: Թուրքիա Համակերպով կը ձեռնացնէր, քանի որ ուժ չունէր չորս ճակատի վրայ միանգամայն կուտելու: Իր անօրոտակը զգուռուեցաւ մահաւանդ անդէմֆրանսական Հակամարտութեան շնորհիւ, որ կը շարունակուի մինչև այսօր: Մուսուլի վէճին առթիւ, Էնկիւրի աւերող անգամ մըն ալ համադրուեցաւ թէ՛ միշտ կարելի է առիթէն օգտու քաղել, այլ երկու մրցակիցներէն մէկը միտան զէմ լարելով, մէկուն ժպտելով եւ միւսին կուսակ դարձնելով:

Այդպէս է որ, քրտական ապստամբութեան ստեն, յաշողեցաւ զօրք փոխարել Սուրբոյ ճամբով, եւ դեռ կը շարունակէ փոխարել կամ փոխանակել: Թէև, անկէ ի վեր, Յրանա ինք ալ սենցաւ իր ներքին ապստամբութիւնը, որուն անակնկալները վերջոյցած չեն տակաւին Յրանա ալսօր միայն կը սենեն Յրանքէն Պուլոսի ձեռնածութեան

փորձանքները, բայց ոչ է արդէն: Արիւնը հոռեցաւ Սուրբոյ մէջ, շարանդուութեամբ լեցնելով Էնկիւրին, եւ նորէն Արիւնի գիրկը նետելով Յրանաւն...



Բացուած է Ազգային Մեծ Ժողովին նոր նստադրջանը  
Բայց թէ գոց,— միլիոնյն է: Քէմալն է աւերը: Այդ միակատուր զանգուածը, Թուրքերոյ խորհրդարանը, պաշտօն ունի ոչ թէ վարելու եւ հսկելու, այլ՝ «թէմէննաճ»ի կենսու, ներդուութիւն, գլխարկ հանելու: Ռ'ը եւ է օրինազիժ օրէնք է արդէն, կը բաւէ որ անշամ մը կարգացուի կուսակրական կուսակցութեան (Թալք) ժողովին մէջ: Մէկ-երկու Հարցում, քանի մը ձեւական դիտողութիւն,— եւ ամէն ինչ կը վաւերացուի: Միակ ընդդիմակիր խմբակ, որ ծանօթ է «Թալքագրիքիլմը» անունով (Յաւաշղիմաւեր), օրէ օր աւելի խոչեմ, եթէ ոչ կախկու կը դառնայ: Շատ կը լուսին պատ ի պատ խօսքեր, բայց ոչինչ կայ բացորոշ եւ հետևողական Երկիրը ասկում վրայ եղաւ, կայադանը գործեց ամբողջ վեց ամիս, տակաւին ի գօրու են անկախութեան դատարանները եւ բացառիկ օրէնքները: Իսկ Հայարներ կը արջան բանտերու մէջ: Բայց, երբ Երեսի, Ժողովը բացուեցաւ եւ Ըսմէթ փաշա փառաբանեց կուսարուած գործերը, ոչ ոք Համարձակեցաւ ձայն բարձրացնել: Միայն Գարապէտի Քեաղիմ փաշա, երէկուան այնք-լոյսը, Համարձակեցաւ քանի մը խօսքով յայտնել թէ «Յաւաշղիմաւեր» կուսակցութիւնը՝ Գիտադիմուձ թեան եւ սճրափորձերու գործիք չէ: Բայց կարճ կապեց, երբ արիւնարբու դատարարը, Գըրըճ Այն պէն պօռաց. «Փաստեր կան»: Ընդդիմակիրներուն ամբողջ Հերոսութիւնը յանդեցաւ կարմիր քուէի մը, իբրև անկտուհութեան նշան, ինչ որ կատողեցու կուսակրական մամուլը: Ուրիշն, «իրենց կեդրոնատեղին եւ մասնաճիւղերը փակուելու եւ իրենց ձայներն ու աղմուկները լուրսութեան դատապարտուելու արժանի էին», եղրակացուց այդ մամուլը:



Ի՛նչ խօսք որ, ամբողջ երկիրն է լուրսութեան դատապարտուած: Ճիշդ է. այդ ահուարապիւր կը նպաստէ թուրք ատրոսիս պարտադրելու շարք մը նորութիւններ, գլխարկէն մինչև քրիտոստէնական թուական, միեւն թըրքահիներու մուտքը՝ միկիթներու ամպիրնի վրայ: Սակայն, այդ արտաքին բարփոխութիւնը այնքան կը ներգոշնակուի թուրք իշխանութեան ներքին բարբերուն. հետ, որքան «Փրաք»ն ու «ամբիլն»ը՝ «գէշպէ Հափաթ»ին հետ, որ վերջնապէս նուիրագործուեցաւ Մուսուլիա Քէմալի կողմէ, իբրև ազգային պար, դիւանագիտական երկկողմի մը մէջ:

Արդարև, ինչքան կուլտ Հակասութիւններ՝ Հուսկուած նորութիւններուն եւ իրապիս հետապնեղուած քաղաքականութեան միջև:

Քանի կը նրբանայ, կը սաշուի, կ'երուպականանայ Թուրքիան, այնքան անընչելի կը դառնայ միջնորդը՝ ոչ-Թուրքերուն համար, Կը թուի թէ Ֆէսն ու փաթթոցը աւելի զգաստ եւ հաւասարակշիւ կը պահէին Մէճմէտը, քան

«ուէփիւպիք»ն ու «փանամ»ն. որոնք անձարձակ թուրք տուած են ոչ թէ բարիք. այլ չարիք մը ակելի գործելու համար: Փաթիթցի ու «ճիւպպէ»ն անթիփանցիլի ծալքեր ունէին. որոնցմէ օգուտ կամ փաս կարելի էր կրել. պարագային համեմատ... Մինչդեռ հիմա, յիշուած և ձևաորուած, բուն թուրքը երևան կուգայ իր ամբողջ կիրպարանքով, վայրագ ու անյագ:

**Յիշենք վերջին իրողութիւնները:**

Նոր շրջանին, նոր թափով վերսկսաւ հայաճանքը ոչ-թուրք դպրոցներուն դէմ:

Քանի մը տարի առաջ, Էնկիւրի հարկ դատեց թուրք ուսուցիչները նշանակել ոչ-թուրք դպրոցներու գլխուն, թուրքերէնի, պատմութեան և աշխարհագրութեան համար, որպէսզի ուժ տան թրքացման Այդ երեք ճիւղերը, բայց մանաւանդ լեզուն, առաջին օրէն իսկ յատկապէս տեղ ունին հայկական դպրոցներուն մէջ, և, ակելի լաւ կ'ուսուցուէին քան հիմա, թուրքերու ձեռքով: Անօգուտ էր բողբոջել, և դպրոցները համակիրպեցան, այն ակնկալութեամբ թէ թողաները կառավարութիւնը պիտի վճարէ, կամ գոնէ բաժին մը պիտի ստանան կը թակախ տուրքէն:

Ի՛նչ պարզմտութիւն: «Հանրապետական» իշխանութիւնը ոչ միայն սակթիմ չտուաւ, այլ և ինք սահմանեց ուսուցչէններուն քանակն և թողանկերուն չափը, — դաստժամը 50 դր.: Եւ դպրոցները հարկադրուեցան անօթի պահել հայ ուսուցիչը, որպէսզի կարենան ճիշտ ամենազիտուն վճարել թուրքին. այլապէս դպրոցը կը փակուէր (երեք-չորս խոնարհ թաղեր փակած են արդէն): Այս տարի, յոյս կար թէ բարեփոխումներ պիտի կատարէ "բարեխում" կառավարութիւնը, խրատուելով երկու տարուան փորձէն: Մասնաւոր որ, թուրք թերթ մըն ալ արպտումներ կատարեց, և չստատեսեց թէ դպրոցները ի վիճակն չեն տանելու այդ բռնը, և թէ թուրք ուսուցիչները (անուղղակի կրտսներ) յաճախ անխրաւ պահանջներ կը դնեն:

Իսկապէս, մեծ է բարեփոխումը, անցեալ տարուան վրայ: Դասաժամերու սակը բարձրացած է 150 դր.ի, բարձրագոյն կարգերու, և 75 դր.ի՝ նախակրթարաններու համար... Նոր սակազինը պարտադրուած է կտրուկ շրջաբերականով մը, որ կը սպառնայ փակել ո՛ր և է դպրոց, եթէ Համակերպիլի Գաղափար մը տարու համար, բռնեց թէ հայկական ամենէն բարեստոր դպրոցը, Բերայի Էւսեանը, որ հին սակով ամսական 300 սակի կը վճարէր թուրք ուսուցչէներուն, այժմ պիտի վճարէ 630 սակի: — Իսրայէլական 7560 սակի: Ուրկէ պիտի վճարեն. այդ իրենց գործը չէ. «Վճարեցէք, յայլապէս կը փակենք»: Հիմնական նպատակը՝ փակումն է արդէն, որպէսզի առաւուր մը ձեռք անցնեն նաև ազգային կարածներու և դպրոցներու մասակարարութիւնը, և աշակերտները ցրուեն թուրք դպրոցներու մէջ:

Այս ակներև փաստը միայն մէկ մասն է այն գաւազանական ծրագրին, որ կը ձգտի ողնայցնել փոքրամասնութեանց հատուկտոր իրաւունքները, և որուն շեշտը դրուեցաւ Լօզանի դաշնագրին համապատասխան յօդուածներուն ձխտումով: Թուրքահայ Միութիւնը կը շարունակէ ստորագրութիւն

հաւաքել Պոլսոյ մէջ, այս գործը գրուի Հաննելու համար, և արդէն շատ բան չէ մնացած: Պատրիարքարանը, որուն անուամբ արուած են «աւանձնաշնորհները», ի գուր կը գալարուի ծրագրուած օղակին մէջ: Իեզկիպակին իւրը միայն պակաս է. չուան քաջողներ շատ կան, երբ հրամանը տրուի:

Նոյնը և Հրեաներու և Յոյներու մասին, անշուշտ ո՛չ նոյն սրութեամբ: Հրեաները «դաւաճան» չեն, Յոյները, որբան ալ թուրք հուշակուէին, կրնան ապախելիլ Աթէնքի: Միայն մեր դժբախտ մնացորդներն են որ, վերը Ատուած, վարը Քէմալը կը տեսնեն, Խորհրդային Միութեան, Հետևաբար և Երևանի բարեկամն ու երայարական զինակիցը:..

Ահա թէ ինչո՞ւ ըսեր են. — «Համբուրելով մատնել»:



Հակառակ հաստատուած ահուարսափին, դժգոհութիւնը կը ծաւալի Անատոլի մէջ, ինչպէս հաստատեցին Էլբրուսի, Սըվազի, Մարաշի և ուրիշ կեդրոններու վերջին ցոյցեկն ու կախազանները: Միտմտութիւն պիտի ըլլար միայն զինարկին պարտագրութեան վերաբերել այս նոր խլրտուածները Ի հարկէ պիտի գրգռուէր թուրք ամբողջը, երբ, մէկ օրէն միւսը նետի կուտան ծոպաւոր ֆէշը, և անոր սակ պնդեցած զուլտին վրայ կը տեղաւորեն երրուպական զլխարկը: Ձէսը, ինչպէս փաթթոցը, ինչպէս «ճիւպպէ»ն և «էնթորի»ն, միս ու ոսկոր դարձած են Անատոլի թուրք ամբոխին համար, որ այնքան դժուար կը համակերպի անոնց վերացման, որբան եթէ զրկուի ջարդի և աւարառութեան իրաւունքէն:

Բայց, ակելի խոր պատճառներ կան դժգոհութեան և շղագրութեան: Ստորերկրեայ փոթորիկ մը կը թաւալի ֆէսի և զլխարկի այդ նեղ շրջագոյն մէջ: Կարգաւարքի, ազգացութեան, յաղթականի և պարտեալի խուլ, սպառնազին պայքար մըն է որ ձև ու մարմին կ'առնէ, Հետզհետէ գունաւորուելով: Նուրէտտի փառչ, որուն համար կ'ախաղան պահանջուեցաւ Նոյ. 30ին, Ազգային Մեծ Ժողովին մէջ, շատոնց ենթակայ է հակոթութեան և կասկածի: 1922ի աշնան, Իզմիրը կտորիէ և դատարիել է լեռոյ, այս փայրագ փառչն կը պարտաստուէր Պոլսու արշաւել նոյն թափով, իբրև հրամանատար Ա. Գորաբանակին Այդ հրամանը չտուին — Իշանակիցները Պոլսու էին տակաւին — և իրեն տեղ Պոլսու մտաւ Շիբլի Նայիլի փառչն, իսրայալութեամբ ճամբու դնելով «յաղթականները»: Շատ շահեցած, բոլորովին աչքէ ինկան Նուրէտտի փառչ. և յարաբերութիւնները այնքան պղտորեցան որ, Մ. Քէմալը հարկադրուեցաւ լուրջ միջոցներ ձեռք առնել: Վախեցողներ կային թէ Էնկիւրի վրայ պիտի քալէ: Ըսմէթ փառչ Լօզան երթուարձի միջոցին, առիթ գտաւ տեսնելու զինքը, և խրատներ տալու: Եւ կարելի եղաւ Պրուսայի մէջ մեկուսացնել մրցակիցը: Վերջին երեսփոխանական ընտրութիւններուն ատեն, Նուրէտտին փառչ թեկնածու էր և յաջողեցաւ, բայց թեկնանքին. երկրորդ ընտրութեան նորէն ընտրուեցաւ և ստիպուեցան վաւերացնելու Իր մուտքը



թէ և անփառունակ, հաշտարակ պատմական կը դառնայ պղտիկ միջուկեղով մը, — Ֆէ և գլխարկի խնդրով:

Պայքարին քաղաքական արժէքը հասկնալու համար, կը բաւէ յիշել թէ, վիճաբանութեան ատեն, զլիսարկը պաշտպանելու կիրքով իր դէմ ելան ոչ միայն նորերը, այլ և մոլեռանգ քրտնոյ մը, Հոճա Ելիաս, Մուշի յարեանական երեսփոխանը և պատկաւը ջարդարարը: Այս հրէշը մինչև երեկ ձերմակ ուղարոջ կը կապէր, և կատարի խաղիֆայտական մըն էր. իսկ այսօր դարձեր է յեղափոխական գործիչ մը, նոր Թուրքերն ալ, ինչպէս Պոլսեի կիները, շափապան վարպետ են ամբողջ շփոթեցնելու արհեստին մէջ. և գիտակցաբար առաջ կը քշեն այս կարգի խամաճիկները, ազդելու համար արևելեան նահանգներուն վրայ, որոնք միշտ հրաբուխի վրայ են: Ինչ խօսքով. նուրբտալին ալ հասանք մը կը ներկայացնէ. և թիբեա անիրաւ չէ իր քննադատներուն այն մեղադրանքը թէ իր ընդդէմակիր դիրքին շնորհիւ է որ իւր-ուրու մեր ծագեցան և «սոսմեղ արևն» թափեցաւ Սրվապի, Էրզրումի և ուրիշ վայրերու մէջ:

Բոլոր բռնակալութիւնները, այլ մանաւանդ թրքականը, փրկութեան պարան համարած են կոտորածը. բայց որքան աւելի ուժ սնուած են տնոր, այնքան շուտ հասած է փոթորիկը, և այնքան արագ փոխուած են դերերը: Կասէ, որպէս զի չկախուիս, — ահա միակ ուղին որ բաց կը մնայ Քէ-մալի առջև: Ո՛ր և է և անարացում՝ անվրէպ մահուան հ'առաջնորդէ. ուստի և չեն խնայեր ոչ ձախին, ալ աշխու Այս ճամբուն վրայ ալ, քէմալականները հաւատարիմ հետեւորդներ են պոլսեի կիներուն, թէ և անխնայ կը հալածեն պոլսեի կիներուն գործուհուութեան որ և է փորձ՝ Տաճկաստանի «տուր» հողին վրայ:

## կուսակցական կեանք

Մեր ընթերցողներն անշուշտ յիշում են, որ Ա. Ը. Ինտերնասիոնալի Մարտէլլի Համադումարին Հ. Յ. Գաշնակցութեան կողմից ներկայացած էր մի յուշագիր Քրդական Խնդրի մասին: Արևելեան Գործերի Յանձնաժողովը, որին յղած էր այդ յուշագիրը ի քննութիւն՝ Գործադիր Կոմիտէի ուշադրութեանն էր յանձնել այն, որովհետև ինքն ի վիճակի չէր նրանով զբաղելու:

Լնդոնի վերջին գումարման միջոցին (Նոյեմբ. 4—6ին) Ինտերնասիոնալի Գործադիր կոմիտէն օրակարգի մէջ է դնում Քրդական Խնդիրը: Այս առթիւ մեր կուսակցութեան կողմից ուղարկուած է Գործադիր Կոմիտէին մի նոր տեղեկագիր, որի մէջ առաջ են բերուած Մարտէլլի Համադումարից ի վեր տեղի ունեցած իրազարձութիւնները զբոլական շարժման մէջ և, մասնաւորապէս, թիւրք զօրքերի կատարած քաղաքականութիւնները Քիւրդիստանում:

Նոյեմբերի 5-ի երեկոյեան նխադէպ Գործադիր Կոմիտէի Ընդհ. Քարտուղար Ըսկ. Աղլէրը զեկուցում է տալիս այս խնդրի մասին: Նա յիշատակում է Գաշնակցութեան կատարած քայլը Մարտէլլում և տալիս է մի քանի տեղեկութիւններ զբոլական շարժման մասին՝ քաղցրով այն մեր վերջին տեղեկագրից:

Ընկ. Աղլէրի զեկուցումը լրացում է ընկ. Ջամալեանը, որ հանգամանորէն ներկայացնում է ժողովականներին քերական շարժման էութիւնը և թիւրք կառավարութեան վայնաբաղութիւնները՝ այդ շարժումը խեղդելու համար: Նա բացատրում է մասնաւորապէս այն քաղաքական շարժառիթները, որոնք դրում են մեր կուսակցութեանը թարգման հանդիսանալու Ինտերնասիոնալի մէջ ներկայացուցիչ շունեցող մեր հարեան ժողովրդի ցաւերին և պահանջներին:

Յաջորդաբար խօսք են առնում ընկ. Լոնդէ, Աղլէր, Բաուէր և ուրիշները: Նրանք մի կողմից շեշտում են քերական հարցի լրջութիւնը Մերձարու Արևելքի խաղաղութեան տեսակէտից և միւս կողմից վեր հանում այն մեծահոգութիւնը, որ երևան է բերում Հ. Յ. Գաշնակցութիւնը՝ պաշտպան կանգնելով արդար դատին այն ժողովրդի, որից թէ հայ ժողովուրդը և մանաւանդ ինքը Գաշնակցութիւնը անցնալով այնքան հարեւան էր կըլը: Բոլոր հետեւորները ցանկութիւն են յայտնում, որ ընկերվարական կուսակցութիւնները բարեխղճօրէն զբաղին Քրդական Խնդրով՝ որպէսզի կարելի լինի այս մասին մի չհիմարուած տեսակէտ մշակել Ինտերնասիոնալի մէջ:

Գործադիր Կոմիտէն որոշում է. Յանձնարարել Քարտուղարութեանը զրկել ընդհանրական կուսակցութիւններին Գաշնակցութեան տեղեկագիրը Քրդական Խնդրի մասին և առհասարակ մատակարարել կուսակցութիւններին այն նիւթերը, որոնք անհրաժեշտ են այս խնդրին ուսումնասիրելու համար:

Համաձայն այս որոշման՝ քարտուղարութիւնը բազմազրկելով մեր տեղեկագիրը երեք լեզուներով՝ արդէն ուղարկել է կուսակցութիւններին:

Ընկ. Իսխանի մանուան առթիւ, բազմաթիւ ընկերներէ, կուսակցական եւ հանրային մարմիններէ սացած ենք ցաւակցական հեռագիրներ եւ գրութիւններ, որ դժբախտաբար ի վիճակի չենք հրատարակելու՝ սեղի սղութեան պատճառաւ:

«ԳՐՕՇԵ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Ինտերնասիոնալը

## ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Ա. Ը. Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտեն Մարտչյի Համագումարի միջոցին որոշել էր, որ եթէ Լօբարնօի բասկետօթիկները շօշափելի արդիւնքի հանդիւն, ինքը անմիջապէս ազեպ էր գումարի՝ Ինտերնասիոնալի դիրքը հանդէպ այդ արդիւնքների ճշտելու համար: Համաձայն այս որոշման՝ Գործադիր Կոմիտէի գումարումը կապացու նոյններէր 4—6ին Լոտոնում:

Ներկայ էին բոլոր կուսակցութիւնները բացի մի երկուսից, որոնք ընտրական պայքարի մէջ լինելով (Ֆեռուսովաքիա) կամ այլ կազմակերպական պատճառներով (Գաննաբը և Նոյվեդիա) չէին կարողացել մարդ ուղարկել: Ներկայների մէջ աչքի են ընկնում՝ Վէյս (Գերմանիա), Բրաք, Լոնդէ (Ֆրանսիա), Գը Բրիւքեր (Բելգիա), Բաուէր (Աստրիա), Գիամանդ (Լեհաստան), Ֆիլդեն (Հոլլանդիա) և ուրիշները: Անգլիացիք նկատի ունենալով Լօբարնօի հացի կարեւորութիւնը, քաղաքացիութեան թույլտուութեամբ 12 հոգիներց մի պատերազմութիւն էին ուղարկել, որի մէջ աչքի էին ըկնում Մակտոնալլ, Կրամպ, Բրայլֆորդ, Վոյնիդ և ուրիշները: Հեղինակները բացակայութեան պատճառով նախագահութիւնը վարում են փոխ ի փոխ Կրամպ և Վիլբաու (Հոլլանդիա):

### Լօբարնօի դաճակալիը

Օրակարգի այս կէտը, որ Գործադիր Կոմիտէի գումարման մէկն էր կազմում՝ կաննց նիտուրի մեծ մասը: Սրա պատճառն այն է, որ թէ մինչև Լօբարնօի խորհրդատուութիւնը և թէ նրանից յետոյ, գլխաւոր կուսակցութիւնները, ներքին քաղաքական շարժառիթներով, իրարից տարբեր վերաբերմունք են ցոյց տալիս դէպի այդ դաշնագրերը: Շատ ժամանակ և աշխատանք էր հարկաւոր այդ տարբերութիւնները վերացնելու և Ինտերնասիոնալի մէջ գոյութիւն ունեցող տրամադրութիւնները մէկ ընդհանուր յայտարարի վերածելու համար:

Այսպիսի մի կարգադրութեան համար ամենամեծ դժուարութիւնները ներկայացնում էին անգլիացի ընկերները: Ամբողջովին կառչած ձապով ժընեւի պայմանագրութեանը, որ աշխատաւորական նախկին դաշինքի արտաքին քաղաքականութեան գլուխ գործոցն է համարւում — և իրաւումբ — նրանք այդ պայմանագիրը պահպանողականների դէմ պաշտպանելու համար անցնել տարանից սկսած կատաղի պայքարի մէջ են: Պայքարն առանձնապէս սրեւց՝ երբ Ազգերի Լիգայի վերջին ժողովին (1925 թ. Սեպտեմբեր) պահպանողականների կառավարութիւնը փաստորէն տապալեց ժընեւի պայմանագրութիւնը: Աշխատաւորականների հարածների տակ կառավարութեան դրութիւնը բաւական խախտել էր, երբ

վրայ հասաւ Լօբարնօն, որ մի տեսակ փրկութեան խարխիւ հանդիսացաւ նրա համար: Նման պայմաններում բնական է, որ աշխատաւորականների հարածները պէտք է ուղղւէին նաև Լօբարնօի դէմ, մանաւանդ որ պահպանողական մամուլն ըստ ամենայնի օգտագործում էր այստեղ ձեռք բերւած արդիւնքը իր կառավարութեան վարկը բարձրացնելու համար:

Այս ամբողջ իրադարձութիւններն աչքի առաջ ունենալով հասկանալի է դառնում, որ անգլիական աշխատաւորականների համար դիրքին չպէտք է լինէր միանգամայն փոխել իրենց պայքարի ճակատը և պաշտպան կանգնել մասնակի համաձայնագրերով համաշխարհային խաղաղութիւն ապահովելու քաղաքականութեանը, որ Լօբարնօի Գաշնագրերի հիմքն է կազմում:

Սակայն հէնց այդ էին պահանջում՝ եւրոպական ցամաքի ընկերվարականները և, առաջին հերթին, Ֆրանսական և բելջիկական կուսակցութիւնները: Վերջիններս համաշխարհային պատերազմի գլխաւոր վտանգը հուսնալի ասիերին տեսնելով՝ ցանկանում են ըստ կարելոյն շուտ իրականացած տեսնել Լօբարնօի Գաշնագրերը, որոնք արբիտրաժի (միջնորդ դատարան) սկզբունքը պարտադրելով մի կողմից Գերմանիային իսկ միտ կողմից անմիջականօրէն շահագրգռւած դաշնակից պետութիւններին՝ գոնէ մի որոշ չափով վերացնում են այդ վտանգը: Այսպիսի մի մեծ գործի հանդէպ նրանց չնչին են թւում անգլիական ընկերների ներքին քաղաքական առկատահութիւնները և այդ պատճառով նրանք թախանձագին խնդրում են վերջիններին միանալ իրենց հետ այս խնդրում:

Բոլորովին իւրատեսակ դիրքի մէջ են գտնւում գերմանացի ընկերները Գերմանիայի ներքին քաղաքական պայմանների բերումով: — Ինչպէս յայտնի է, այդ երկրում իշխանութեան դեկը փաստօրէն գտնւում է ազգայնականների ձեռքը, սրանք, Լօբարնօի խնդրում՝ բաւական եննդ դեր են կատարում: Նրանք, մինչև ուղև ու ճուճը սողորւած փոխ վրէժի ձգտումներով, շէն ուզում հասնելութիւն տալ Լօբարնօի Գաշնագրերին. սակայն միտ կողմից զգալով այդ դաշնագրերը մերժելու վտանգը երկրի համար՝ ուզում են, որ նրանք ընդունին Բայխտակում ուրիշ կուսակցութիւնների ձայներով: Այսպիսով ազգայնականները յոյս ունին մի կողմից պահել իշխանութիւնն իրենց ձեռքը, իսկ միտ կողմից պատասխանատուութիւն շտանձնել Լօբարնօի դաշնագրերի վտանգացման գործում, որպէսզի միշտ իրաւունք ունենան իրենց հակառակորդներին և մասնաւորապէս ընկերվարականներին իբրև «ազգապաշտի» քաջըջել իրենց մամուլի և հրատարակային ժողովների մէջ:

Այս խաղերն ի գերև հանելու համար ընկերվարականները, Լօբարնօի Գաշնագրերին միանգամայն կողմակից լինելով հանդերձ՝ որոշում են նրանց դիմ ձայն տալ, եթէ ազգայնականները յամաճուրդ լինին իրենց նենգամիտ քաղաքականութեան մէջ: Ընկերվարականների այս անսպասելի որոշումը դնում է գերման ազգայնականներին երկրորտանգի առաջ. կամ հրաժարել իշխանութիւնից և կամ ամբողջ աշխարհի առաջ հասնելութիւն տալ մի խաղաղասիրական քաղաքականութեան, որի համար նրանք մինչև օրս ամէն կարգի լուտանքներ թափել են ընկերվարականների գլխին:

Որ ելքին էլ յանդի դէպքերէ՛ր ընթացքը ազգայնականները աննպաստ դրութեան մէջ են ընկնում:

Գործադիր Կօմիտէին բացատրելով իրենց խրատեսակ վերաբերմունքի շարժառիթները՝ գերման ընկերվարականները ճգնում են որ խրաբարկիք բանաձեւը ըստ կարելոյն դերձ լինի բացասական—քննադատական կէտերից, որպէսզի այդ կէտերը ղէնք չզգառնան ազգայնականների ձեռքին Լօքարնօի դէմ:

Երկար միճաբանութիւններից յետոյ Գործադիր Կօմիտէն միաձայնութեամբ ընդունում է հետեւեալ բանաձեւը.

«Ա. Ը. Ինտերնատիոնալ Գործադիր Կօմիտէն Համադրւած է, որ Ժընեւի Պայմանագրութիւնը ամենապարզ միջոցն էր Հանդիսանում եւրոպական խաղաղութիւնն ապահովելու Համար: Եւ ցաւում է, որ այդ Պայմանագրութիւնը առժամայէն տապալեց շնորհիւ բրիտանական պահպանողական կառավարութեան բռնած դիրքի, և երբէք չի կարող նկատել Լօքարնօի Դաշնագրերը Հաւասարածէք Ժընեւի Պայմանագրութեան ընդհանուր և ազդու սխտեմի:

«Այսուամենայնիւ Գործադիր Կօմիտէն Համարում է Լօքարնօի դաշնագրերը իբրև առաջին քայլը դէպի Եւրոպայի խաղաղագոյնում: Թաղթական պետութիւնների բռնապետող կամքի փոխարէն Հաստատելով փոխադարձ Համաձայնագիր իրաւապէս Հաւասար պետութիւնների միջև՝ Լօքարնօի Դաշնագրերը խտատվանում են, որ վիժած է ազգերի փոխ յարաբերութիւնները բռնի ուժով ճշտելու մեթոտը, որի դէմ միջազգային ընկերվարութիւնը անընդհատ պայքար է մղում: Հենց շնորհիւ այն բանի, որ այս դաշնագրութեամբ մի իշարք ազգեր, որոնք դարձել շարունակ ամենաարիւնահեղ պատերազմներն են մղել իրար դէմ, պիտի հրաժարեն պատերազմը նկատել իբրև միջոց իրենց վէճերը լուծելու: Համար և պիտի ենթարկուին պարտադիր արբիտրաժի,— որ այս պարտադիր արբիտրաժը պիտի դրէի Ազգերի Դաշնակցութեան իրաւաստութեան տակ,— որ Գերմանիան պիտի մտնի Ազգերի Դաշնակցութեան մէջ՝ այս բոլորը պիտի ստեղծեն Արեւելեան և Կենդրոնական Եւրոպայի միջև մի անելի խաղաղ միջոցորտ, որ նախապայման է Հանդիսանում Հին աղփային ատելութիւնների անհետացման Համար: Այս Հանգամանքը պիտի դիւրացնի միևնոյն ժամանակ վերջ տալու Համաշխարհային տնտեսական տագնապին ու զանազանների գործազրկութեանը և բարձրացնելու աշխատաւոր դասակարգի տնտեսական վիճակը:

«Առանց ինքնախաբէտութեան մատնելու դաշնագրի որոշ կէտերի թերութիւնների նկատմամբ, Գործադիր Կօմիտէն նկատում է այս գործն իբրև մի ժամանակի չաջողութիւն այն մեծ պայքարի մէջ, որ միջազգային աշխատաւորութիւնը նախաձեռնել է ժողովրդների փոխյարաբերութեան խնդրում բռնի ոյժին դիմելու մեթոդի դէմ: Յոյց տարով այն ճանապարհը որ կտրել—անցնիլ է Եւրոպայի Բուրից (գրաւաժից) մինչև Լօքարնօի դաշնագրերը՝ Գործադիր Կօմիտէն ճշտում է, որ բռնի ոյժի մեթոդներից Համաձայնութեան մեթոդների անցնող այս նշանակալից փոփոխութիւնը Հետեւանքն ու արդիւնքն է — թիւն դեռ ևս ոչ կատարեալ — Մեծն Բրիտանիոյ աշխատաւորական կառավարութեան կատարած քայլի, Փրանսական սոցիալիզմի ընտրական յայթանակի ընդդէմ Ազգային Խմբակցութեան (բոկ), Բելձիկայի աշխատաւորական կուսակցութեան վերելքի և գերմանական Սոցիալ-Դեմոկրատիայի զիջողական (հատուցումների խնդրում) քաղաքականութեան:

«Սակայն այս յառաջդիմութիւնը ճշտորոշելով Հանդերձ Գործադիր Կօմիտէն արժէք է տալիս նրան իբրև առաջին քայլի դէպի առաջողութեան նպատակը և հրատարում է աշխատաւոր դասակարգը, խրախուսած այս մասնակի արդիւնքով, շարունակել անմիջապէս իր պայքարը, աչքի առաջ ունենալով հետեւեալ նպատակները.

1. Ազգային ատելութիւնների ուժաթափութիւնը Եւրոպայում պէտք է լրացւի և երաշխաւորէի Հռենոսեան երկրների գրաւման ընդթը խիստ և եւ փոխելով, այդ երկրները ըստ կարելոյն շուտ պարսպելով և Սաարի շրջանին վերաբերեալ իրաւական ինդիւիդիտի և Նիթթական դատարանների արագ կարգադրութեամբ:

2. « Դաշնագրի (Լօքարնօի) վաւերացմանը անյուսպ պէտք է յաջողիլ զինաթափութեան ընդհանուր խորհրդատուովի գումարումը՝ Համաձայն Ազգերի Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի սորոյնների:

3. « Փանի որ այլևս ապահովում է պարտադիր արբիտրաժը Գերմանիայի և իր արեւելեան և արեւմտեան Հարեւանների միջև՝ պէտք է ձգտիլ անյուսպ Հաստատելու բոլոր միւս պետութիւնների միջև պարտադիր արբիտրաժը դաշնագրի, որնք, Համաձայն Ժընեւի բանաձեւերի, պէտք է առնել Ազգերի Դաշնակցութեան սխտեմի մէջ»

4. «Աշխատաւոր դասակարգը պէտք է հակէ, որպէսզի այս Համաձայնութիւնը, որ ձգտում է արեւմտեան և կենտրոնական Եւրոպայի պետութիւնների վէճերը վերացնելու, չալլանուի դառնալով մի դաշնագրութիւն ուղղում այլ պետական խմբակցութիւնների դէմ, մտանաւորապէս, որպէսզի նա չալլանուի ուղղելով խորհրդակցի Ռուսաստանի դէմ, Գործադիր Կօմիտէն Հաստատելով Հանդերձ, որ Լօքարնօի Դաշնագրերը չեն պարունակում ոչ մի յօդած, որը ուղղւած լինի խաբարիցային Հանրապետութիւնների միութեան դէմ՝ յիշեցնում է այնուամենայնիւ աշխատաւոր դասակարգին, որ յաճախ մի նպատակով կազմած դաշնագրերը իշարք գործազրկելով՝ դարձել են այլ նպատակի: Հետեւաբար նա նախազգուշացնում է բոլոր ուժով ընդդիմանալու ամէն մի փորձի Լօքարնօի Դաշնագրերը դարձնելու միջոց Ռուսաստանը կազմակերպելու Համար և յարգորում է խտացնել ջանքերը Հաստատելու Համար արեւմտեան ու կենտրոնական պետութիւնների և Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան միջև խաղաղ գործակցութիւն և Համերաշխութիւն: Գործադիր Կօմիտէն սակայն չի անդաժանում, որ ընկերվարական կուսակցութիւնների ջանքերը՝ արգելք լինելու Ռուսաստանի կղերացմանը մեծ դժարութեան և Հանդիպում շնորհիւ այն կամարտ կղերացման քաղաքականութեան, որն հետեւում է Խորհրդային Հանրապետութիւնների Միութեանը մերժելով մտնել Ազգերի Դաշնակցութեան մէջ:

«Վերջապէս Գործադիր Կոմիտէն յիշեցնում է բոլոր երկրների աշխատասիրներին, որ կապիտալիստական կառավարութիւնները միշտ պատրաստ ին դիտելու զաշնագրերը իբրև թուրքի կտորներ, երբ կապիտալը շահերն այդ հն պահանջում է որ, հետեւաբար, բոլոր համաձայնագրերը, որոնք ձեռնարկ են ապահովելու խաղաղութիւնը, դրանց թւում և Լօքարնօի Գործադիրը, խաղաղութեան իրական գործիքներ չեն դառնայ, եթէ աշխատաւոր դասակարգը բաւականաչափ աչքբաց և ջրօրէ չլինի՝ ապահովելու համար այդ գաղտագրերի գործադրութիւնը՝ նրանց մէջ իր ողին դիտելով»:

**Վաւիթիսնոյի Համաձայնագրի վաւերացումը**

Գործադիր Կոմիտէի օրակարգի երկրորդ խնդիրն է Վաշինկտոնի Համաձայնութեան վաւերացումը, որ դեռ Համբուրգի համագումարից ի վեր Ինտերնասիոնալի մտահոգութեան առարկան է կարգում և Մարտիէյի համագումարում մանրազնին ուսումնասիրութեան նիւթ դարձաւ: Կոմիտէի ընդհարուողար ընկ. Աղլէրը յայտարարում է, որ Ա. Բ. Ինտերնասիոնալի Քիւրօն Արհեստակցական Ինտերնասիոնալի կենտրոնի Հետ միասին քննութեան առնելով այս խնդիրը, որոշել են այս տարւոյ նոյեմբերի 15-ից մինչև Դեկտեմբերի 15-ը ամէն տեղ ցոյցեր կազմակերպել պահանջելով Վաշինկտոնի Համաձայնագրի վաւերացումը: Պայքարը պէտք է սկսի Բելձիկայից, որ շնորհիւ ընկերվարական կուսակցութեան ազդեցութեան, նրա յաջող էլըը ապահոված կարելի է համարել և տարածել միւս երկրների վրայ:

Այս առթիւ տեղի ունեցած վիճարանութիւններից պարզում է, որ երեք կարգի դժարութիւններ կան Վաշինկտոնի Համաձայնագրի վաւերացման համար:

Առաջին՝ մի շարք երկրներում (Ահատտան, Բելձիկա, Պակիստան Եվէտիա ևն.) արդէն օրէնտրական ճանապարհով հաստատած է 8 ժամեայ աշխատանքի դրութիւնը որի շնորհիւ այդ երկրներում աշխատաւորական կազմակերպութիւնները Վաշինկտոնի Համաձայնագրի կարիքը չեն զգում:

Երկրորդ՝ արդիւնագործական մի քանի գլխաւոր ճիւղերում, ինչպէս օրինակ հանքագործութեան մէջ, ներկայումս աշխատանքի տեղորութիւնն 8 ժամից պակաս լինելով Վաշինկտոնի համաձայնագրից, որ ամէն տեղ 8 ժամեայ աշխատանքի պահանջն է դնում՝ այդ ճիւղերի համար ոչ թէ յառաջդրմութիւն այլ յետադիմութիւն է ներկայացնում: Այստեղից էլ առաջանում է աշխատաւորական որոշ խաւերի ընդդիմութիւնը նրա վաւերացմանը:

Վերջապէս երրորդ՝ գլխաւոր արդիւնագործական երկրները, Անգլիան, Գերմանիան, Փրանսիան և Ամերիկան իրար հետ մրցման մէջ լինելով երկիւղ են կրում թէ Համաձայնագիրը կարող է չվաւերացել բոլոր մրցակիցների կողմից և այդ պատճառով այդ երկրներից ոչ մէկը չէ ուզում այս գործի մէջ նախաձեռնութիւն տանձնել: Այս երկիւղով է բացատրւում, որ անգամ Փրանսական խորհրդարանը, որ ընկերվարականներն անքան ազդեցիկ դեր ունին, իր հաւանութիւնն է տւել համաձայնագրին այն պայմանով միայն, որ նա վաւերացել նաև Գերմանիայի կողմից:

Գործադիր Կոմիտէն այս բոլոր դժարութիւններն աչքի առաջ ունենալով հանդերձ անհրաժեշտ է գտնում եռանդով շարունակել պայքարը ի նպատակ Վաշինկտոնի Համաձայնագրի վաւերացման, որովհետև տեղական օրէնսդրութեամբ կամ գործաւորների և գործատէրերի համաձայնութեամբ հաստատւած 8 ժամեայ աշխատանքի սխտեմը միշտ ենթակայ է պատահականութիւնների: Այս սխտեմը կարող է ապահովւած համարել միայն միջազգային օրէնսդրութեամբ, որ կրկին իւրաքանչիւր երկրի յետադիմական տարրերին յարմար վարչիւննին կրա դէմ ոտնձգութիւններ անելու հնարաւորութիւնից:

Գործադիր Կոմիտէն անտեղի է համարում այն երկիւղը, որ ունին 8 ժամից պակաս աշխատող բանւորները Վաշինկտոնի Համաձայնագրից: Փորձը ցոյց է տալիս, որ նրա վաւերացումը ոչ մի երկրում պատճառ չէ դարձնել 8 ժամից պակաս աշխատողների դրութիւնը վատացնել:

Ի վերջոյ՝ Գործադիր Կոմիտէն հաճաքով տեղեկանալով, որ բելձիկական կառավարութիւնը ընկերվարական նախարարների պահանջով արդէն օրինագիծ է ներկայացրել Խորհրդարանին Վաշինկտոնի Համաձայնագիրը վաւերացնելու համար՝ հրահանգում է այլ երկրների ընկերվարական կուսակցութիւններին համապատասխան ձեռնարկներով նեցուկ հանդիսանալ բելձիկական ընկերների նախաձեռնութեանը:

**Ներգաղթի խնդիր**

Բանւորների տեղափոխութիւնը մի երկրից միւսը աշխատանք հայթայցելու համար, համաշխարհային պատերազմից յետոյ և մանաւանդ այն օրից երբ Ամերիկան փակեց իր դռները օտարների առաջ՝ ըստ մտահոգիչ հանգամանք է առել: Այսօր Փրանսայում աշխատում են մօտ մի միլիոն իտալացի, չորս հարիւր հազար լեհ, հարիւր հազար հուլաւարացի և մի քանի տասնեակ հազար հայ, ռուս ևն. բանւորներ: Աւստրիայում օտար՝ բանւորների թիւն անցնում է երկու հարիւր հազարից: Բելձիկայում, Գերմանիայում և Անգլիայում էլ նրանք պատկանելի թիւ են կազմում:

Այս օտար բանւորները գրկած լինելով տեղական աշխատաւորների համար սահմանաւած հովանաւորող օրէնքների պաշտպանութիւնից՝ ենթարկւում են անսանձ շահագործման և մինչև իսկ կեղեքման: Միւս կողմից՝ երանք չկարողաւալու ըստ դէպքերում նաև չկոմսնելով—մասնակցել տեղական արհեստակցական միութիւններին՝ գործադու աւրոդի կամ աշխատավարձը նւազեցնողի դեր են կատարում, որ բնականաբար գրգռում է տեղական բանւորներին օտարների դէմ՝ յաճախ նրանց մէջ ազգայնական յոռի տրամադրութիւններ առաջ բերելով:

Այս մասին զեկուցանելով՝ ընդհանուր քարտուղարը յայտնում է, որ Արհեստակցական Ինտերնասիոնալը, որ մեծապէս շահագորգուած է ներգաղթի խնդրով, առաջիկայ գարնանը խորհրդաժողով է կայացնելու, ուր այս հարցը եւ պէտք է քննութեան դրել: Մինչև խորհրդաժողովի գումարումը, մտադրութիւն կայ երկու Ինտերնասիոնալների ներկայացուցիչների մասնակցութեամբ վեց-վեց հոդինց մի յանձ-

Նախումբ կազմել նրա ուսումնասիրութեան համար:

Գործադիր Կոմիտէն մտքերի փոխանակութիւն ունենալուց յետո՛յ՝ իր համաձայնութիւնը տւեց յանձնախումբը կազմելու թեկադրութեանը և յանձնարարեց ընկ. ընկ. Կրամպին (Անգլիա) Դը Բրիւքէրին (Քելչիքա) և Դիւանանդին (Լեհաստան) մասնակցել նրա աշխատանքներին:

Վերոյշնայ երբք գլխաւոր խնդիրներից գուրա օրակարգի մէջ նշանակւած էին զանազան երկրների վերաբերեալ մի շարք հարցեր, որոնցից, ժամանակի պարտաւարով, միայն մի երկուսը դրեցին քննութեան: Վերջինների թւին է պատկանում և Քրիպկան Խելիլը, ար Ն.Յ. Դաշնակցութեան միջամտութեամբ դրւած է Ինտերնասիոնալի առաջ և որի մասին հարողջարւած է «Գործադիր այս համարում «Կուսակցական կեանք» բաժնի մէջ:

Վերջին նիստին լսելով համառօտ զեկուցումներ այն ծանր հայածանքների մասին, որոնց ենթարկւած են հունգարական ընկերվարականները Նորտիի կառավարութեան կողմից, իսկ իտալական ընկերվարականները Ֆաշիստների կողմից՝ Գործադիր Կոմիտէն որոշեց հեռագրով բողոքել չուն. զարիարում հաստատւած պատերազմական աստեանների դէմ և իր ինչպիսիքն արտայայտել այն կորովը ընթացքի համար, որ երևան են բերում իտալական ընկերվարականները Ֆաշիստական վարչազորութիւնների հանդէպ: Սրա հետ միասին Գործադիր Կոմիտէն որոշեց 1000 Փոունտ ստերլին տրամադրել իտալական ընկերներին իրենց պայքարի անհրաժեշտ ծախսերը հոգալու համար:

Այս առթիւ Գործադիր Կոմիտէն, իր վեիջին նիստը փակելուց առաջ որոշեց հետեւեալ հեռագիրն ուղարկել Ռելիկայի արտաքին գործերին ախարար ընկ. Վանդերվելդին, որ արհամարհելով դիւանագիտական էտիկէտի բոլոր պահանջները՝ Լոջարեյում մերժեց այցիւթիւնն տալ Մուսոլինիին որպէսզի չսեղմէ այն անարգ ձևը, որ թաթախւած է Մատիոսիի արեան մէջ...

«Ա. Բ. Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէն հաճուցեով տեղակացաւ այն վերաբերմունքի մասին, որ Ռելիկայի ընկերվարական Նախարար ընկ. Վանդերվելդը անձնապէս ցուց է տւել Ֆաշիստական մարդապան կառավարութեան զերազոյն պետին Աչքի առաջ ունենալով այն յարձակումները, որոնք ենթարկւում է ընկ. Վանդերվելդը սրա պատճառով Գործադիր Կոմիտէն միլիոնաւոր աշխատատեղերի անւնից, որոնք միանգամայն համերաշխ են Իտալայի հալածական եղբայրների հետ, իր հաւանութիւնը և վատահոթութիւնն է յայտնում ընկ. Վանդերվելդին:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Երևան, 3 Հոկտեմբեր

Հայաստանում լուսորդանները զբաղւած են ոչ այնքան կուլտուրական գործը կանոնադրելով ու մատալի մատար մակարդակը բարձրացնելով, որքան կուսակցականների տեղաւորելով ու նրանց համար պաշտօններ հայթայթելով:

Ուսուցչութիւնը դրւած է ամենուտեղ հսկողութեան տակ. Ուսուցչի ամեն մի նիւթ պէտք է յարմարեցնէ կուսակցական (կոմունիստական) պահանջներին իսկ եթէ նա մի փոքր շեղուճ կատարէ նրան յանձնարարւած նիւթից, լուսարժիները գաղտնի գրութեամբ յայտնում են զպրոցների վարչչներին, որ նման ուսուցչչներին կոպտեմեա չեն. իրենց աւանդիլք աւարկոսների մէջ, հետեւապէս պէտք է այդ աւարկոսները թողնեն և առեղծն այն աւարկոս, որը աւանձին «թեքում» չի պահանջում: Համաձայնիւղ զէպքում այլգլխիները ոպատ են համարւում իրենց պաշտօնից:

Վերաբերմունքը զէպի ուսուցչութիւնը կատարելապէս չեկայցական է:

Հայոց լեզուի և հասարակութեան աւարկաների գառուանդումը զպրոցներում, սոյն ուսումնական տարւանից սկսելով կենտրոնացնել կուսակցականների ձեռքը և կամայ կամայ հին ուսուչութիւնը հարկադրանքի տակ տեղի է տալիս նորերին, որոնք մանկավարժութեան մասին հասակացողութիւն սեղում չունին: Լուսւարութեան գործի զուխ կազմած են թերուսնի և զինեմպեր (Երևանի լուսարժի վարչչի է Սերգեյ Վարդանեան) որոնք իրենց կամքն են թիպրւում մանկավարժներին: Իրենք ստանում են 200-300 ռուբլի աւանդի, միչդեռ ուսուցչի տալիս են 32ւ.20կւ:

Արհեստակցական միութիւնները զէպք չի եղեք որ պաշտպանեն իրենց անգամները իրաւունքները. Ի՞նչ հրամայում է կուսակցական կենդանական կոմիտէն (Աշոտ Յովհաննիսեանը) որհաստակցական միութիւնները որոնք կամակատարութեան մէջ իրագործում են:

Այս տարի զպրոցներից տրձակեցին մի շարք վարչչներ, փոխ-վարչչներ և ուսուցչչներ, իսկ երբ նրանք զէմիցին Լուսաշիկն արհեստակցական միութեան՝ վերջինս նրանց զաւտասիրանեց որ — Լուսարժիմունքը նպատակայտարար է գտել զպրոցները թարմացնել:

Սոյն ուսումնական տարիին գիւղացիութեան համար էջ շատ անմիթթար ձեւով է սկսել զպրոցներում ընդունել են ա) հերթին կուսակցականների՝ բ) հերթին պրաֆուտիստ անգամները երիտաներին, գիւղ յարհարիների և զանազան կազմակերպութիւնների երիտաներին:

Այս անդրաւթիւնների զէմ բողոքելու ոչ մի տեղ չկայ. պատահական բողոքողներն էլ համարւում են պետութեան թշնամիներ, որոնց սպառնում է Ձեկան, գիւղացիութեան և իտեղիգեցեղայի կողմից շարունակ արտուէջներ են լաւում հանդէպ կառավարութեան և կուսակցութեան, բայց ոչ մի հարաւորութիւն չկայ լսելի դարձնել նրանց խոչ արտուէջները:

Սոյն ուսումնական տարում Երևանի գաւառի զպրոցներ-

բից դուր են Յոսեփ մտաւորապէս 2500 երեխայ, որոնք զարցացական տարիք ունին և մեծ մասը գիւղացիներ են:

Գիւղացիները լցւած կառավարութեան անբաւարարութեան քննարկներով, զայլացած ուսում են իրարու. — Արեմն սն է "ձրի և պարտավոր ուսում". մեզ յետ կը տաննք մեր երկխոսութիւն և կը դարձնենք տաւարարածներ, քանի որ նրանց տառջ պետութիւնը փակում է դպրոցները զուտ:

Վա՛յ այն երկրին, որի վարիչները դիմակաւորած "տոցիախտներ" են: ՏԵՂԵԱԿ

## Թղթակցութիւններ

Ն Ո Ր Կ Ե Ն Ց Ա Ղ

Երևան, 10 Սեպտ.

(Սեփական քարտկոցներ)

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը շարդարացից բոս ժողովրդի եղատակները: Ռուս մեծիկն իր յեղափոխական յորձանքով իր գլխին բերեց նոր բռնակալներ, որոնք այդ միտմտ ժողովրդի ծոցից դուրս եկած՝ գերազանցօրէն տիրապետւած են բռնակալայան բոլոր ձեւերին:

Մի քանի երկար ու ձիջ տարիներ անցան այդ յեղափոխութիւնից, ուր ցարկովի փրտակներով վրա առաջացան նոր ցարեր, որոնք ժամանակին — Հոկտեմբերեան յեղափոխութեան նախորդէին փողաքշտեցով էին վերաբերում այդ միլիտար միտմտ մարդկանց՝ լքիանութեան տիրելու համար: Հոկտեմբերեան յեղափոխութիւնը ուսս ժողովրդի բռնակալներին ոչնչացնելու փոխարէն՝ ստեղծեց նոր բռնակալներ, որոնք այսօր տիրապետող են թէ Ռուսաստանում և թէ Հայաստանում:

Ինչպէս ամէն տեղ և ամէն ժամանակ տիրողներն ունեցել են իրենց ստորադրեալները, որոնք ենթակալ են եղել տիրողի իր քննարկներին, այսօր նոյն է և Հայաստանում: Գամեռնատական կառակցութիւնը ներկայացնում է առանձնաշատակ և առանձնաշատակ մի դաս: Այդ մարդիկ ամէն գործում իրենց իրաւաստ են համարում: Օգտուելով "պրոլետարական դիկտատուրայի", առաջացած արտօնութիւնները, նրանք գործում են անհշտի սանձարձակութիւններ:

Տանք մի քանի փաստեր:

Ռիցեր, արտասահմանում, հետեւում են "Խորհրդ. Հայաստ." թարգմանական թերթին, տեղեկութիւն ունին գոնէ մի առկուսով ("Լրատու", և "Գառական", բաժինների) Հայաստանում կատարուող մարտապահութիւնների, քաղաքների, բռնաշարժումների և սպառնազանգների մասին: Սրանք պատահական երեւոյթներ չեն Հայաստանի այժմեան կեանքում: Ամեն օր կատարուող ընդհանրական իրողութիւններ են մեր կեանքում:

Միայն Երևան քաղաքում՝ հազարներէ է հասնում թիւը այն կանոնի, որոնք այս մի քանի տարիներէ ընթացքում ամուսնացել են եկեղեցիներէ հետ և հետեւը մի առժամանակ տարիւտը յետոյ՝ ջջել են ամուսնական յարկից՝ իրենց ամուսնիկների կողմէ: Այդ կանոնի մեծամասնութիւնը ջջել է յիբ վիճակում: Այգլիսիներէ համար խորհրդային իշխանու-

թիւնը Երևանում հիմնի է մի հաստատութիւն, որ կըշուէ է "Մուր", Այգլից պահուում են տնից դուրս արւած կանոնի այն երեխաները, որոնք մայրը, դժբախտութիւն են ունեցել ամուսնաւորութիւն թռչելիկիկի հետ, որոնց ըմբռնումով «բարժոնական հասկացողութիւն է կնոջ հետ յարեանական կապը»: Իչարիէ, արտնով հարցը չի վերջանում յերեխային "Մուր", յոնձնի չի նշանակում այդ պրտախ մայրերին փրկել: Մայրերի այդ շարանը կանայ թէ ակաւայ ստիպած է յիճում իր մարմինը ծախել և դրանով սարկը: Երևանի Դեմիր Բուլուղ, կըշուց ամբողջ թողանալը այժմ բռնած է նման կանոնով: Երևանը, ուր հրապարակային պտեկութիւնը ստուգող երեսոյթ էր, այժմ՝ բոլեկեան այդ "բարիք" էլ տեսաւ.....

Վիճակը նոյն է և գիւղերում: Այնտեղ կոմսոյիտները նոյն գրութիւն են ստեղծել, ինչ որ քաղաքում իրենց "առու", ընկերները: Նրանք գիւղերում ամուսնակը ձեռքներին մեկնում են գիւղացիների տուր և պղծութիւններ գործում: Երևան քաղաքի վիճակագրութիւնը ցոյց տալի, որ կոմսոյիտների 2300-ը վարակած են սեռական հիւանդութիւններով: Այգլեւով, սեռական տխտերը տարածւած են և գիւղերում:

Պատահել են դէպքեր, որ Երևանի Արտիան փողոցում կուրներ են տեղի ունեցել. հասել և տեսել են որ կանայք են, որ տպտակում են իրենց նոտիկին «ամուսնուն» նրա համար, որ իրենց հետ վարել են անվայել կերպով և յիբ տնից դուրս շղթայի:

Երևանի կեանքից մի օրինակ ևս:

X No x տէրը իր միակ աղջկան՝ ...ին մի քանի անգամ գղոշացնում է՝ գիւղերը դրում երկար ձնալու մասին: Հայրը իր աղջկայ անվայել ընթացքը մատնացոյց անելով՝ պահանջում է, որ իր տոհմի անունը չխալտուակի: Նոյն տան մէջ սպրոց մի լրտեսի կողմից եղելութեան մասին անվայել տեղեկութիւն է արւում «ուր որ անկ է», և յաջորդ օրը ձերբակալում են տան տիրոջ նրա համար, որ իր աղջկանը ուղում է հետո պահել ձեռք կենցաղից»:

Հայաստանի զանազան վայրերում կատարուող թալաններն ու մարդասպանութիւնները զրեթէ բոլոր կատարում են բոլեկիկների ձեռքով: Նման մարդկանց ձերբակալման դէպքում մեծ միկ է թափւում նրանց կուտակական իրերը ծածկելու և կուտակական հանգամանքի պտածառով պատիժը թեթևացնելու:

Բոլեկիկների սանձարձակութիւնները Հայաստանում, իչարիէ այլաբանով չեն վերջանում: Շատ են նրանք, բայց, կարծում ենք, այս էլ որոշ գաղափար կը տայ նրանց կատարած դերի ու մացած «եղր կենցաղի» մասին:

ՄԻՆԵՐԻՆԱԿ

## Ախալալագիներէի դիմումը

(Սեփ. քրթակցութիւն)

Երևան, 11 Սեպտ.

Մրանից մի ամիս առաջ Ախալալագի շրջանի հայկական գիւղերից ճանապարհ էին դրւել վրաց պաշտօնեաներին: Յաջորդ օրը ուղարկել է զօրամաս «հանգստացնելու» հա-

մար, բանտարկել են մի շարք մարդկանց: Գաւառի հայերը կազմում են մի համախոսական և յստակ պառագամաւուների հետ ուղարկում են Հայաստան Ս. Համբարձումեանի մօտ՝ խնդրելու, որ Ախալքալաքի շրջանը միացնեն Հոյաստանին և կամ թէ պարձեն ինչ նովար գաւառ: Համբարձումեանը պատգամաւորներին վերադարձնում է ասելով. «Գնացէջ ու տեղերդ հանգրաւ նստէջ. մեր կուսակցութիւնն ու կառավարութիւնը, անկախ ցանկացողներից, ստեղծում են ինքնավարութիւն, ուր պէտք, և գիտեն թէ որ գաւառը որ Հանրապետութեան մէջ պիտի լինին: Դիմում անելով ոչնչի չէք հասնի. գնացէջ՝ ձեր գործին կեցէք»:

Ախալքալաքցիները չափաւանց գրգռւած են վրաց իշխանութեան և Երևանի վարչիների դէմ: Նրանք իրաւացի կերպով ստում են. ինչու մի փոքրիկ Աջարի կամ Արխալուս, մի իրզնակ Քիւրտիստան կարող են լինին իրենավար, իսկ 70,000 հայութիւն ունեցող Ախալքալաքին մերժում է այդ իրաւունքը: Էլ չենք խօսում այն մասին, որ Ախալքալաքը բնական կողմն է Հայաստանի և միայն հայ բուլեւիկների թիթեանտութիւնը կարող է բացատրել այն ազգազակոչ անարդարութիւնը, որ այդ շրջանը թողնում է Հայաստանից դուրս:

**Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն**

(Սեփ. թղթակցութիւն)

Ն. Ախաւ, 13 Հոկտ.

Անկարող ենք չարձանագրել այն ազգազակոչ փաստերը, որոնք տեղի են ունենում մեր շրջանում՝ շինարարութեան, անւան տակ: Այս թէ «շինարարութեան ասպարէզում», ինչ է արել «բանտար-գիւղացիական, իշխանութիւնը իր գորութեան հինգ տարւայ ընթացքում:

Մինչև այժմ մեր շրջանում «շինել են», մի տասնեակից քիչ անել խրճիթ-ընթացարաններ, թատերասրահներ, Գիւղկօմի շէնքեր, կամուրջներ ու դպրոցներ: Այդ բոլորից միայն վերին Ախտա ու Քալաքարուխ գիւղերի դպրոցական շէնքի պատերի կէտն է կանգնեցած: Միւս բոլորը կամ «ճրագրի մէջ», են, կամ դեռ լոկ հիմքն է ձգւած: Վ. Ախտայի ու Քալաքարուխի շէնքն էլ մտրակի տակ է շինուում:

Այս ինչպէս և կատարւում մեզ մօտ «շինարարութիւնը, Շրջագործկօմի նախագահն ու միլիդիպետը 1—2 միլիցիօնէրներով անցնում է Վ. Ախտա ու Քալաքարուխ, հրաւիրում է հասարակական ժողով և դնում է վարդը շինելու պահանջը: Գիւղացիք տրանջում են իրենց շքարութեան վրա և խնդրում են, որ կառավարութիւնն էլ օգնէ, քայք ի գնոր: Շրջագործկօմի նախագահը պահակներն ուժով սկսում է հաւաքել ցորեն, զարի՛ որից՝ օրից՝ 3, օրից՝ 10 և ձեռնարկում շէնքի կառուցման: Եւ ասա Վ. Ախտայի ու Քալաքարուխի 4 անեակնոց դպրոցի շինութեան համար հաւաքւում է 7862 փութ ցորեն, որ նազարոյն գնով հաւասար է 15724 բուբուռ. իսկ շէնքի պատերի կէտն է միայն կառուցւած: Ժողովուրդը դժգոհում, խռովում, յուզւում է, թէ՛ «եղբայր, պետական տուրք ասում, կոշնալօղ ասում, գլորոց շինելու տամ, կարկառահատութեան տամ, ու-

տուցչի վարձ տամ, դիւղի նախագահի ու իր գրասենեակի ծախք տամ, հողաբաժանուութեան ծախք տամ — որք տամ, ինչ միջոցից տամ»: Իսկ բանտար-գիւղացիական կառավարութիւնը պահանջում հա պահանջում է:

Աչքի առաջ ունենալով Վ. Ախտայի ու Քալաքարուխի փորձը՝ հարեան գիւղացիները կորակնապէս հրաժարւում են որ և է շինարարական աշխատանքից: Այդ պատճառով օր շի անցնում, որ գիւղական նոխագահին չձեքբակուլին ու բնօր չըրին: Վ. Ախտայի մի գիւղացի ժողովի ժամանակ համարձակութիւնն ունեցաւ Շրջկօմի նախագահին ասելու, թէ գիւղացիք անգոր են սեփական միջոցներով շէնքեր կառուցանել և որ անհրաժեշտ է կառավարական օգնութիւն: «Կառավարութիւնը աղքատ է, չի կարող օգնել», պատասխանում է նախագահը: «Այն ժամանակ ինչու թոյլ չէք տալիս, որ արտասահմանի հայրենակիցներ մեզ օգնեն», շարունակում է գիւղացին: Ու Գործկօմի նախագահը, առանց սպասելու, որ գիւղացին խօսքը վերջացնի. հրամայում է ձեքբակուլել ու Ն. Ախտա ուղարկել: Այստեղից էլ տարւում է Երևան. ուր և նայած է բանտում. 7 տարւայ դատաւարութեան, «հակազգազակոչական մտքեր», յայտնելու համար:

ԳԻՒԳԱՅԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ**

58 հազար մահմեականներ ուզում են գաղթել Հայաստանից.— Հայաստանի Ձանդի Բասար կըշւած շրջանի մահմեականութիւնը այլ գիւղերի մահմեականների հետ միասին, թւում 36 հազար հօգի, դիմել են Հայաստանի ժողով և Պարսի խնդրելով, որ թոյլ տրի իրենց թողնել Հայաստանի սահմանները և անցնել Ազրբեջան ու Պարսկաստան: Այս հաւաքական դիմումը մերժել է կառավարութեան կողմից:

Ուսույնիցների պաշտօնագրկութիւնը.— Հայաստանի բոլոր ուսուցչութիւնը 1925—26 ուսումնական տարւայ սկզբին ենթարկւում է գուման Իուրս են մնում գրեթէ բոլոր հին ուսուցիչները, իրենց հնչեցած աշխարհայեցողութեան համար: Դեռ յայտնի չէ պաշտօնազուրկ եղած ուսուցիչների ամրոցը քանակը:

Հայաստանի պետական համալսարանի շրջանաւարտները.— Հայաստանի պետական համալսարանի գիւղատնտեսական և պատմագրական Փաքիթի լիճէնքն այս տարի աւելցին իրենց շրջանավարտները, թւում մօտ 100 հօգի: Երջանավարտ ուսանողներին իրենց մասնագիտութեան համապատասխան պաշտօն չի տրւում աշխարհայեցողութեան շնորհիւ նկատի առնելով:

Նոր դիմումներ համալսարանում.— Համալսարանին 25—26 ուսումնական տարւայ համար դիմումներ են ներկայացրել մօտ 350 ինչգրատու, որոնց մեծամասնութիւնը ցանկանում է մտնել գիւղատնտեսական և բժշկական Փաքիթի լիճէնքը:

ՇՐՄԵՐԻՆ

